



**ՄՏՔԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԴԻՄԱԴՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**



**ՄՏՔԵՐ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԴԻՄԱԴՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ժողովածու առաջին

**ԵՐԵՎԱՆ
2025թ**



*«Անվտանգային քաղաքականության
հետազոտական կենտրոն»
հասարակական կազմակերպություն*

Հեղինակներ

Արեգ Քոչինյան

2022 թվականից մինչ օրս զբաղեցնում է «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահի պաշտոնը:

Արեգ Քոչինյանն ավարտել է Պրահայի Կարլի համալսարանի քաղաքական և տնտեսական հետազոտությունների ամերիկյան ինստիտուտը, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը: Քաղաքագետի և պատմաբանի մասնագիտական կոչումն ստացել է Երևանի պետական համալսարանում: Նախկինում աշխատել է ՀՀ անվտանգության խորհրդում և մի շարք հասարակական կազմակերպություններում ու հիմնադրամներում: Արեգ Քոչինյանը հեղինակ է հարյուրավոր հոդվածների, վերլուծությունների և հետազոտական աշխատանքների: Նա հանդես է գալիս նաև տարբեր հարցազրույցներով և վերլուծական մեկնաբանություններով:

Email: areg.kochinyan@rcsp.am



Ռոբերտ Ղևոնդյան

2022 թվականից աշխատում ԱԲՀԿ-ում՝ որպես փորձագետ, միաժամանակ փորձագիտական գործունեություն ծավալելով ՀՀ բարձրագույն գիտության և կրթության կոմիտեում և ՀՀ պետական կառավարման ակադեմիայում: 2021թ. առ այսօր Երևանի «Գլաձոր» համալսարանում աշխատում է որպես դասախոս: 2000-ականներից նա մասնագիտական գործունեություն է ծավալում նաև մաքսային ոլորտում՝ որպես մաքսային ներկայացուցիչ: Ռոբերտ Ղևոնդյանը հեղինակ է ՀՀ-ում և արտերկրում հրապարակված ավելի քան 30 գիտական հոդվածների, ինչպես նաև մի քանի տասնյակ հրապարակախոսական նյութերի: Նա հանդես է գալիս նաև տարբեր հարցազրույցներով և վերլուծական մեկնաբանություններով: Քաղաքագետի կոչում ստացել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, այնուհետև կրթությունը շարունակել է ՌԴ Դոնի Ռոստովի Հարավ-դաշնային համալսարանում՝ ստանալով քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Email: robert.ghevondyan@rcsp.am



Արմեն Քթոյան

ՀՊՏՀ շրջանավարտ է: 2000թ. ավարտել է համալսարանը՝ տնտեսագետ-մաթեմատիկոս որակավորմամբ: 2003-ին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ: 2004-ից զբաղված է հետազոտական, իսկ 2007-ից՝ նաև դասախոսական աշխատանքով: 2017թ. մայիսից մինչ օրս ՀՊՏՀ վիճակագրության և տվյալագիտության ամբիոնի վարիչն է: 2002թ.-ից «Փասթ Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ է: Ա. Քթոյանի հետազոտական հետաքրքրության շրջանակներն ընդգրկում են տնտեսական և տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի, բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման, սոցիալ-տնտեսական հետազոտություններում մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների կիրառման խնդիրները: Ավելի քան 40 գիտական և հետազոտական աշխատանքների հեղինակ է:

Email: arm.ktoyan@gmail.com



Մանե Ադամյան

«Ադամյան» խորհրդատվական ընկերության հիմնադիր-տնօրենն է: Որպես անկախ խորհրդատու՝ համագործակցել է Եվրոպական հանձնաժողովի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), մի շարք խոշոր միջազգային խորհրդատվական ընկերությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Ավելի վաղ աշխատել է պետական համակարգում՝ զբաղեցնելով ՀՀ փոխվարչապետ Միկեր Գրիգորյանի խորհրդականի և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալի պաշտոնները: Իր պաշտոնավարման ընթացքում Ադամյանը համակարգել է Հայաստանին տրամադրվող զարգացման աջակցությունն ու ֆինանսավորումը, եղել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման մշտադիտարկման միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարը, ինչպես նաև ՀՀ-ԵՄ առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի հայկական կողմի համանախագահը: Մանե Ադամյանը մագիստրոսի 2 աստիճան ունի. առաջինն ստացել է Երևանի պետական համալսարանից՝ եվրոպագիտության ոլորտում, երկրորդը՝ Քեմբրիջի համալսարանից, մասնագիտանալով զարգացման տնտեսագիտության ոլորտում: Քեմբրիջում ուսանելու համար արժանացել է Մեծ Բրիտանիայի կառավարության գերազանցության Չիվինգ կրթաթոշակին: Ադամյանը նաև ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից իրականացվող IVLP և Ֆրանսիայի կառավարության կողմից իրականացվող PIPA առաջնորդության ծրագրերի շրջանավարտ է:

Email: maneadamian@gmail.com



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներ -----	4
Բովանդակություն -----	6
Նախաբան -----	9

Մաս 1-ին. Ռազմաքաղաքական բաղադրիչ

ՀՀ ՁՈւ վերակառուցում -----	11
Ռազմաքաղաքական դաշինքների և հարթակների հետ փոխհարաբերություններ -----	16
Ռազմական տեխնիկայի ձեռքբերման ուղղությունները -----	20
Ռազմաարտադրական հնարավորությունների զարգացում -----	22
Անգլերենը բանակում -----	25
Ահաբեկչական սպառնալիքների դիմագրավում -----	27
Ամփոփում և առաջարկություններ -----	28
Օգտագործված գրականություն -----	30

Մաս 2-րդ. Արտաքին քաղաքական բաղադրիչ

Տարածաշրջանային մակարդակ – Թուրքիա, Իրան, Ադրբեջան, Վրաստան -----	32
Խաղաղության խաչմերուկ -----	37
Ոչ բլոկային քաղաքականություն -----	39
Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ուժային կենտրոններ - Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ, Չինաստան -----	40
Եվրոպա և Եվրամիություն -----	45
Մերձավոր Արևելք և Կենտրոնական Ասիա -----	46
Հնդկաստան -----	48
Ամփոփում և առաջարկություններ -----	50
Օգտագործված գրականություն -----	52

Մաս 3-րդ. Տնտեսական բաղադրիչ

Արտահանման խթանում, դիվերսիֆիկացիա, արժեշղթաներ -----	54
---	----

ՀՀ արտահանման ներուժը -----	56
Արտաքին առևտրի դյուրացում -----	58
Արտաքին առևտրում ՓՄՁ ներգրավվածության խթանում -----	58
Արտահանումային ուղղվածությամբ փոքր ինովացիոն ձեռնարկատիրության խթանում -----	60
Տնտեսական դիվանագիտության ակտիվացում -----	62
Արտահանման ներուժ ունեցող ոլորտներում կլաստերային նախաձեռնությունների աջակցություն -----	62
Նոր շուկաներ մուտքի աջակցություն -----	65
Ներդրումներ -----	66
Նորարականություն, թվայնացում -----	69
Տարածաշրջանային և գլոբալ կոմունիկացիաներ -----	72
Մարդկային կապիտալ -----	76
Ամփոփում և առաջարկություններ -----	78
Օգտագործված գրականություն -----	80
Հավելված -----	82

Մաս 4-րդ. Էներգետիկ բաղադրիչ

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ -----	86
Հարավային գազային միջանցք -----	88
Եզրակացություն -----	92
Էներգիայի աղբյուրներն ու հիմնական սպառումը Հայաստանում -----	95
Հայաստան-Ռուսաստան Էներգետիկ համագործակցություն -----	96
Հայաստան-Իրան Էներգետիկ համագործակցություն -----	97
Տարածաշրջանային նշանակության ընթացիկ ծրագրեր -----	98
Եզրակացություն -----	99
Ամփոփում և առաջարկություններ -----	99
Օգտագործված գրականություն -----	102

ՆԱԽԱԳԻԾԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԴԱՐՁԵԼ ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ



Նախաբան

Ժողովածուն ներկայացնում է Հայաստանի դիմադրունակության բարձրացման ուղղությամբ մեր առաջ քաշած գործնական առաջարկություններն ու դրանց հիմնավորումները: Այն առաջինն է ոչ միայն մեր նախատեսած նմանատիպ ժողովածուների շարքում, այլև եզակի աշխատանք է հայ իրականությունում, ընդհանրապես: Ժողովածուն ընդգրկում է համընդհանուր դիմադրունակության ամրապնդման ռազմաքաղաքական, արտաքին քաղաքական, տնտեսական և էներգետիկ բաղադրիչները: Հետազոտությունը կատարվել է «Անվտանգության քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից և հրավիրյալ փորձագետների մասնակցությամբ: Հաշվի են առնվել օբյեկտիվ գնահատականները, գլոբալ միտումները և տարածաշրջանային իրականությունը: Աշխատանքում փոխկապակցված մարտահրավերների համատեքստում ուսումնասիրվել են այն քաղաքական, տնտեսական և ենթակառուցվածքային չափորոշիչները, որոնք ձևավորում են մեր երկրի դիմադրունակությունը: **Հետազոտության հիմնական նպատակներն են.** մատնանշել հիմնարար և համակցված բարեփոխումների իրականացման առաջնահերթությունները, ռազմավարական և քաղաքական խոչընդոտների հաղթահարման նպատակով ձևավորել հստակ գործառնական ուղեգիծ, առաջարկել իրականացման մեխանիզմներ և ճանապարհային քարտեզներ:

Հետազոտության կառուցվածքը: Ժողովածուն բաժանված է չորս մեծ բաժնի, որոնք արտացոլում են դիմադրունակության չորս առանցքային օղակներ. 1. Ռազմաքաղաքական բաղադրիչ, 2. Արտաքին քաղաքական բաղադրիչ, 3. Տնտեսական բաղադրիչ, 4. Էներգետիկ բաղադրիչ: Յուրաքանչյուր մասում կատարվել է խնդիրների խորքային վերլուծություն, կատարվել են տեղայնացված առաջարկություններ և ռազմավարական պլանավորում՝ տրամադրելով քայլերի նկարագիր:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Օգտագործվել են բազմաթիվ միջազգային և տեղական տվյալների խաչաձևման ու վերլուծության մեթոդներ, իվենթ, կոնտենտ, համեմատական, սցենարային և այլ վերլուծություններ: Օգտագործվել են նաև կոգնիտիվ քարտեզագրման և ռազմավարական վերլուծության մեթոդները:

Նպատակներն ու ակնկալիքները ամրագրող առաջարկությունները մշակվել են ոչ միայն տվյալ բաժնում քննարկվող կոնկրետ ոլորտի շրջանակներում, այլև տնտեսության, կրթության, առողջապահության ու ոլորտային ենթակառուցվածքների անխուսափելի փոխառաջընթացի ապահովման համար:

Ակնկալում ենք, որ այս ժողովածուն ծառայելու է քաղաքական կառավարչական հարթակներում, փորձագիտական հանրությանը և հասարակական-մասնագիտական երկխոսության մեջ՝ արտաբերելով հետևյալ նպատակները.

- ռազմավարական ու դիրքորոշման նոր պատկերացումներ՝ համարժեք համակարգային բարեփոխումներին
- պետական, հասարակական ու մասնավոր ոլորտների միջև նոր համագործակցային պլատֆորմներ
- միասնական, ընդհանուր թիրախների բյուրեղացում և դրանց իրականացման հետևողական աշխատանք:

Այս ժողովածուն կարևոր քայլ է նշված նպատակների իրացման ճանապարհին: Հայաստանի երկարաժամկետ ապահովությունն ու կայուն զարգացումը ապահովելու շուրջ այն գործակցության է հրավիրում հանրային, մասնավոր ու միջազգային գործընկերներին: Հետազոտությունը նաև կոչ է պետական մարմիններին, քաղաքացիական հասարակությանը, մասնավոր հատվածին և միջազգային գործընկերներին՝ համատեղ ստանձնելու Հայաստանի երկարաժամկետ անվտանգային, սոցիալական և տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրերի իրագործման պատասխանատվությունը:

ՄԱՍ 1.

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻԶ

Հեղինակներ՝ Արեգ Քոչինյան, Ռոբերտ Ղևոնդյան

Տարբեր տարածաշրջաններում մղվող պատերազմները պարզորոշ կերպով վկայում են ռազմական ոլորտի շարունակական փոփոխությունների մեծ տեմպերի մասին: Մասնագետներն այսօր խոսում են 6-րդ սերնդի պատերազմների մասին, որոնց հիմնական բնորոշիչն է մարդկային գործոնի նվազեցումը՝ բարձր տեխնոլոգիական լուծումների հաշվին:

44-օրյա պատերազմի ընթացքը և հետագա իրադարձությունների հետևանքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունը ևս չի կարող անմասն մնալ այս համաշխարհային միտումներից: Միայն բանակի վերազինումը և անձնակազմի վերականգնումը չեն կարող ապահովել ռազմական ոլորտի համապատասխանությունն արդիական պահանջներին: Հետևաբար, Հայաստանը կանգնած է ռազմական ոլորտի խորքային բարեփոխումների առջև, որոնց գերակա նպատակը պետք է լինի որակապես բոլորովին այլ, նոր ժամանակի հրամայականներին համահունչ, տեխնոլոգիական ամենաբարձր չափանիշներին համապատասխան և շարունակաբար արդիականացող բանակի ձևավորումը: Այս նպատակի իրացումը ենթադրում է բազմաթիվ ուղղություններով համառ և հետևողական աշխատանք՝ ՉՈՒ ռազմավարական ու մարտավարական պլանների խմբագրումից մինչև ռազմաքաղաքական դաշինքների հետ հարաբերություններ վերանայում, ռազմաարտադրական հնարավորությունների ընդլայնումից մինչև նոր շուկաների ուսումնասիրություն և անձնակազմի որակական հատկանիշների շարունակական բարելավում:

• ՀՀ ՉՈՒ վերակառուցում

ՀՀ ՉՈՒ վերակառուցումը ժամանակի հրամայականն է: 44-օրյա պատերազմը ցույց տվեց, որ խորհրդառուսական տիպի զանգվածային բանակի մոդելը ՀՀ համար ընդունելի չէ: Այս թեզն ապացուցող բազմաթիվ գործոններից են թիկունքի խորության բացակայությունը, ՀՀ ժողովրդագրական լրջագույն խնդիրները, ժամանակակից պատերազմների տրամաբանության փոփոխությունը և այլն:

Թիկունքի խորության խնդիրը աշխարհագրական է: Այս հարցի վերաբերյալ որևէ էական փոփոխություն ակնկալել հնարավոր չէ: Հայաստանի տարածքը ամբողջապես գտնվում է նույնիսկ ոչ հեռահար միջոցների հնարավոր հարվածի հեռավորության վրա, ինչը նշանակում է, որ ՀՕՊ-ը և ՀՀՊ-ն ՀՀ ողջ տարածքում պետք է աշխատեն գմբեթի սկզբունքով: Այս թեզը ապացուցող մեկ այլ կարևոր փաստարկ է օդային պաշտպանության միջոցների կենտրոնացումը ԼՂ շփման գծով, ինչը հիմնականում «բացել» էր երկինքը թիկունքում: Որպես երկարաժամկետ լուծում անհրաժեշտ է դիտարկել ինտեգրված՝ միասնական գմբեթի գաղափարը, որը տարբեր խորության, հեռահարության ու տրամաչափի միաժամանակյա օգտագործմամբ կաշխատի ՀՀ ողջ օդային

տարածքում ու դրա մերձակայքում: Դրա կառավարման ոլորտում անհրաժեշտ է ի սկզբանե աշխատել արհեստական բանականության կիրառմամբ:

Մոբիլ, փոքր և հարաբերականորեն ազատ՝ ինքնակառավարվող ստորաբաժանումները կարող են փոխարինել դանդաղաշարժ, մեծ տարածությունների ընդգրկող և բազմաստիճան կառավարման համակարգ ունեցողներին: Հայաստանի պարագայում «մեծ» ստորաբաժանումները (բանակային կորպուս) կիրառելի չեն: Անհրաժեշտ է վերանայել նաև «մասսայական» հետևակային ուժի կիրառման մոտեցումները, որոնք ի սկզբանե կիրառելի չէին մեր դեպքում:



Լուսանկարը՝ Նոյյան Տապանի

Հիբրիդային գործողությունների տրամաբանությունն անհրաժեշտ է խորությամբ ուսումնասիրել, առաջին հերթին, դրանց հակազդելու նպատակով: 44-օրյա պատերազմն, օրինակ, ցույց տվեց, որ հայկական բանակը բացարձակ անպաշտպան էր հայերեն լեզվին տիրապետող թշնամուն տարբերակելու հարցում: Անհրաժեշտ է մշակել նման բաղադրիչների դեմ պայքարի միջոցներ և դրանք կիրառելու համար պատրաստել անձնակազմ: Սակայն, բացի

հակազդեցությունը, անհրաժեշտ է նաև հիբրիդային պատերազմներ նախաձեռնելու և վարելու հմտություններ զարգացնել:

Հայաստանի դեպքում, աշխարհագրական գործոններով պայմանավորված խնդիրների հասցեագրման և կառավարման լավագույն միջոցը բանակի կառավարման հիերարխիկ և ցանցային միջոցների համադրումն է, որի իրագործումը ենթադրում է իրականացնել առաջին հայացքից իրար հակասող նշված երկու գործընթացները: Մասնավորապես.

1. Ներքին օդակների ղեկավարներին ինքնակառավարման որոշակի հմտությունների շարունակական ուսանում և ղեկավարման գործիքների պատվիրակում՝ հնարավորինս լայն ազատության աստիճանով (ընդհուպ՝ գումարտակներ, վաշտեր, դասակներ, ջոկեր):

2. Հիբրիդային գործիքների խոր ուսումնասիրություն, դրանց հնարավորությունների դիտարկում, ընդհանուր կառավարման համակարգում հիբրիդային միավորների տեղի ու գործառնությունների հստակեցում, անհրաժեշտ պահին՝ դրանց գործողությունների ներդաշնակեցման համակարգի ձևավորում:

Այս երկու գործընթացներն, իրականում, փոխլրացնող են և փոխհարստացնող: Ներքին օդակների ինքնակառավարման հմտությունները ենթադրում են միջնաժամկետ հեռանկարում հիբրիդային նոր հնարավորությունների ձևավորում: Օրինակ, մասնագիտական որոշակի գիտելիքներ ունեցողները զորացրվելուց հետո կարող են համալրել հիբրիդային գործընթացներում կիրառելի կազմակերպությունների շարքերը կամ, նույնիսկ, ստեղծել նման կազմակերպություններ: Մասնավորապես, կարող են լինել պայմանագրային հիմունքներով գործող մասնավոր կազմակերպություններ, որոնք կգրադվեն ռազմական տեխնոլոգիաների և հմտությունների հետագա զարգացման խորհրդատվությամբ և մարզումով՝ հիբրիդային գործընթացների հակազդման ու նախաձեռնման համակարգող պետական մարմնի ներքո: Մյուս կողմից, նույն այդ կազմակերպություններն իրենք կարող են դարբնոց լինել ինքնակառավարման բարձր որակական հատկանիշներ ունեցող կադրերի պատրաստման համար: Հարկավոր է, սակայն, նշել, որ սա կիրառելի է առնվազն 5 տարի ծառայություն անցած զինվորականների դեպքում: Այս առումով, պրոֆեսիոնալ զինծառայության շարքերի համալրումը, ծառայության գրավչության ավելացումն այլընտրանք չունեն:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանն ընդունել է «Համապարփակ պաշտպանության և անվտանգության մասին» հայեցակարգը, որն իր հերթին ենթադրում է հիբրիդային գործընթացներից պաշտպանություն, անվտանգային համակարգում այդ գործընթացների ներառում և կիրառություն: Գլոբալ առումով, համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգը ենթադրում է եռաքայլ անվտանգային միջավայրի ձևավորում՝ կրթություն-վարժանք-կառավարում: Այս քայլերից ամեն մեկը հարաբերականորեն ինքնաբավ ոլորտ է, որի իրականացումը ենթադրում է նպատակադրումից և կարիքների գնահատումից մինչև արդյունքների ամփոփումն ընդգրկող համալիր գործընթացներ:

ԶՈւ բարեփոխումների անհրաժեշտությունն արձանագրող հաջորդ խնդիրը ՀՀ ժողովրդագրական աղետալի պատկերն է: Թեև վերջին 2-3 տարում բնակչության թվաքանակի որոշակի աճ կա, սակայն մեկ այլ գերակա խնդիր՝ բնակչության բաշխվածությունն այնքան խնդրահարույց է, որ կարելի է գնահատել որպես գոյութենական մարտահրավեր: ՀՀ բնակչությունը գերկենտրոնացված է հիմնականում մայրաքաղաքում և հարակից շրջաններում, իսկ սահմանամերձ

հատվածները սակավամարդ են: Հատկապես թերթնակեցված են առանցքային նշանակության երկու մարզերը՝ Գեղարքունիքը և Սյունիքը: Ժողովրդագրական խնդիրներն ուղղակի ազդեցություն ունեն ՉՈՒ թվաքանակի և այլ ցուցանիշների վրա: Նման պայմաններում խնդրահարույց է ՀՀ իշխանությունների նախաձեռնությունը՝ ձևավորել տարածքային պաշտպանության ուժեր: Սահմանամերձ շրջաններում բնակչության անհամաչափությունը էական նշանակություն կարող է ունենալ թշնամու առաջին իսկ հարվածից հետո ճեղքերի առաջացման հարցում: Իսկ տարածքային պաշտպանության ուժերն առանց համալրման չեն կարողանա դիմագրավել անգամ փոքր հարվածներին: Դրանք պետության համար բերում են նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ֆինանսական ռեսուրսների գերծախսը (օրինակ, պայմանագրային զինծառայողների թվաքանակի ավելացման պատճառով), այլ ոլորտներում մեծ ներուժ ունեցող որակյալ կադրերի՝ ծառայությունից ազատելու հնարավորություններից զրկումը (որպես հետևանք՝ այդ կադրերի ներուժի կորուստը) և այլն: Ժողովրդագրական խնդիրների հետ մեկտեղ, Հայաստանում տարածված է նաև զինվորական ծառայությունից խուսափելու տարբեր ձևերի օգտագործումը: Օրինակ, 2018-24թթ. ՀՀ քաղաքացիությունից հրաժարվել է արական սեռի 11830 քաղաքացի, որոնք, բնականաբար, այդպիսով խուսափել են պարտադիր զինվորական ծառայությունից:

ՀՀ ՉՈՒ պատասխանատուների գործառնությունների շրջանակում է երկրի ժողովրդագրական խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին մասնակցելը և առաջարկներ ներկայացնելը: 2024թ. հոկտեմբերին Հայաստանում հաստատվեց ժողովրդագրության 2024-2040թթ. ռազմավարությունը: Չնայած ընդհանուր դրական միտումներին՝ մի շարք հարցեր հպանցիկ են ներկայացված ռազմավարության մեջ: Մասնավորապես, տարածքային զարգացման և ներքին միգրացիայի հարցերի վերաբերյալ ընդհանուր մոտեցումները չեն համապատասխանում առկա մարտահրավերներին: Իսկ ժողովրդագրության և պետության պաշտպանության համակարգերի փոխկապվածության, այս ուղղությամբ գործողությունների համակարգման վերաբերյալ տեղեկություններն ընդհանրապես բացակայում են: Ներգրավվող պետական կառույցների շարքում միակ հիշատակվող պաշտպանության նախարարությունն է: Ռազմավարության մեջ կարևորագույն սկզբունք է դինամիկ լինելը, ինչը հույս է տալիս, որ ժամանակի ընթացքում կլինեն առարկայական փոփոխություններ: Այս առումով հարկ է նշել, որ ֆոկլուս խմբերի մակարդակում արված նախնական հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանից արտագաղթելու՝ հաճախ հանդիպող պատճառներից մեկը արական սեռի երեխաներին ՀՀ ՉՈՒ-ում պարտադիր ժամկետային զինծառայությունից ազատելու մտադրությունն է: Այս առումով հարկավոր է, մի կողմից, երկարաժամկետ ռազմավարական հաղորդակցության պլանի մշակում՝ ուղղված ծառայության հեղինակության բարձրացմանը և դրա ապահովության մատուցմանը, մյուս կողմից՝ գործնական քայլեր ծառայությունն ավելի դյուրին դարձնելու ուղղությամբ: Որպես լուծման լուրջ մոդել կարելի է դիտարկել պարտադիր ժամկետային զինծառայությունը մեկ տարի սահմանելը:

Սահմանամերձ շրջանների վերաբնակեցման խնդիրն անհրաժեշտ է ներառել ժողովրդագրության ռազմավարության առաջնահերթությունների շարքում: Այդ նպատակով անհրաժեշտ է նաև քննարկել և հաստատել սահմանամերձ շրջանների զարգացման համալիր ծրագիր, որը տնտեսվարողների համար, հարկային ու մաքսային արտոնություններին զուգահեռ, կնախատեսի նաև կյանքի նվազագույն պայմանների ապահովման պետական ծրագրի իրականացում, հանգստի ու զվարճանքի գոտիների կառուցման տեղեղերների հայտարարում,

պետական կենտրոնական ապարատի որոշ մարմինների տեղափոխում սահմանամերձ շրջանների կենտրոններ՝ սպասարկող անձնակազմին այդ շրջաններից հավաքագրելու հնարավորություն տալով և այլն:

Ժողովրդագրական վիճակը կարևոր, սակայն միակ խնդիրը չէ, որը պատերազմական իրավիճակին պատրաստ լինելու հարցում ՀՀ առաջնահերթություններից է: Պատերազմի տրամաբանության փոփոխությունը դրսևորվում է նաև հարձակում-պաշտպանություն կատեգորիաների կերպափոխումներում: Համաձայն նախկին պատկերացումների՝ պաշտպանվող կողմին հարձակումը չեզոքացնելու համար բավարար էր ունենալ մոտ 3 անգամ սակավ հնարավորություններ: Համապատասխանաբար, հարձակվողը հաղթելու համար պետք է ճիշտ այդքան գերակայություն ունենար: Ժամանակակից պայմաններում, սակայն, անօդային թռչող սարքերի և հիբրիդային պատերազմների պատճառով այս համամասնությունը փոխվել է: Ընդհակառակը, էժան հարձակողական միջոցները պահանջում են անհամեմատ ավելի թանկ պաշտպանական միջոցների ձեռքբերում: Մասնավորապես, հակաօդային պաշտպանության համակարգերը ոչ միայն զգալիորեն թանկ են ԱԹՄ-երից, այլև ակնհայտ արդյունավետության խնդիրներ ունեն: Որոշ հաշվարկներով, գոնե 80 տոկոսով ապահովվելու համար այսօր պաշտպանվող կողմին պետք են 5 անգամ ավելի շատ զենիթային հրթիռ, քան հարձակվողին՝ ԱԹՄ և կեղծ ԱԹՄ: Փաստորեն, պատերազմի տրամաբանությունը արմատապես փոխվել է. հարձակվողն առավելություն ունի պաշտպանվողի նկատմամբ:

Բանակի բարեփոխումներն այս նոր տրամաբանության համաձայն կատարելու խնդիրը առարկայական է Հայաստանի համար: Անհրաժեշտ է ոչ միայն ամրապնդել և զարգացնել պաշտպանական համակարգերը, այլև հնարավորություններ ստեղծել հարձակողական պատերազմ վարելու համար, քանի որ վերաիմաստավորվել է «լավագույն պաշտպանությունը հարձակումն է» կանոնը: Այս նպատակի իրականացումը ենթադրում է էժան հարձակողական միջոցների կուտակում՝ անհրաժեշտ պահին նախահարձակ լինելու միջոցով հակառակորդին զսպելու համար: Ակներևաբար, այս հարցում Հայաստանը չի կարող միայնակ զարգացում ապահովել, և անհրաժեշտ է միջազգային գործընկերների օգնությունը: Սակայն նախկին դաշնակից Ռուսաստանը չի կարող լինել բարեփոխման աջակիցների շարքում, քանի որ հենց ինքն է կանգնած նույն խնդրի առջև: Ռուսական ռազմական արդյունաբերությունն, ինքը, տեխնոլոգիական հեղափոխական փոփոխությունների կարիք ունի: Ռուս-ուկրաինական պատերազմը հստակ ցույց տվեց ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունների առավելությունը, ինչի արդյունքը ռուսական ռազմական մեքենայի լրջագույն խնդիրներն են:

Հայաստանի պաշտպանության նախարարությունն ԱՄՆ-ից և միջազգային այլ գործընկերներից ստացել և ստանում է խորհրդատվական աջակցություն, որը կարող է կրել կարճաժամկետ կամ երկարաժամկետ բնույթ: ՀՀ ՊՆ-ում այս նպատակի համար աշխատում է ԱՄՆ բանակի ներկայացուցիչ, ով ունի խորհրդատվական գործառնություններ: Ռազմական ոլորտի տարբեր մակարդակներում սերտ փոխհարաբերություններ են հաստատվել նաև Ֆրանսիայի, Հունաստանի և մի շարք այլ պետությունների հետ: Սակայն, մեր ընկալմամբ, նույնիսկ տասնյակ մասնագետները բավարար չեն: Համակարգված աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է տարբեր մասնագիտական ուղղություններով և մակարդակներով ներգրավել հարյուրավոր մասնագետներ՝ խորհրդականներ, մարզիչներ, հրահանգիչներ: Այս հարցում կարող են օգտակար լինել

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և բալկանյան երկրների ներկայացուցիչները, քանի որ այդ երկրները վերջին տասնամյակներում անցել են բանակի վերափոխման գործընթացներ:

Սակայն ռազմական ոլորտում բարեփոխումների աշխարհագրությունը հարկ է ընդլայնել՝ դիտարկելով, մասնավորապես, Չինաստանի գիտական նվաճումները: Չինաստանն առաջին պետությունն է, որտեղ մշակվել և գիտականորեն ուսումնասիրվել է «հիբրիդային պատերազմի» նախատիպ հանդիսացող «անկանոն պատերազմների» ռազմավարությունը: Սա հնարավորություն կտա ոչ միայն առավել խորությամբ հասկանալ, ընդունել և կիրառել ժամանակակից պատերազմների տրամաբանությունը, այլև այլընտրանքային կարողություններ զարգացնել՝ սպագայի պատերազմներին պատրաստվելու նկատառումներով:

• Ռազմաքաղաքական դաշինքների և հարթակների հետ փոխհարաբերություններ

Ռազմաքաղաքական հիմնական դաշինքը, որի մաս է Հայաստանը, բաղկացած է պետություններից, որոնք, լավագույն դեպքում, հետաքրքրված չեն ՀՀ շահերով: Խոսքը ՀԱՊԿ կառույցի մասին է, որի անդամներն են, Հայաստանից բացի, ՌԴ-ն, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը:



Լուսանկադր՝ Shant News-ի

2022թ. նոյեմբերից Հայաստանը փաստացի կասեցրել է ՀԱՊԿ-ում իր գործունեությունը: Սա ներառում է ՀԱՊԿ բոլոր միջոցառումներին մասնակցությունից ձեռնպահ մնալը, ՀԱՊԿ-ում ՀՀ ներկայացուցչի ետկանչը, ՀԱՊԿ կառավարման գործընթացում մասնակցությունից և անդամավճար վճարելուց հրաժարվելը և այլն: Հարկ է ընդգծել, որ ՀԱՊԿ բյուջեով նախատեսված գումարների վճարման պարտավորությունները բաշխվում են անհամաչափորեն՝ 50 տոկոսը վճարում է միայն Ռուսաստանը, մնացած 50 տոկոսի վճարման պարտավորությունը բաշխվում է 5

պետության միջև: Ստացվում է՝ 2024թ. ՀՀ վճարումից հրաժարվելու հետևանքով ՀԱՊԿ բյուջեն 10 տոկոս դեֆիցիտ է ունեցել:

ՀՀ կառավարությունն իր վարքագիծը բացատրում է ոչ միայն ՀԱՊԿ կողմից ՀՀ նկատմամբ իր պարտականությունները չկատարելու փաստով, այլև ՀՀ սահմանները փաստացի չճանաչելու իրողությամբ: Հարցն այն է, որ 2022թ. սեպտեմբերի 13-14-ին, երբ Ադրբեյջանը հրետակոծում էր ՀՀ սահմանամերձ քաղաքները, ՀԱՊԿ անդամ պետությունների կողմից դրա արձագանքը չէր համապատասխանում ՀՀ սպասումներին:

Մեկ այլ ռազմաքաղաքական դաշինքի՝ ՆԱՏՕ-ի հետ ՀՀ փոխհարաբերությունները ի սկզբանե ունեցել են գործընկերային բնույթ:

Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները սկզբնավորվել են 1992 թվականին, երբ Հայաստանը դարձավ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի (NACC) անդամ: ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի փոխհարաբերությունները խարսխված են «Գործընկերություն հանուն խաղաղության» (PFP) ծրագրի վրա, որին Հայաստանը միացել է 1994 թվականին: Բացի այդ, իրականացվում է ներգրավման ավելի բարձր աստիճան ապահովող փոխգործակցություն Եվրաստլանտյան գործընկերության խորհրդի (EAPC) շրջանակներում, որին ՀՀ-ն անդամակցում է 1997 թվականից: 2002 թվականից Հայաստանը մասնակցում է «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի պլանավորման և վերանայման գործընթացին (PARP):

2004 թվականից Հայաստանն իր մասնակցությունն է բերում Կոսովոյում (2004թ.) և Աֆղանստանում (2010թ.) ՆԱՏՕ-ի ղեկավարած խաղաղության հաստատման գործողություններին: 2021թ. օգոստոս-սեպտեմբերին Աֆղանստանում ՆԱՏՕ-ի «Հաստատական աջակցություն» առաքելության ավարտի կապակցությամբ ՀՀ խաղաղապահ զորախումբը վերադարձել է Հայաստան:

2006 թվականից Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև գործընկերային հարաբերությունները և տարբեր բնագավառներում համագործակցությունը զարգանում են Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում: Այս ծրագրի իրականացումն օժանդակում է Հայաստանին իր պաշտպանական և անվտանգության համակարգերը բարեփոխելու, ՆԱՏՕ-ի հետ պաշտպանական և անվտանգության ոլորտներում փոխգործակցության ունակությունը բարձրացնելու գործում: Համագործակցության կարևոր խնդիրներից է նաև ՀՀ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործիքակազմի արդյունավետ կիրառման ապահովումը: 2017թ. ապրիլին ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհրդի և Հայաստանի կողմից հաստատվել է 5-րդ՝ Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2017-19թթ. փաստաթուղթը:

Խորհրդարանական դիվանագիտության ոլորտում ՆԱՏՕ-ի հետ փոխգործակցությունն իրականացվում է ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության՝ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջաններին, ինչպես նաև վեհաժողովի շրջանակներում կազմակերպվող Ռոզ-Ռոջ սեմինարներին պարբերական մասնակցությամբ:

Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը զարգանում է նաև ՆԱՏՕ-ի «Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության» ծրագրի շրջանակներում, որը ՆԱՏՕ-ի գործընկեր երկրներին հնարավորություն է տալիս համատեղ ծրագրեր իրականացնել մի շարք ոլորտներում:

Թեև Հայաստանը պաշտոնապես երբեք չի հայտարարել ՆԱՏՕ-ին անդամակցելու մտադրության մասին, սակայն Հայաստան-ՆԱՏՕ փոխհարաբերությունները կայուն զարգացման

միտում են դրսևորում: Հատկապես 2022թ. սեպտեմբերյան իրադարձություններից հետո, երբ պարզ դարձավ, որ ՀԱՊԿ ռազմաքաղաքական բլոկը ՀՀ անվտանգային իրավիճակի կառավարման տրամաբանությունում չի աշխատում, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության միջոցով ՀՀ ՉՈՒ զարգացումը դարձավ հրամայական: 2023-24թթ. նկատվել է ՀՀ-ՆԱՏՕ փոխհարաբերությունների նկատելի աշխուժություն:



Լուսանկարը՝ Eurasianet-ի

Բացի ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունից՝ Հայաստանը որոշ փորձեր է կատարում այլ համագործակցային հարթակներում ևս փոխհարաբերություններ հաստատելու համար:

Առաջին հերթին դա Հայաստան-Հունաստան-Կիպրոս համագործակցությունն է: Մասնավորապես, 2022թ. մայիսի 10-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում անցկացվել են պաշտպանության բնագավառում Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ համագործակցության պլանավորման խորհրդակցություններ: Ստորագրվել են 2022թ. Հայաստանի և Հունաստանի միջև երկկողմ ռազմական համագործակցության ծրագիրը և Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ ռազմական համագործակցության գործողությունների պլանը: Ստորագրված փաստաթղթերով նախատեսվել են, իսկ հետագայում՝ իրականացվել մի քանի

տասնյակ միջոցառումներ Հայաստանում, Հունաստանում և Կիպրոսում, որոնք ներառում են մարտական պատրաստության միջոցառումներ հատուկ նշանակության ուժերի, խաղաղապահության, ռազմական բժշկության, ինժեներական և այլ ոլորտներում փորձի փոխանակում տարբեր մասնագիտական ուղղություններով, տեղեկատվության փոխանակում և ռազմական խորհրդակցություններ: Հաջորդ եռակողմ հանդիպումը տեղի է ունեցել Կիպրոսում՝ 2023թ. հուլիսի 5-ին: Քննարկումների արդյունքում ստորագրվել է եռակողմ ռազմական համագործակցության տարեկան ծրագիրը, որն ընդգրկում է մի շարք միջոցառումներ Հայաստանում, Հունաստանում և Կիպրոսում: Իսկ նույն թվականի դեկտեմբերի 18-ին կողմերը կրկին հավաքվել են Երևանում և հաստատել 2024թ. գործողությունների ծրագիրը: Ինչպես տեսնում ենք, 2022թ.-ից սկսած՝ ռազմաքաղաքական տարբեր հարթակների հետ փոխհարաբերություններում Հայաստանը մեծ ակտիվություն է դրսևորում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է աշխատանքներին հաղորդել համակարգային բնույթ: Սա ենթադրում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումներ, որոնք հնարավորություն կտան ՀՀ-ռազմաքաղաքական հարթակներ համագործակցությունը դարձնել առավել արդյունավետ: Նման համագործակցային հարթակների ուրվագծերը տևական ժամանակ է՝ կանխատեսվում են: Մակայն կարևոր է ակտիվ աշխատել և զարգացնել հատկապես Հայաստան-Ֆրանսիա-Հնդկաստան, Հայաստան-Ֆրանսիա-Հունաստան-Հնդկաստան և նմանատիպ այլ բազմակողմանի ուղղությունները: Թեև ժամանակ առ ժամանակ այս պետությունների հետ առանձին գործողություններ տեղի են ունենում, սակայն բազմակողմանիության համակարգված պահպանումը զգալի ազդեցություն կունենա Հայաստանի դիմադրունակության բարձրացման անընդհատությունն ապահովելու գործում: Խոսքը ոչ միայն պարբերաբար հանդիպումների և խորհրդատվական աշխատանքների մասին է, այլև շտաբային և դաշտային համատեղ գորավարժությունների պլանավորման ու կազմակերպման: Հարկ է նկատել, որ մյուս կողմերից ևս նման հետաքրքրություն կա: Մասնավորապես, 2024թ. մարտ ամսին Հայաստան այցի ընթացքում Հունաստանի պաշտպանության նախարարն է խոսել այդ մասին:

Մեկ այլ նման ձևաչափ է հայ-ամերիկյան գորավարժությունների անցկացումը: Թեև մինչ այժմ այդ գորավարժություններում շեշտը դրվել է խաղաղապահ գործառնությունների զարգացման վրա, անհրաժեշտ է ամերիկյան կողմի հետ համաձայնություններ ձեռք բերել նաև մարտական պայմաններին նմանեցված գորավարժությունների անցկացման և այդ ուղղությամբ ամերիկյան փորձի ներգրավման վերաբերյալ:

Ընդ որում, նշված հարթակների և ռազմական դաշինքների հետ հարաբերությունները չպետք է ենթադրեն մյուս ուղղությունների բացառում: ՀԱՊԿ-ից Հայաստանի դեինտեգրացիայի քաղաքականության շարունակականությունը պետք է ուղեկցվի «ոչ բլոկային» տրամաբանության զարգացմամբ, ինչը կնշանակի համագործակցություն բոլոր ուղղություններով՝ առանց ամբողջական ինտեգրման և անդամակցության:

Մեր կարծիքով, այս տրամաբանությունն անհրաժեշտ է ամրագրել նաև ազգային անվտանգության նոր ռազմավարությունում և ՀՀ ՉՈՒ արդիականացման համապարփակ ռազմավարությունում, որոնք դեռևս մշակման և հաստատման կարիք ունեն: Դրանք պետք է ներառեն նաև ՀՀ պատկերացումները՝ տարբեր զարգացումների դեպքում ռազմաքաղաքական

տարբեր դաշինքների հետ փոխհարաբերությունների ձևատեսակների և դրանց զարգացումների վերաբերյալ:

- **Ռազմական տեխնիկայի ձեռքբերման ուղղությունները**

Ռազմական տեխնիկայի ձեռքբերման հնդկական և ֆրանսիական ուղղությունները բավարար չեն ՀՀ բանակի առաջիկա կարիքների բավարարման համար: Բայց հարկ է նշել, որ այս ուղղություններով աշխատանքները ևս աճի և հետագա ընդլայնման մեծ ներուժ ունեն:

15 ամսվա ընթացքում Ֆրանսիայի կողմից Հայաստանին մատակարարվող 36 «Սեզար» հաուրիցները առաջին հերթին հոգեբանական մեծ նշանակություն ունեն: Սակայն Ֆրանսիայի կողմից Հայաստանին նման որակի գենք մատակարարելու իրողությունը պետք է փորձել վերածել ոչ թե հայ-ֆրանսիական ռազմական համագործակցության զագաթնակետի, այլ հայ-եվրոպական ռազմական համագործակցության հիմքի: Այլ խոսքով, քանի որ Ֆրանսիան բացեց Հայաստանին տեխնոլոգիական ժամանակակից չափանիշներին համապատասխան ռազմական տեխնիկայի մատակարարման ճանապարհը, անհրաժեշտ է օգտագործել այդ իրողությունը Եվրամիության մաս կազմող և ռազմական արտադրության ոլորտում տեխնոլոգիական բարձր չափանիշներին համապատասխանող պետությունների հետ՝ նրանցից անհրաժեշտ գենք և տեխնոլոգիաներ ձեռք բերելու բանակցությունների ընթացքում:

Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում ՀՀ գենքի ձեռքբերման գլխավոր ուղղությունը Հնդկաստանն է: 2025թ. տվյալներով՝ Հայաստանը դարձել է հնդկական գենքի ամենախոշոր պատվիրատուն աշխարհում՝ 1.5 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ պայմանագրեր կնքելով: Այս գումարը ներառում է և՛ «Դինակա» համազարկային կրակի ռեակտիվ համակարգերը, որոնք հնդկական բանակից դուրս առաջին անգամ տեղակայվել են Հայաստանում, և՛ «Ակաշ» գենիթային հրթիռները, և «Կոնկուրա» հակատանկային հրթիռային համակարգերն ու 80 մմ ականանետերը: Համառ խոսակցություններ են գնում նաև Հայաստանի ունեցած CY-30 կործանիչների՝ Հնդկաստանում արդիականացման և դրանց հետ կիրառելի «բրահմոս» հրթիռների տրամադրման վերաբերյալ:

Նոր ուղղություններից ռազմական տեխնիկայի ձեռքբերման առաջիկա գլխավոր ակնկալիքը հարավկորեական K2 տանկերն են: Ըստ ռազմական փորձագետների՝ 1976թ.-ից արդիականացվող ամերիկյան M48 Patton տանկերի հիման վրա 1987թ. Հվ. Կորեան արտադրում է K1-88 տանկը: 2022թ., K1 տանկերի զարգացման արդյունքում արտադրվեց K2 «Սև հովազ» տանկը, որը դարձավ աշխարհի ամենապաշտպանված և ֆունկցիոնալ տանկերից մեկը: Այս տանկի պատրաստման տեխնոլոգիաները ևս դարձան խիստ պահանջված: Օրինակ, կորեացիները հրափողի քրոմապատման սեփական տեխնոլոգիան են ստեղծել, որի միջոցով դարձել են աշխարհում եզակիներից մեկը:

K2 «Սև հովազ» տանկերն իրենց փայլուն են դրսևորել բոլոր զորավարժություններում: Բոլոր ռազմական մասնագետները դրական են արտահայտվել, չկան նույնիսկ չեզոք կարծիքներ:

Այս տանկերի ձեռքբերումը կարող է նախանշել Հայաստանի ռազմական համագործակցության նոր ուղղությունները: Հատկապես հետաքրքրական է, որ տեխնոլոգիական առումով զուգահեռներ են անցկացվում թուրքական արտադրության հետ: 44-օրյա պատերազմից հետո շատերը խոսում էին այն մասին, որ թուրքական արտադրության ռազմական տեխնիկան

հաղթանակ է տարել ռուսական համանման արտադրանքի նկատմամբ: Իհարկե, Թուրքիայից ռազմական տեխնիկա ձեռք բերելու՝ Հայաստանի հնարավորությունները չնչին են, սակայն տվյալ դեպքում համանման արտադրանքի ձեռքբերումը հույս կտա, որ կարելի է այլ ուղղություններով ևս, լավ աշխատանքի դեպքում, համանման այլ տեխնիկա ձեռք բերել: Խոսքն առաջին հերթին գնում է անօդաչու թռչող սարքերի՝ «Բայրաքթարների» կամ դրանց համարժեքների մասին, որոնք 44-օրյա պատերազմի ընթացքում իրենց լավագույն կողմերով դրսևորեցին ադրբեջանական ՁՈՒ կազմում:

Ռազմական տեխնիկայի ձեռքբերման ուղղությունների շուտափույթ և կանխատեսելի զարգացման անհրաժեշտությունը գուցա հեռվում է նաև համապարփակ կառավարման շրջանակներում, սահմանային պաշտպանության համակարգի վերափոխման՝ արդեն սկսված գործընթացի հետ: Սահմանային ամրաշինական աշխատանքների արդյունքում ձևավորվում են ենթակառուցվածքներ, որոնց ճկունությունը և կիրառելիությունն, ընդհանրապես, պետք է հաշվարկել՝ ըստ կանխատեսվող զինատեսակների ձեռքբերման: Այլ խոսքով, ռազմական տեխնիկա ձեռք բերելու ուղղությամբ անհրաժեշտ է թիրախային աշխատանք, որի տեղաշարժի հնարավորությունները ՀՀ սահմանին պետք է հաշվարկել հիմա, ու ամրաշինական աշխատանքներն, այսօր արդեն, այդ հաշվարկների հիման վրա կատարել: Կարևոր նշանակություն ունի նաև անձնակազմի պատրաստումը:



Լուսանկարը՝ Armenia Discovery-ի

Հասկանալի է, որ ռազմական տեխնիկայի ձեռքբերումը ենթադրում է նաև դրա կիրառման հմտություններին տիրապետող զինծառայողների պատրաստում: Այս գործընթացը ժամանակատար և ծախսատար է: Դրանում կարող ենք համոզվել՝ ուսումնասիրելով ռուս-ուկրաինական պատերազմում ուկրաինացի օդաչուների՝ F16 ինքնաթիռներին տիրապետելու ուսումնական բարդ և խնդրահարույց գործընթացը: Հետևաբար, այսօր արդեն անհրաժեշտ է

թիրախավորել ռազմական տեխնիկայի ձեռքբերման ուղղությունները և, ըստ այդ նպատակների, պատրաստել վաղվա բանակի մասնագետներին:

Բացի ձեռքբերումը և կիրառման հմտությունները, մեծ նշանակություն ունի նաև ՀՀ բանակում արդեն առկա և նոր ձեռքբերվող ռազմական տեխնիկայի ներդաշնակեցումը: Տարիներ շարունակ կապված լինելով միայն մեկ շուկայի՝ ռուսական ռազմական տեխնիկայի հետ, ներկայումս այլ շուկաներից ձեռք բերվող տեխնիկայի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է ճշգրիտ հաշվարկել համատեղ կիրառման հնարավորությունները: Խնդրահարույց է ձեռքբերվող նոր տեխնիկայի տեսականու և ծավալների սրընթաց աճը, որի հետևանքով կարող է լինել իրավիճակ, երբ արդեն առկա ռազմական հնարավորությունները կիրառելու խնդիրներ առաջանան: Նման օրինակ եղել է 44-օրյա պատերազմի ընթացքում՝ CV-30 ինքնաթիռների հետ: Դրանք միակն էին, որ կարող էին օդում դիմակայել ադրբեջանա-թուրքական F-12 ինքնաթիռներին, սակայն, տարբեր պատճառներով, Հայաստանն ի վիճակի չեղավ դրանք կիրառել: Ամփոփելով՝ պետք է նշել, որ ներկայումս գլխավոր անելիքներից մեկն արդեն ձեռք բերված ռազմական տեխնիկայի ինտեգրումն է ՀՀ բանակում՝ անձնակազմի կողմից կիրառման հմտություններին տիրապետելուց մինչև արդեն առկա տեխնիկայի հետ ներդաշնակեցում:

• Ռազմա-արտադրական հնարավորությունների զարգացում

Երկար տարիներ Հայաստանում ռազմական արտադրություն փաստացի գոյություն չի ունեցել. 1-2 օրինակները կրել են իմիտատիվ բնույթ: Բավական է հիշել, որ 44-օրյա պատերազմի ընթացքում ՀՀ-ում արտադրված ռազմական տեխնիկայի սակավաթիվ միավորները կամ ընդհանրապես չեն աշխատել, կամ շատ արագ խոտանվել են: 2021թ.-ից սկսած Հայաստանում փորձ է արվում զարգացնել սեփական ռազմական արտադրությունը, որի համար կառավարությունը փորձում է ներգրավել ոլորտում որոշակի փորձ և հմտություններ ունեցող գործընկերներ:

Հասկանալի պատճառներով՝ ռազմական արտադրության մեծ հատվածը գաղտնի է և հանրային լայն հասանելիություն չունի: Մակայն ժամանակակից աշխարհում, բոլոր այլ ոլորտներին զուգահեռ, այս ոլորտում ևս տեղեկատվության հասանելիության հնարավորությունները աննախադեպ մեծացել են:

Մյուս կողմից, հարկ է նկատել, որ ռազմական արտադրությունը յուրահատուկ ուղղություն է, որը պահանջում է բարձր կարողությամբ մասնագիտական ներուժ և տեխնոլոգիական ժամանակակից հնարավորություններ: Ռազմական արտադրության զարգացման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև լոգիստիկ հնարավորությունները (հումքի և տեխնոլոգիաների ներկրում, արտադրանքի տեղաբաշխում, հնարավոր է նաև՝ արտահանում): Ֆինանսական կողմը նույնպես կարևոր նշանակություն ունի: Այս չորս գործոններին անդրադառնալով առանձին-առանձին:

Մասնագիտական հմտությունների զարգացումը կապված չէ միայն սեփական հնարավորությունների իրացման հետ: Ժամանակակից աշխարհում ռազմական արտադրության ոլորտում գիտական նվաճումներին հասանելիությունը շատ մեծ նշանակություն ունի կադրերի որակական աճի ապահովման համար: Այդ նկատառումներով, Հայաստանը կարող է աշխատել Փրանսիայի և Հնդկաստանի հնարավորությունները օգտագործելու, ինչպես նաև ԱՄՆ-ի,

Զինաստանի և մի քանի այլ ուղղություններով: Կիրառելի է, մասնավորապես, Հայաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության կանոնադրությունը, որի շրջանակներում կարելի է փորձել օգնություն ստանալ Միացյալ Նահանգների համապատասխան մասնագիտական հմտություններից: Շատ կարևոր է առաջին հերթին կարիքների ճշգրիտ գնահատումը, ինչն իր հերթին պահանջում է մասնագիտական կարողություններ: Այստեղ ևս նշված պետությունների մասնագետները կարող են օգտակար լինել: Մասնագիտական կարողությունների ավելացման հարցում կարող են օգտակար լինել պետական ֆինանսավորմամբ արտերկրում մասնագետների և արտադրողների կրթական ծրագրերի անցկացումը, տեղացի և օտարերկրյա մասնագետների միջև կապի ապահովման մեխանիզմների ձևավորումը, միջազգային որակյալ գիտաժողովներին և փակ ակումբների հավաքներին Հայաստանի ներկայացուցիչների ներգրավման ուղղությամբ պետական-մասնավոր հատվածների համատեղ լոբբինգը և այլն:

Այս գործոնը ներառում է նաև ռազմաուսումնական համագործակցության ակտիվացման անհրաժեշտությունը: Ընդհանուր առմամբ, ՀՀ ռազմաուսումնական համագործակցությունը ընդլայնման մեծ ներուժ ունի: Տարիներ շարունակ այն սահմանափակվել է ՌԴ-ում անձնակազմի վերապատրաստումներով և, սահմանափակ դեպքերում, այլ ուղղություններով կետային գործողություններով: 2022թ.ից սկսած իրավիճակը որոշակիորեն փոխվում է, սակայն զարգացման տեմպերը դեռ հեռու են բավարար լինելուց: Մասնավորապես, 2018թ. նոյեմբերի 2-ին ՀՀ և Լիբանանի միջև կնքված ռազմական համագործակցության մասին համաձայնագիրն, ի թիվս այլ հարցերի, նախատեսում է նաև ռազմական կրթության ոլորտում համագործակցություն: Սակայն, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, այս ուղղություններով աշխատանքներ կամ չեն տարվում, կամ չունեն մեծ արդյունավետություն: Լիբանանում քաղաքական իրավիճակի կայունացման վերջին միտումները հույս են տալիս, որ այդ համաձայնագիրը կարող է թարմացվել, և կարելի կլինի որոշ գործնական արդյունքներ ակնկալել:

Ի տարբերություն Լիբանանի՝ Հունաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ ՀՀ ռազմաուսումնական համագործակցությունը որոշակի արդյունքների է հանգեցնում: ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվ. ռազմական ակադեմիայի պատվիրակությունը վերջին տարիներին հաճախակի այցելություններ է կազմակերպում նշված երկրների ռազմաուսումնական հաստատություններ, և՛ հակառակը: Ձեռք են բերվում համագործակցության ընդլայնման համաձայնություններ, որոնց որոշ արդյունքներ արդեն տեսանելի են:

Մասնագիտական կարողությունների զարգացման հարցում բացառիկ նշանակություն ունի լեզուների գործոնը: Հատկապես անգլերենի զարգացումը ոչ միայն արդյունաբերական, այլև կիրառական նշանակություն ունի: Եթե ռազմական արտադրության ոլորտում անգլերենի մասսայականացումը կապված է պետության ընդհանուր կրթական գործընթացների խթանման հետ, ապա բանակում անգլերենի ուսուցումն առանձին ուշադրության և հոգաժողության կարիք ունի: Այս թեմային առավել մանրամասն կանդիդատանք հաջորդ ենթագլխում:

Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիաները որոշիչ դեր են խաղում գրեթե բոլոր ասպարեզներում: Ռազմական արտադրության ոլորտում առանց բարձր տեխնոլոգիական լուծումների ուղղակի հնարավոր չէ որակյալ արտադրանք թողարկել: Նման հնարավորությունները ներառում է, մասնավորապես, արհեստական բանականության օգտագործումը պլանավորման, նախագծման և կիրառման փուլերում: Բարձր տեխնոլոգիական հնարավորություններ առկա են առավել զարգացած երկրներում, որոնց հետ համագործակցությունն այլընտրանք չունի: Բացի

արդեն նշված պետություններից՝ տեխնոլոգիաների ոլորտում հարկ է համագործակցել նաև Հարավային Կորեայի, Ճապոնիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի հետ: Քաղաքական խնդիրների պատճառով Իսրայելի հետ տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հնարավորությունները խիստ սուղ են, սակայն այս ուղղությունը նույնպես կարելի է փորձել զարգացնել՝ առաջին հերթին մասնավոր-մասնավոր համագործակցության մեխանիզմները խթանելու և պաշտպանական ծրագրերով համագործակցելու միջոցով:

Բացի այդ, շատ կարևոր է բուն Հայաստանում տեխնոլոգիական հնարավոր ամենաբարձր մակարդակի արտադրություն ունենալը: Այս նպատակով անհրաժեշտ է շարունակաբար տեխնոլոգիապես արդիականացնել գոյություն ունեցող գործարանները, բոլոր հնարավոր դեպքերում՝ կազմակերպել առանձին զինատեսակների բաղադրիչների ներկրումը և Հայաստանի տարածքում դրանց վերջնական հավաքումը: Մասնավորի հետ պայմանագրեր կնքելիս կարևոր է ուշադրություն դարձնել նոր գործարանների կառուցման նախագծերում բարձր տեխնոլոգիական լուծումների առկայությանը:

Առկա խնդիրներից մեկը վերաբերում է անձնակազմին տրամադրվող ամենատարրական ռազմական միջոցների՝ ամբողջապես ռուսական արտադրանք լինելուն: Այս խնդրի լուծումը տեղական արտադրության ընդլայնումն է, որի շրջանակներում անհրաժեշտ է դիտարկել ինչպես այլ ուղղություններից բաղադրիչների ներմուծման և հավաքման, այնպես էլ՝ սեփական միջոցներով գրոյից արտադրանքի ստացման տարբերակները:

Մասնավորապես, Չարենցավան քաղաքում գործող AK-74 ռուսական ավտոմատների արտադրամասը կարող է հաջողությամբ վերապրոֆիլավորվել այլ տեսակի նմանատիպ զենքի արտադրության: Բացի այդ, Հայաստանում արդեն արտադրվող մի շարք զինատեսակներից բացի, հարկ է սկսել վառոդի, փամփուշտների, բահիկների, ջրի տարանների, սաղավարտների, անձնական պաշտպանության այլ միջոցների սերիական արտադրություն, և այդ արտադրության հոսքագծերն անհրաժեշտ է ներդաշնակեցնել արդեն ներկրվող և նախատեսվող ռազմական տեխնիկայի պահանջներին:

Լոգիստիկ հնարավորությունները ենթադրում են Վրաստանի և Իրանի հետ սերտ համագործակցություն, քանի որ, եթե անգամ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմանները գործեն, ըստ ամենայնի, ռազմական արտադրության համար անհրաժեշտ բեռնափոխադրումներ այդ ուղղություններով իրականացնել տեսանելի ապագայում չի հաջողվի և պետք չէ: Վրաստանի և Իրանի հետ կապված խնդիրներն ունեն աշխարհաքաղաքական նշանակություն, հետևաբար, այս ուղղություններով աշխատանքի մի մեծ հատված դուրս է ՀՀ ազդեցության հնարավորություններից: Սակայն ՀՀ իշխանությունների ամենօրյա աշխատանքային գերակայություններից մեկը պետք է լինի Վրաստանի և Իրանի հետ համագործակցության մեխանիզմների բարելավումը, ընդ որում, անկախ այս երկու պետություններում գործող քաղաքական ռեժիմից, արտաքին քաղաքականության պատկերացումներից կամ իշխող քաղաքական ուժի գաղափարախոսությունից:

Հարկավոր է նաև չմոռանալ Հնդկաստանի կողմից հայտարարված «օդային միջանցքի» հնարավորության մասին: Այն օգտագործվում է, մասնավորապես, Հնդկաստանից Հայաստան ռազմավարական նշանակության բեռների մատակարարման համար: Նման ճանապարհով ռազմա-

արտադրական նշանակության տեխնոլոգիաներ ևս կարող են ներկրվել ինչպես Հնդկաստանից, այնպես էլ, տարանցմամբ, այլ պետություններից:

Ռազմա-արտադրական հնարավորությունների զարգացման գլխավոր խնդիրներից է նաև ֆինանսական կարողությունների հարցը: Թեև 2018թ. ից հետո Հայաստանի բյուջեն և, մասնավորապես, ռազմական բյուջեն շարունակաբար աճում են, սակայն այս ոլորտում միայն պետական ֆինանսավորմամբ հնարավոր չէ ցանկալի արդյունքներ ապահովել: Ֆինանսական խնդիրների լուծման հարցում, պետական սուբսիդավորմանը զուգահեռ, կարևոր է մասնավոր հատվածի համար այս ոլորտում արտադրության խթանման մեխանիզմների ձևավորումը, որոնք կենթադրեն առանձնահատուկ պայմաններ՝ վարկավորումների, դրամաշնորհների, միջազգային պայմանագրերի կատարման դիմաց վարձատրությունների վերահսկման, հարկման, գաղտնիության ապահովման հարցերում: Սա կարող է նաև լրացուցիչ գրավչություն հաղորդել Հայաստանում ռազմական արտադրությամբ զբաղվելու հարցում՝ ոչ միայն ՀՀ ռեզիդենտների, այլև օտարերկրյա ներդրողների համար: Իր հերթին, օտարերկրյա կապիտալի շարժը դեպի ՀՀ կարող է նպաստել նաև նշված նախորդ երեք ուղղություններով աշխատանքին: Օրինակ, օտարերկրյա ազդեցիկ ներդրողը կարող է օգտակար լինել հայ գործընկերոջ համար՝ իր երկրի տեխնոլոգիաներին հասանելիության հարցում:

• Անգլերենը՝ բանակում

2024թ. Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտության շրջանակներում անցկացված հարցման արդյունքով՝ 1106 հարցված հայաստանցիներից անգլերենին տիրապետում է միայն 33 տոկոսը: Անգլերենն օտար լեզուների շարքում երկրորդ ցուցանիշն ունի: Առաջին տեղում ռուսերենն է՝ 88 տոկոսով:

Ինչպես կենսագործունեության բոլոր այլ ոլորտներում, այնպես էլ՝ ռազմական գործում նորագույն ձեռքբերումների հետ ծանոթանալը աշխատանքի արդյունավետության գլխավոր նախապայմանն է: Ժամանակակից տեխնոլոգիաների և ռազմական գործի այլ ոլորտների վերաբերյալ առաջատար գրականություն կարելի է գտնել տարբեր լեզուներով: Սակայն անգլերենով գրականության, ծրագրերի, փոխգործակցության և հաղորդակցման հնարավորությունների ծավալն ակնհայտորեն բազմակի գերազանցում է մյուս լեզուներին, քանի որ ժամանակակից գիտական գրականությունը, այդ թվում՝ ռազմական գիտության վերաբերյալ, մեծածավալ զարգացում է ապրում անգլալեզու շրջանակներում: Կարելի է անգամ արձանագրել, որ, անկախ մասնագիտությունից, անգլերենի չիմացությունն անխուսափելիորեն բերում է, որևէ մակարդակից սկսած, ֆունկցիոնալ կիսագրագիտության: Ինչ վերաբերում է ռուսերենին, այստեղ գոյություն ունի երկու հիմնական խնդիր: Առաջինը վերաբերում է Ռուսաստանի ռազմական ոլորտի ցածր մակարդակին: Այլ խոսքով՝ ռուսերեն գրականությունը, ռուսերենով անցկացվող դասընթացները, ծրագրերը և այլն չեն կարող բավարարել ՀՀ բանակի արդիականացման և ժամանակակից չափանիշներին համապատասխանեցնելու ծրագրերին: Մյուս կողմից, ՀՀ-ՌԴ փոխհարաբերությունների բնույթով պայմանավորված, ռուսերենի գանգվածային տիրապետումը ոչ միայն բանակի, այլև հասարակության այլ հատվածների շրջանակներում հիբրիդային թիրախավորումների լայն ասպարեզ է: Ըստ այդմ, բանակում անգլերենի ուսուցումը ռազմավարական նպատակ է ոչ միայն ռազմական ոլորտի, այլև՝ պետության ընդհանուր

երկարաժամկետ զարգացման և արդիականացման, դիմադրողականության ամրապնդման տրամաբանությունում:

Տարիներ շարունակ ռազմական կրթության ընթացքում օտար լեզուներին որոշակի անդրադարձ եղել է միայն մասնագիտացված հաստատություններում՝ ցածր և միջին սպայական կազմի պատրաստման ընթացքում: Պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայությունը ենթադրել է գիտելիքներ միայն անմիջականորեն ռազմական տեղեկությունների վերաբերյալ: Համեմատության համար նշենք, որ թուրքական բանակում հարևան երկրներից որևէ մեկի լեզվին տիրապետելը անձնական առաջխաղացման կարևորագույն պայման է:

Այս պատճառով առաջնային և կարևոր նշանակություն է ստանում ՁՈւ բոլոր շրջանակների՝ անգլերենին տիրապետելը: Պլանավորման առաջին և գլխավոր կետերից մեկը պետք է լինի պարտադիր ծառայության ընթացքում բոլոր զորամասերում անգլերեն լեզվի ինտենսիվ դասավանդումը, ինչի համար անհրաժեշտ է այն ներառել զինվորականների դասացուցակներում: Սա ունի ոչ միայն ռազմական, այլև ընդհանուր հասարակական առաջընթացի ներուժ, քանի որ զինվորականներն, ավարտելով ծառայությունը, վերադառնալու են քաղաքացիական կյանք, իսկ անգլերեն լեզվի իմացությունը իրացվելու ավելի մեծ հնարավորություններ է բացելու քաղաքացիական կյանքում՝ ցանկացած մասնագիտությունում կամ աշխատանքային գործունեության մեջ:

Սպաների մոտ անգլերենի իմացության մակարդակի բարձրացումը կարելի է կազմակերպել մի քանի ուղղություններով: Առաջինը հենց դասավանդման գործընթացում անգլերենի ժամաքանակի ավելացումն է: Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում վերջերս անգլերենի ժամաքանակը քառապատկվել է: Սակայն դա կարող է բավարար չլինել, եթե ավարտելուց և գործնական աշխատանքի անցնելուց հետո սպայական անձնակազմը չշարունակի կատարելագործել անգլերենի մակարդակը: Այս նպատակով անգլերենը, որպես տիրապետման պարտադիր բաղադրիչ, պետք է ընդգրկել ծառայողական աստիճանով առաջխաղացման ատեստավորման բոլոր ծրագրերում: Այլ կերպ ասած, եթե կադրային սպան ցանկանում է ունենալ ծառայողական առաջխաղացում, նա պարտավոր է, բացի մասնագիտական հմտությունները, զարգացնել նաև անգլերենի մակարդակը (իրականում, այս երկու հմտությունները փոխկապակցված են): Որպեսզի սպաները ֆիզիկապես հնարավորություն ունենան շարունակել անգլերենի ուսուցումը, ինչպես նաև առաջխաղացման հավակնություններ ունենալիս ֆինանսապես չտուժեն, կարելի է զինվորական մասերին կից հատվածներում կազմակերպել անգլերենի երեկոյան դասընթացներ:

Անգլերենի իմացությունն անհրաժեշտ է վերոգրյալ բոլոր ուղղություններով աշխատանքների արդյունավետությունն ավելացնելու համար: ՀՀ ՁՈւ վերակառուցման, ռազմական դաշինքների և հարթակների հետ փոխհարաբերությունների բազմազանեցման, ռազմաուսումնական համագործակցության խթանման, ռազմա-արտադրական հնարավորությունների ավելացման արդյունավետությունը ոչ մի զարգացման դեպքում չի կարող բավարարել անհրաժեշտ նվազագույն պահանջները, եթե անձնակազմը չի տիրապետում անգլերեն լեզվին, հետևաբար, չունի հասանելիություն ժամանակակից ամենաարդյունավետ հնարավորություններին: Հետևաբար, մեր աշխատանքում առանձին կարևորություն և նշանակություն ենք տալիս բանակում անգլերենի խթանմանը: Գտնում ենք, որ անգլերենի տիրապետման պլանավորվող նշաձողը պետք է ծածկի ռազմական գործին առընչվող միջին և բարձր աստիճան ունեցող սպայական անձնակազմի հարյուր

տոկոսը, իսկ ցածր սպայական աստիճան ունեցող անձնակազմի՝ նվազագույնը 80 տոկոսը: Հետևողական աշխատանքի դեպքում այս ցուցանիշների ապահովմանը կարելի է հասնել ընդամենը 5-7 տարվա ընթացքում:

- **Ահաբեկչական սպառնալիքների դիմագրավում**

Ռազմաքաղաքական դիմակայունության ապահովման ևս մեկ բաղադրիչ է ահաբեկչական սպառնալիքների դիմագրավումը: Կարելի է ենթադրել, որ Հայաստանում այս սպառնալիքը հիմնականում անտեսվել է, քանի որ մինչ վերջերս «ահաբեկչական» էին որակվում Ադրբեյջանի գործողությունները Լեռնային Ղարաբաղում: Միջազգային ահաբեկչությունը, սակայն, մեծ խնդիրներ է առաջացրել ողջ տարածաշրջանում: Ոչ միայն առանձին կազմակերպությունների, այլև պետությունների կողմից որոշ գործողություններ որակվել են որպես «ահաբեկչական», ինչին հետևել են պատասխան գործողություններ, սակայն ահաբեկչական կազմակերպությունների նկատմամբ վերաբերմունքը հստակ ընդգծված է տարբեր երկրներում և կանոնակարգված է համապատասխան օրենսդրական ակտերով: Սովորաբար, տարբեր երկրներում ծայրահեղական, իռեդենտիստական և ահաբեկչական կազմակերպությունները արգելվում են օրենքով, իսկ այդ կազմակերպությունների անդամներին սպառնում է պատասխանատվություն:

Թեև Հայաստանում ընդունվում են միջազգային այդ կազմակերպությունների (որոնց անդամակցում է Հայաստանը) նմանօրինակ ցուցակները, սակայն ահաբեկչական և նմանատիպ կազմակերպությունների ազգային ցուցակ չի կազմվել: Մինչդեռ գոյություն ունեն կազմակերպություններ, որոնք ակտիվ չնորմավորված գործունեություն են ծավալում, այդ թվում՝ մեր տարածաշրջանում: Որպես միջազգային հանրության լիիրավ անդամ՝ Հայաստանը կարող է ոչ միայն ընդունել և հրապարակել իր տարածքում արգելված կազմակերպությունների ցուցակը, պատասխանատվություն սահմանել նշված կազմակերպությունների անդամ հանդիսացող անհատների համար, այլև առաջարկել իր գործընկերներին՝ իրենց երկրներում ևս նշված կազմակերպություններն ընդգրկել արգելվածների ցուցակներում: Սա հնարավորություն կտա էականորեն զսպել նմանատիպ կազմակերպությունների կողմից միջազգային հարթակներում ՀՀ շահերի դեմ գործողությունները:

Ահաբեկչական սպառնալիքների դիմագրավման ռազմաքաղաքական նշանակության ևս մեկ գործոն է, կառավարող մարմինների ղեկավարների անգործունակության դեպքում, իշխանության՝ իրավունքի ուժով փոխանցման օրենսդրական կարգավորման հարցը: Հայաստանում նախկինում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունը՝ 1999թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ մի շարք ղեկավարների ահաբեկումը և սպանությունը, որոշ ժամանակ կառավարման կոլապս առաջացրեց, որը հնարավոր եղավ հաղթահարել միայն մարդկային գործոնի շնորհիվ: Այնինչ, իշխանության «ժառանգականության» օրենսդրական ամրագրումը հնարավորություն կտա ոչ միայն նման իրավիճակներից ապահովագրել կառավարման համակարգը, այլև, ինչ-որ առումով, անիմաստ կդարձնի ահաբեկչության միջոցով խնդիրներ լուծելու փորձերը:

Այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ձևավորել քաղաքական և ռազմական բարձրագույն ղեկավարության «ժառանգականության» հերթականության ցանկ (Night watch

protocol), որը օրենքի ուժով կամրագրի անգործունակության դեպքում կառավարման գործառույթի փոխանցումը:

- **Ամփոփում և առաջարկություններ**

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռազմաքաղաքական բաղադրիչի զարգացումն ու դիմակայունության ամրապնդումն այս ուղղությամբ ենթադրում է լայնամասշտաբ փոփոխություններ և նախաձեռնողական լուծումներ: Բարեփոխումների շարունակականության ապահովումն անհրաժեշտ պայման է՝ ռազմաքաղաքական բաղադրիչի արդիականացման գործընթացում տեխնոլոգիական նորարարություններին ծանոթ լինելու, նորագույն հնարավորություններով վերազինվելու և շարունակաբար թարմացնելու, նոր սերնդի պատերազմների տրամաբանությունը հասկանալու, դրան պատրաստ լինելու և 1994-2020թթ. սխալներից խուսափելու նկատառումներով: Ըստ այդմ, ուսումնասիրության ընթացքում առաջ են եկել մի շարք առաջարկություններ, որոնք նշված նպատակների իրականացման ճանապարհին անհրաժեշտ գործողություններ են ենթադրում:

1. Դիտարկել ՀՕՊ և ՀՀՊ համակարգերի ինտեգրված՝ միասնական գմբեթի գաղափարը, որը տարբեր խորության, հեռահարության ու տրամաչափի միաժամանակյա օգտագործմամբ կաշխատի ՀՀ ողջ օդային տարածքում ու դրա մերձակայքում: Այս գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է ի սկզբանե ներդնել արհեստական բանականության գործիքները:
2. Մոբիլ, փոքր և հարաբերականորեն ազատ՝ ինքնակառավարվող ստորաբաժանումները պետք է փոխարինեն դանդաղաշարժ, մեծ տարածություններ ընդգրկող և բազմաստիճան կառավարման համակարգ ունեցողներին: Անհրաժեշտ է վերանայել նաև «մասսայական» հետևակային ուժի կիրառման մոտեցումները:
3. Խորությամբ ուսումնասիրել հիբրիդային գործողությունների տրամաբանությունը և, ստորին մակարդակում որոշումների կայացման ազատության աստիճանի ավելացմանը զուգահեռ, հստակեցնել ու համակարգել ընդհանուր կառավարման համակարգում հիբրիդային սպառնալիքների հակազդեցության ձևերը:
4. Ներդաշնակեցնել համապարփակ անվտանգության և պաշտպանության համակարգը և ժողովրդագրության ռազմավարությունը, մասնավորապես, մեծ ուշադրություն հատկացնելով սահմանամերձ շրջաններում բնակչության աճի և ռազմական գործողությունների դեպքում տեղաբնակների ակտիվ մասնակցության տրամաբանությանը:
5. Սահմանամերձ շրջաններում բնակչության աճի խթանման նպատակով քննարկել և հաստատել սահմանամերձ շրջանների զարգացման համալիր ծրագիր, որը կնախատեսի, տնտեսվարողների համար հարկային ու մաքսային արտոնություններին զուգահեռ, նաև կյանքի նվազագույն պայմանների ապահովման պետական ծրագրի իրականացում, հանգստի ու զվարճանքի գոտիների կառուցման տեղերների հայտարարում, կենտրոնական ապարատի որոշ պետական մարմինների տեղափոխում սահմանամերձ շրջանների

շրջկենտրոններ՝ սպասարկող անձնակազմին այդ շրջաններից հավաքագրելու հնարավորություն տալով, և այլն:

6. Ռազմավարական հաղորդակցության պլանի մշակում՝ ուղղված զինծառայության հեղինակության բարձրացմանը և դրա ապահովության ներկայացմանը, և, մյուս կողմից, գործնական քայլեր զինծառայությունն ավելի դյուրին դարձնելու ուղղությամբ, որի լուծման լուրջ մոդել կարելի է դիտարկել պարտադիր ժամկետային զինծառայությունը մեկ տարի սահմանելը:
7. Պատերազմի բնույթի փոփոխությամբ պայմանավորված՝ աշխատանք տանել էժան հարձակողական միջոցներ հավաքագրելու և կուտակելու ուղղությամբ, որոնք հնարավորություն կտան անհրաժեշտ պահի նախահարձակ լինելու միջոցով զսպել հակառակորդին:
8. Խորացնել ռազմական ոլորտում համագործակցությունը՝ հատկապես կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների հետ, որոնք անցել են սոցիալիստական ճամբարի զանգվածային բանակից նոր տեխնոլոգիական բանակի և կարող են մեծ արդյունավետությամբ օգտակար լինել ՀՀ բանակի վերափոխումների հարցում: Այս նպատակի համար ներգրավել հարյուրավոր մասնագետներ՝ տարբեր ուղղություններով աշխատանքներին մասնակցելու համար:
9. Ակտիվացնել աշխատանքները համընկնող շահեր ունեցող երկրների հետ բազմակողմանի հարթակների ձևավորման ուղղությամբ: Մասնավորապես, ուշադրություն դարձնել Հայաստան-Ֆրանսիա-Հնդկաստան-Հունաստան-Կիպրոս հնարավոր համագործակցային ձևաչափին ու դրա վարիացիաներին:
10. Ռազմական տեխնիկայի ձեռքբերման ուղղությունների դիվերսիֆիկացմանը զուգահեռ, առաջնահերթ աշխատել անձնակազմի կողմից արդեն ձեռք բերված տեխնիկային տիրապետելու և տեխնիկայի հետ դրա ներդաշնակեցման ուղղությամբ, պլանավորել հետագա գնումները՝ հիմնվելով կրթական գործընթացի գրանցած հաջողության ու դժվարությունների վրա:
11. Մասնագիտական կարողությունների զարգացման ուղղությամբ ակտիվ համագործակցություն ծավալել գործընկեր պետությունների հետ՝ անձնակազմի վերապատրաստման ծրագրերի անընդհատության ապահովման տրամաբանությամբ:
12. Խթանել Հայաստանում ռազմական արդյունաբերության աճը՝ շարունակաբար տեխնոլոգիապես արդիականացնելով գոյություն ունեցող գործարանները, բոլոր հնարավոր դեպքերում՝ կազմակերպել առանձին զինատեսակների բաղադրիչների ներկրումը և Հայաստանի տարածքում դրանց վերջնական հավաքումը, ինչպես նաև ներքին շուկայում մասնավորի հետ պայմանագրեր կնքելիս ուշադրություն դարձնել նոր գործարանների կառուցման նախագծերում բարձր տեխնոլոգիական լուծումների առկայությանը:
13. Վերապրոֆիլավորել Հայաստանում «AK-74» ռուսական ավտոմատների արտադրական հզորությունները այլ՝ ավելի ժամանակակից մոդելների արտադրության: Բացի այդ, Հայաստանում արդեն արտադրվող մի շարք զինատեսակներից բացի, հարկ է սկսել վառողի, փամփուշտների, բահիկների, ջրի տարաների, սաղավարտների, անձնական պաշտպանության այլ միջոցների սերիական արտադրություն, և այդ արտադրության

հոսքագծերը ներդաշնակեցնել արդեն ներկրվող և կանխատեսվող ռազմական տեխնիկայի պահանջներին:

14. Պարտադիր ծառայության ընթացքում բոլոր զորամասերում անգլերեն լեզվի ինտենսիվ դասավանդում անցկացնել և այդ նպատակով այն ներառել զինվորականների դասացուցակներում: Անգլերենը, որպես տիրապետման պարտադիր բաղադրիչ, ընդգրկել ծառայողական աստիճանով առաջխաղացման ատեստավորման բոլոր ծրագրերում, իսկ սպաների համար բոլոր զորամասերին կից հատվածներում կազմակերպել անգլերենի երեկոյան դասընթացներ:
15. Ահաբեկչական սպառնալիքներին դիմագրավելու նպատակով ընդունել և հրապարակել ՀՀ տարածքում արգելված կազմակերպությունների ցուցակ և պատասխանատվություն սահմանել անհատական մակարդակով նշված կազմակերպությունների անդամ կամ համակիր հանդիսանալու համար:
16. Ձևավորել անգործունակության պարագայում քաղաքական և ռազմական բարձրագույն իշխանության՝ իրավունքի ուժով փոխանցման օրենսդրական կարգավորման հերթականության ցանկ (Night watch protocol), որն օրենքի ուժով կամրագրի անգործունակության դեպքում կառավարման գործառնության փոխանցումը:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Է., Մարգարյան Ա., Քոչինյան Ա., Ներգեթյան Ա., Փոքր, ոչ բլոկային պետություն. ռազմավարության հայեցակարգային մոտեցումներ https://hcav.am/wp-content/uploads/2023/07/NSS_-final- 27.06.23-arm.pdf
2. Արզումանյան Հ., Հորիզոններ. համապարփակ մոտեցում ազգային անվտանգության համակարգի կերտմանը, Եր.: Կողբ հիմնադրամ, 2023:
3. Թադևոսյան Ա., Պատերազմը մասնակիցների աչքերում. մարդաբանական հետազոտություն, Եր.: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022:
4. Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառնան հետազոտություն 26.09.2024 <https://shorturl.at/h524k>
5. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 2020 <https://www.mfa.am/filemanager/security%20and%20defense/AA-Razmavarutyun-Final.pdf>
6. ՀՀ ժողովրդագրության ռազմավարություն <https://www.e-draft.am/projects/7483/about>
7. Ղևոնդյան Ռ., ՀՀ ժողովրդագրական անվտանգության քաղաքական մարտահրավերները աշխարհաքաղաքական ներկա իրողությունների պայմաններում/ Գլոբալացվող աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից հրամայականները: Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր.: 2024, էջ 20-31:
8. ՀՀ և ԱՄՆ միջև Ռազմավարական գործընկերության կանոնադրություն <https://www.mfa.am/hy/press-releases/2025/01/14/ARM-US-Charter/13032>
9. Քոչինյան Ա., Ղևոնդյան Ռ., Հայաստանի Հանրապետության հիմնական կախվածությունները Ռուսաստանի Դաշնությունից. սպառնալիքներ և լուծումներ, Եր.: ԱԲՀԿ և ԻԲՄ, 2025:
10. 1992-1994: Transformation continues, involvement in the Balkans grows <https://shape.nato.int/page14662857>

11. A Theory of Asymmetrical Warfare: normative, legal, and conceptual issues
<https://cordis.europa.eu/project/id/329465/reporting>
12. Bianca L., Sarajane R., Can France Rescue Armenia From its Security Isolation?
<https://cepa.org/article/can-france-rescue-armenia-from-its-security-isolation/>
13. Conventional and hybrid actions in the Russia's invasion of Ukraine
<https://securityanddefence.pl/pdf-168870-93689?filename=Conventional%20and%20Hybrid.pdf>
14. Defence Manufacturing Industry in India <https://www.ibef.org/industry/defence-manufacturing>
15. English as an International Language in the Military: A Study of Attitudes
[file:///C:/Users/PC/Downloads/mke,+06+Orna Montesinos_exit_2.pdf](file:///C:/Users/PC/Downloads/mke,+06+Orna+Montesinos_exit_2.pdf)
16. Park W., Geopolitical Tensions in Eastern Europe: Defense and Logistic Playbook for 2025
<https://www.ainvest.com/news/geopolitical-tensions-in-eastern-europe-defense-and-logistics-playbook-for-2025-25061010fa9cce3ccfb244e9/>
17. Report: Armenia signed over \$1.5 bln in defense contracts with India
<https://horizonweekly.ca/en/report-armenia-signed-over-1-5-bln-in-defense-contracts-with-india/>
18. Schmid J., Hybrid warfare on the Ukrainian battlefield: developing theory based on empirical evidence/ Journal on Baltic Security, Narva, 2019, pp. 5-15.
19. Shengelia Z., The Second Karabakh War. A Year After, Economic Policy Research Center, 2022
20. The Geopolitical aspects of the India-Armenia Partnership <https://apri.institute/the-geopolitical-aspects-of-the-india-armenia-partnership/>
21. US to help Armenia modernize its military <http://eurasianet.org/us-to-help-armenia-modernize-its-military>
22. Устав Организации Договора о коллективной безопасности https://odkb-csto.org/documents/documents/ustav_organizatsii_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti_/#loaded

ՄԱՍ 2 ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Հեղինակներ՝ Արեգ Քոչինյան, Ռոբերտ Ղևոնդյան

Վերջին տարիներին տեղի են ունենում Հայաստանի արտաքին քաղաքականության վերանայման էական փորձեր: Այս պահին կարելի է հստակ արձանագրել մի քանի պրոցես

1. Տարածաշրջանային մակարդակում հարաբերությունների կարգավորման և մեկուսացման հաղթահարման փորձ:
2. Ուժային կենտրոնների միջև բալանսավորման և բալանսավորված արտաքին քաղաքականություն վարելու փորձ:
3. Հայաստանի Հանրապետության շահերի ու հետաքրքրությունների վրա հիմնված արտաքին քաղաքականություն կառուցելու փորձ:
4. Նոր ուղղությունների ձևավորման և հարաբերությունների զարգացման փորձ:

Այս մասում մենք փորձելու ենք գործնական առաջարկներ ներկայացնել նշված ուղղությունների սպասարկման համար:

• **Տարածաշրջանային մակարդակ – Թուրքիա, Իրան, Ադրբեջան, Վրաստան**

Տարածաշրջանային քաղաքականության վերափոխման հրամայականի առջև Հայաստանը մշտապես է կանգնած եղել: Այդ նպատակին միտված որոշ գործողություններ իրականացվել են, սակայն մեծ հաջողություն չեն ունեցել (ամենահայտնին «Ֆուտբոլային դիվանագիտությունն» է): 44-օրյա պատերազմից հետո սկսված շարժերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս ավելի սաստկացած կարիք ու առավել իրական հնարավորություններ կան տարածաշրջանում ՀՀ քաղաքականության դիվերսիֆիկացման համար: Անվտանգության ամրապնդման կարևորագույն գործոններից մեկը ինքնիշխան արտաքին քաղաքականություն վարելն է: Իսկ տարածաշրջանային մակարդակում երկկողմ հարաբերությունների կառուցումն՝ առանց կողմնակի միջամտության, պետականության հարատևության գործում այլընտրանք չունի: Ըստ այդմ, Թուրքիայի, Ադրբեջանի, Իրանի և Վրաստանի հետ երկկողմ բարիդրացիական հարաբերությունների զարգացումը առանցքային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար:

Հայաստան-Թուրքիա

Հայաստանի համար ներկայումս Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը բացարձակ առաջնահերթություն է: Անվտանգային առումով, Հայաստանի և Թուրքիայի

կարգավորված հարաբերությունները կարող են էականորեն նվազեցնել ռիսկերը, իսկ տնտեսական զարգացման համար սահմանի բացումը և ուղիղ առևտուրը կտրուկ խթան կհանդիսանան:

Թուրքիայի հետ փոխհարաբերությունները որոշակի առաջընթաց են գրանցում վերջին 2 տարվա ընթացքում: Դա կապված է ոչ միայն աշխարհաքաղաքական, այլև՝ նեղ տարածաշրջանային իրողությունների փոփոխությունների հետ: 44-օրյա պատերազմից անմիջապես հետո ձևավորված իրողությունները մշուշոտ պատկերացումներ էին տալիս Թուրքիայի հետ հարաբերությունների փոփոխության վերաբերյալ: Սակայն հետագա զարգացումները էական նշանակություն ունեցան այս հարցում: Նախ, Ռուսաստան-Ադրբեջան փոխհարաբերությունների մերձեցման մակարդակը որոշակիորեն ազդեց տարածաշրջանի վերաբերյալ Թուրքիայի պատկերացումների վրա: Բացի այդ, պատերազմում ակտիվ մասնակցություն ցույց տված Թուրքիան մեծ հաշվով չի մասնակցում պատերազմի արդյունքները բաժանելու գործընթացին, ինչը դժգոհության առիթ է դարձել այդ պետության ներսում: Ավելի ու ավելի հստակ են հնչում կարծիքներ, որ Թուրքիան այլևս չպետք է Հայաստանի հետ հարաբերությունները կապի միայն Ադրբեջանի շահերի հետ, այլ փորձի վարել առավել բալանսավորված քաղաքականություն: Վերջին զարգացումները տեղավորվում են այս տրամաբանությունում: Այսպես, օդային բեռնափոխադրումը ոչ միայն համաձայնեցված է, այլև այսօր իրականություն է: Բացի այդ, հայ-թուրքական համատեղ հանձնաժողովը ուսումնասիրել է Գյումրի-Կարս երկաթուղու գործարկման հնարավորությունը: Հայաստանը և Թուրքիան պայմանավորվածություն ունեն բացել սահմանը 3-րդ երկրների քաղաքացիների և դիվանագիտական անձնագիր ունեցողների համար, թեև այս դեպքում թուրքական կողմը չի շտապում խոստացված քայլերը հստակ կատարել:



Լուսանկադր՝ araratnews.am-ի

Մյուս կողմից, հարկ է նշել, որ Ադրբեջանը քաղաքական, տնտեսական, հասարակական և այլ ուղղություններով ահռելի ազդեցություն ունի Թուրքիայի վրա: Դա դրսևորվում է ոչ միայն

առաջնորդների անձնական հարաբերությունների կամ խոշոր ֆինանսական հատկացումների շնորհիվ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացին մասնակցությամբ, այլև Թուրքիայի ներքին քաղաքական դաշտում իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերությունների մանիպուլացման միջոցով, անուղղակի ազդեցության միջոցներով:

Այնուամենայնիվ, հարկ է արձանագրել, որ, թեպետ, տեսականորեն հնարավոր է՝ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացը տեղ հասնի մեկ քայլ առաջ, քան հայ-ադրբեջանական կարգավորումը, դրա հավանականությունը շատ ցածր է, ու առավել ևս ցածր է երկու կարգավորումների տարանջատման հնարավորությունը:

Մյուս կողմից, որքան էլ Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունները կախված են հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացներից, դեռևս մեծ է նաև նախապատրաստական կամ տնային աշխատանքների իրականացման դաշտը: Հատկապես ուշադրության են արժանի արդեն նշված՝ 3-րդ երկրների քաղաքացիների և դիվանագետների համար սահմանը մասնակի գործարկելու՝ նախկին պայմանավորվածության վերբեռնման, բեռների տարանցիկ փոխադրումներ, օրինակ, թուրքական մեքենաներով կազմակերպելու, երկաթգծի ցանցի վերազինման և փոխադարձ համապատասխանեցման (այս հարցում կա նաև Հարավկովկասյան երկաթուղու գործոնը), վիրտուալ տարածությունում թվային տեխնոլոգիաների ոլորտում փոխգործակցությունների կազմակերպման, Թուրքիայում հայկական հանրային դիվանագիտության խողովակների ուժեղացման և մի շարք այլ ուղղություններ:

Հաշվի առնելով, որ ՀՀ տարածաշրջանային քաղաքականության հրամայականները ենթադրում են կարգավորված և անմիջնորդ հարաբերություններ բոլոր հարևանների հետ, իսկ Թուրքիան այդ հարևանների շարքում անվտանգային, տնտեսական, էներգետիկ, տարանցիկ և բազմաթիվ այլ ուղղություններով առանձնահատուկ կարևորություն ունի, ճիշտ կլիներ պաշտոնական մակարդակում հայ-թուրքական սահմանի բացումը և հարաբերությունների կարգավորումը հայտարարել առաջնահերթություն: Միաժամանակ, այս տրամաբանությունը կարելի է փորձել օգտագործել նաև հայ-ադրբեջանական կարգավորման տարբեր ուղղություններում Թուրքիայի մասնակցությունը հնարավորինս դրական ուղով զարգացնելու համար:

Հայաստան-Իրան

Իրանի հետ ՀՀ հարաբերությունները շարունակում են զարգանալ գործընկերության մթնոլորտում: Թեև Իրան-Հայաստան երկաթուղու վերաբերյալ խոսակցությունները դուրս են եկել օրակարգից, և տեսանելի ապագայում դա դժվար թե իրականություն դառնա, սակայն տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակման և «Խաղաղության խաչմերուկ» նախագծի տրամաբանությունում ՀՀ-Իրան փոխհարաբերությունները առաջընթացի մեծ ներուժ ունեն: Հարկ է նշել, որ ԱՄՆ նոր դեկլարության և, անձամբ, նախագահ Թրամփի դիրքորոշումը Իրանի նկատմամբ բացասական է, ինչը հայ-իրանական հարաբերություններում լրացուցիչ զգուշավորության անհրաժեշտություն է ձևավորում: Իսրայել-Իրան պատերազմը և ԱՄՆ դերակատարումը ևս մեկ անգամ ցույց տվեցին մեր տարածաշրջանում Իրանի շուրջ հնարավոր ապակայունացումների հնարավորությունը: Սակայն, մյուս կողմից, Իրանի ներկա

դեկավարությունը հիմնականում կարծես հակված է Արևմուտքի հետ երկխոսության: Այս համատեքստում մեծ կարևորություն ունեն սցենարային պլանավորումները, որոնք հնարավորություն կտան պատրաստ լինել իրավիճակի կտրուկ փոփոխություններին: Հայաստանը կարող է փորձել Իրան-ԱՄՆ փոխհարաբերություններում որոշակի միջնորդական գործառնություններ իրականացնել կամ փորձել հարթակ տրամադրել բանակցությունների համար, հաշվի առնելով երկու երկրների հետ առանձնահատուկ հարաբերությունները: Թեև Արևմուտքը և, մասնավորապես, ԱՄՆ-ն Իրանի նկատմամբ պատժամիջոցների հարցում մշտապես հաշվի է առել Հայաստանի խնդիրները, սակայն Իրանի նկատմամբ ավելի մեղմ քաղաքականությունը կրիսիս Հայաստանի շահերից: Առաջին հերթին դա վերաբերվում է Իրանի հետ առևտրի հարցում արգելքների մեղմացմանը կամ վերացմանը, մասնավորապես, երկակի և ռազմական նշանակություն ունեցող ապրանքների ու էներգակիրների փոխադրման մասով: Եթե Հայաստանը կարողանա նպաստել այս հարցում ԱՄՆ-Իրան հարաբերություններում առաջխաղացմանը, դա կարելի կլինի գրանցել որպես դիվանագիտական լուրջ ձեռքբերում:

Հայաստանի և Իրանի համագործակցության կարևորագույն ուղղություններից է էներգետիկան: «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիրը կենսական նշանակություն ունի ՀՀ էներգոհամակարգի համար: Սակայն Իրանի հետ էներգետիկ ոլորտում համագործակցությունը բազմակի զարգացման ներուժ ունի: Գազի ներկրման ծավալների ավելացման հարցում էական է առկա հայ-իրանական գազամուղի տեխնիկական փորձաքննությունը և, այդ փորձաքննության տված արդյունքներից ելնելով, կա՛մ գազամուղի ազգայնացման, կա՛մ նոր գազամուղի կառուցման քննարկման հարցը: Բայց գաղափարը վերաբերում է ոչ միայն գազի ներկրման ծավալների ավելացմանը: Նավթավերամշակման նոր գործարանի կառուցումը Սյունիքում կարող է բազմակի ավելացնել ներկրվող նավթի ծավալը: Գործարանի արտադրանքը կարելի է հետագայում արտահանել նաև Վրաստան, իսկ Թուրքիայի հետ սահմանի բացման դեպքում՝ Թուրքիայի արևելյան շրջաններ: Մեկ այլ հնարավորություն է վերականգնվող էներգիայի ոլորտում համագործակցությունը:

Ընդհանուր առմամբ, հայ-իրանական փոխհարաբերությունները Հայաստանի համար այլընտրանք չունեն: Ավելորդ չէ հիշեցնել, որ Իրանը, բացի դեսպանությունից, նաև հյուպատոսություն ունեցող փոքրաթիվ պետություններից մեկն է Հայաստանում (20.10.2022թ., ք. Կապան): Իրանի հետ Հայաստանի շահերի շարունակական համադրումը պետք է ամենօրյա աշխատանքային հանձնարարություն լինի պատասխանատու մարմինների համար:

Հայաստան-Վրաստան

Վրաստանի հետ հարաբերությունները զարգանում են վայրիվերումներով: 2024թ. երկու պետությունների միջև կնքվեց ռազմավարական համագործակցության հաստատման համաձայնագիր, ապրիլի 11-ին, հռչակագրի հիման վրա Երևանում տեղի ունեցավ «Հայաստան-Վրաստան ռազմավարական գործընկերություն. հայեցակարգից՝ իրականություն» խորագրով համաժողովը, որին մասնակցում էին ՀՀ կառավարության անդամներ, Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, փորձագիտական շրջանակների ներկայացուցիչներ և Վրաստանից ներգրավված փորձագիտական խումբ: Սակայն հետագայում իրադարձությունների ընթացքը փոխվեց: Վրաստանի իշխանությունների կողմից եվրաինտեգրման գործընթացում

ետընթացը և Հայաստանի՝ արևելք-արևմուտք կումունիկացիաների հարցում առավել ակտիվ դեր ստանձնելու ամբիցիան ազդեցություն գործեցին նաև Հայաստան-Վրաստան հարաբերությունների վրա: Ներկայումս նկատվում է հարաբերությունների որոշակի սառեցում, որոշ դեպքերում, նույնիսկ, լուծում պահանջող խնդիրներ կան: Հայաստանից արտահանվող ապրանքները շատ դեպքերում չկանոնակարգված խնդիրներ են ունենում Վրաստանի տարածքում:

Սակայն, Հայաստան-Իրան հարաբերությունների օրինակով, Հայաստան-Վրաստան հարաբերությունները ևս ՀՀ համար այլընտրանք չունեն: Վրաստանի հետ փոխհարաբերությունների ամրապնդումը և առաջընթացը անհրաժեշտ է ապահովել՝ անկախ այնտեղ առկա քաղաքական ռեժիմից և Վրաստանի իշխանության արտաքին քաղաքական պատկերացումներից: Հարաբերությունները նորմալ զարգացման հուն վերադարձնելը պետք է լինի Հայաստանի արտաքին գերատեսչության հրամայականներից մեկը: Հակառակ դեպքում, Հայաստանի մեկուսացումն արտաքին աշխարհից կարող է շատ ավելի սուր լինել: Հարկավոր է մշակել հայ-վրացական հարաբերությունների ավտոնոմիայի հայեցակարգ, երբ կողմերը փոխադարձաբար պայմանավորվում և երաշխավորում են, որ այդ հարաբերությունները պահելու են իրենց մնացած դաշնակցային կամ կոնֆլիկտային հարաբերություններից անջատ և, անկախ ամեն ինչից, ընդունելու, պաշտպանելու և աջակցելու են միմյանց ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը:

Հայաստան-Ադրբեջան

Անորոշության և ռազմական էսկալացիայի վտանգի առումով տարածաշրջանում ամենամեծ խնդիրը ՀՀ-Ադրբեջան փոխհարաբերություններն են: Թեև 44-օրյա պատերազմից և 2023թ. Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության էթնիկ գաղթից հետո, առաջին հայացքից, Ադրբեջանն ստացել է այն, ինչին ձգտում էր, սակայն ալիևյան ռեժիմը չի բավարարվում ձեռք բերածով: Կարելի է արձանագրել, որ բանակցային գործընթացում ներկայիս գլխավոր խնդիրը ադրբեջանական կողմի մաքսիմալիզմն է:

2022-2024 թվականներին հայ-ադրբեջանական բանակցությունները հիմնականում ունեցել են 3 ուղղություն՝ խաղաղության պայմանագրի նախապատրաստում, սահմանազատման և սահմանագծման աշխատանքներ և ենթակառուցվածքների ապաշրջափակում: Այս բոլոր ուղղություններով Ադրբեջանը սեփական պատկերացումներն ունի, որոնք հաճախ հաշվի չեն առնում որ միայն ՀՀ, այլև՝ տարածաշրջանային և արտատարածաշրջանային այլ խաղացողների մոտեցումները: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ԱՀ փոխհարաբերությունների զարգացման հնարավոր տարբերակները 3-ն են.

1. **Լավատեսական** - Հայաստանը և Ադրբեջանը ավարտում են խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումները և, նախ, նախաստորագրում, ապա՝ ստորագրում այն, համաձայնություններ են ձեռք բերվում, որոնց արդյունքում հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ: Այս տարբերակն ունի բազմաթիվ այլընտրանքային զարգացումների հավանականություն՝ բարիդրացիական հարաբերությունների հաստատումից, ենթակառուցվածքների ապաշրջափակումից և տարանցիկ ճանապարհների համատեղ գործարկման միջոցով տնտեսական զարգացումից մինչև հետագա մրցակցություն և երկարաժամկետ հակասությունների

գեներացում: Խաղաղությունը կարող է ունենալ բազմաթիվ մակարդակներ, որոնց ուղղությամբ առաջընթացը ենթադրում է ամենափոքր համաձայնություններից աստիճանական անցում ավելի մեծ քայլերի: Բոլոր դեպքերում, սակայն, խաղաղության համաձայնագիրը պետք է դիտարկել որպես հարատև խաղաղության կառուցման մեկնակետ, այլ ոչ՝ դրա վերջնարդյունք:

2. **Հռեռեստական** - խաղաղության պայմանագիրը չի հաջողվում համաձայնեցնել, իսկ այլ ուղղություններով համաձայնությունները կյանքի չեն կոչվում: Տեղի են ունենում աշխարհաքաղաքական նոր փոփոխություններ, որոնք էսկալացիայի պարարտ հոդ են ստեղծում: Այս տարբերակի դեպքում այլընտրանքները երկուսն են: Առաջին դեպքում՝ պատերազմի սանձազերծում անորոշ ելքով, որին կարող է, վատագույն դեպքում, հետևել ողջ տարածաշրջանի անկայունությունը, ՀՀ պետականության կորուստը և այլն: Երկրորդ այլընտրանքը հիբրիդային գործողություններն են միմյանց նկատմամբ, որը կարող է ցանկացած պահի վերանել բաց ռազմական գործողությունների և հրթիռային կամ դրոնային թիրախավորումների՝ առանց միմյանց տարածք ներխուժելու:
3. **Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն (լնացում)** – Այս կանխատեսման դեպքում ստատուս քվոն պահպանվում է երկար ժամանակ, էական սրացումներ չեն լինում, սակայն նաև որևէ առաջընթաց չի գրանցվում ոչ միայն խաղաղության համաձայնագրի, այլև սահմանագծման և սահմանազատման աշխատանքների և ենթակառուցվածքների ապաշրջափակման բանակցություններում: Այս դեպքում էլ կարող են լինել բազմաթիվ այլընտրանքային զարգացումներ, որոնք կախված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին՝ կողմերի ազդեցությունից դուրս գտնվող գործոններից: Սակայն այս տարբերակը առավել ձեռնտու է Ադրբեյջանին, քանի որ ենթադրում է Հայաստանի դեմ կազմակերպված բոկադայի շարունակում և Հայաստանի տնտեսական զարգացման տեմպերի արհեստական սահմանափակում:

Հայաստանը պետք է պատրաստ լինի բոլոր երեք սցենարներին: Լավատեսական կանխատեսման համաձայն՝ անհրաժեշտ է պատրաստվել խաղաղության և հարաբերությունների զարգացման, հոռետեսականի համաձայն՝ պատրաստ լինել բոլոր ուղղություններով հակահարված տալ, իսկ լնացման սցենարին պատրաստվելու համար անհրաժեշտ է գտնել գոյություն ունեցող պայմաններում զարգացման հնարավորինս արդյունավետ այլընտրանքային ուղիներ: Տնային աշխատանքը չի կարող և չպետք է հիմնված լինի միայն պլան Ա-ի վրա: Բոլոր տարբերակներին նախապատրաստվելու համար հրամայական է Հայաստանի ներսում ենթակառուցվածքների ազգայնացումը, հզորացումը և մեծացումը:

• Խաղաղության խաչմերուկ

Տարածաշրջանում խաղաղ համագոյակցման և համագործակցության կարևորագույն հնարավորություն է ՀՀ կառավարության կողմից առաջարկված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը: Նախագծի առանցքային առաջարկը բոլոր ենթակառուցվածքների միաժամանակյա ապաշրջափակումն է՝ բազմաթիվ զուգահեռ և այլընտրանքային ճանապարհների տրամադրմամբ, որոնք կարող են տարանցիկ ուղիներ լինել ոչ միայն տարածաշրջանի, այլև՝ գլոբալ խաղացողների համար: Հիմնական տրամաբանությունը Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք ուղիների

ձևավորումն է, որոնց միջոցով հնարավոր կլինի մեկը մյուսին կապել տարածաշրջանով անցնող բոլոր ուղղությունները: Ընդ որում, խոսքը ոչ միայն ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներ մասին է, այլև հաղորդակների, խողովակների, էլեկտրաէներգիայի մալուխների և այլն: Սակայն «Խաղաղության խաչմերուկ» նախագծի առաջխաղացումը կախված է մի շարք գործոններից, որոնցից ամեն մեկն անհրաժեշտ է հետազոտել և վեր հանել հնարավոր այլընտրանքային լուծումների մեխանիզմները: Առաջարկի հիմնական խնդիրն այսօր այդ լուծումների վերաբերյալ համակողմանի ուսումնասիրությունների բացակայությունն է, որը, սակայն, հետազոտական կենտրոններին պատվիրակելու դեպքում կարճ ժամկետում հնարավոր է լրացնել:

«Խաղաղության խաչմերուկի» կարևորագույն հնարավորություններից մեկը երկաթուղային փոխադրման այլընտրանքներն են: Ի տարբերություն Ադրբեջանի կողմից առաջարկվող՝ Սյունիքով անցնող ճանապարհի, «Խաղաղության խաչմերուկ» նախագիծն առաջարկում է գործարկել միաժամանակ և՛ Սյունիքով անցնող Ադրբեջան-Նախիջևան, և՛ ՀՀ հյուսիսային հատվածով անցնող Բաքու-Ղազախ-Իջևան-Գյումրի-Կարս երկաթուղային ճանապարհները: Վերջինս «Միջին միջանցք» նախագծի ամենակարճ և տնտեսապես ամենաշահավետ ուղին է, որը հնարավորություն է տալիս ամենաարագ փոխադրումներն իրականացնել Չինաստանից Եվրոպա և հակառակ ուղղություններով: Այս երկաթուղային ճանապարհը մեր կողմից պայմանականորեն անվանվել է «Հայաստանի հյուսիսային երթուղի»*:



Նկարը՝ primeminister.am-ի

Հաջորդ խնդիրը Ադրբեջանական կողմի նախապայմաններն ու մաքսիմալիզմն են: Ադրբեջանական կողմը փորձ է անում Հայաստանի տարածքում «Չանգեզուրի միջանցքը» ներկայացնել որպես պատերազմի հետևանք և ապաշրջափակման մնացյալ գործընթացների

* «Հայաստանի Հյուսիսային երթուղի» տնտեսական հնարավորությունների մասին տես՝ աշխատանքի 3-րդ՝ «Տնտեսական բաղադրիչ» մասում:

նախապայման: Կարծում ենք՝ այս իրավիճակի հետ Հայաստանը պետք է աշխատի միաժամանակ երկու ուղղությամբ – փորձել թե՛ Ադրբեյջանի, թե՛ Թուրքիայի համար «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը դարձնել առավել հասկանալի և հետաքրքիր, միևնույն ժամանակ փորձել գտնել Մեղրիով անցող կապուղիների շահագործման կոմպրոմիսային եղանակ: Երկու հարցում էլ Հայաստանի համար բնական գործընկեր կարող են լինել ԱՄՆ-ն և ԵՄ-ը, որոնք իրենց գաղափարներով, մասնակցությամբ ու ներդրումներ

ով կարող են մոտեցնել հանգուցալուծումը: Այս ամենին զուգահեռ, հղում անելով առաջին գլխում բերված մեր դատողություններին, ուզում ենք ևս մեկ անգամ շեշտել Հայաստանի դիմադրունակության ավելացման նախապայմանը: ՀՀ ՁՈւ-ն պետք է ի վիճակի լինեն պաշտպանել երկրի տարածքը հնարավոր ոտնձգություններից և դրանով իսկ հնարավոր դարձնել բանակցային գործընթացի դրական ելքը:

Միևնույն ժամանակ, թե՛ Մեղրիով անցող կապուղիների, թե՛ ավելի լայն՝ «Խաղաղության խաչմերուկի» համատեքստում անհրաժեշտ է խորհրդակցություններ անցկացնել կառավարիչ ընկերության միջազգային բնույթի (միջազգային, բազմաթիվ մասնակիցներով կոնցեսիայի) վերաբերյալ՝ չբացառելով նաև այդ կազմակերպությունում թուրքական ու ադրբեյջանական որոշակի շահաբաժնային մասնակցությունը:

• Ոչ բլոկային քաղաքականություն

Ռուսաստանի կողմից 2022 փետրվարից սկսած Ուկրաինայի տարածք ներխուժման հետևանքով աշխարհում և տարածաշրջանում սկսել ու շարունակվում են գլոբալ ուժային և աշխարհակարգային փոփոխություններ և վերադասավորումներ: Գնալով առավել ակնհայտ է դառնում, որ Հայաստանի՝ տասնամյակներ շարունակ կառուցած անվտանգային ռազմավարությունները և ճարտարապետությունը չեն աշխատում և չեն աշխատելու: Հայաստանը պարտավոր է արձագանքել իր շրջապատում տեղի ունեցող փոփոխություններին, հարմարվել դրանց և պրոակտիվ կերպով կառուցել նոր ճարտարապետություն: Մեր կարծիքով՝ Հայաստանի առջև ծառացած արտաքին քաղաքական խնդիրները հնարավոր չէ լուծել միաժամանակյա մեկ ռազմավարության շրջանակներում: Ըստ այդմ, Հայաստանի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունները կարող են տարբերվել միմյանցից՝ տեղ թողնելով, պայմանական ասած, ռազմավարական անորոշության (strategic ambiguity) համար: Հաշվի առնելով թե՛ այս, թե՛ մեր նախորդ աշխատության մեջ նշված՝ Ռուսաստանից Հայաստանի հիմնական կախվածությունների նվազեցման ու ռուսական ինտեգրացիոն գործընթացներում Հայաստանի մասնակցության աստիճանի նվազեցման հրամայականը¹, Հայաստանի անմիջական հարևանության վերոնկարագրյալ իրավիճակը, կարծում ենք՝ Հայաստանի կարճաժամկետ ռազմավարությունն անհրաժեշտ է կառուցել ոչ բլոկային արտաքին քաղաքականության սկզբունքների վրա: Այդ սկզբունքները տարածել ՀԱՊԿ-ից և ԱՊՀ-ից Հայաստանի դեփնտեգրացիայի գործընթացի շարունակության, նոր տարածաշրջանային քաղաքականության իրացման (0 խնդիրներ հարևանների հետ) և

¹ Տես՝ Հայաստանի Հանրապետության հիմնական կախվածությունները Ռուսաստանի Դաշնությունից. սպառնալիքներ և լուծումներ: Երևան 2025

Ռուսաստանի ու այլ ուժային կենտրոնների հետ նոր տեսակի հարաբերությունների կառուցման վրա:

- **Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ուժային կենտրոններ - Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ, Չինաստան**

Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ուժային կենտրոնների հետ Հայաստանի հարաբերությունները ենթակա են համապարփակ վերաբժնորման: Ռուսաստանակենտրոն արտաքին քաղաքականությունը կամ արտաքին քաղաքականությունն՝ ուղղված միայն մեկ կենտրոնի շուրջ ինտեգրացիա կառուցելուն, 1991-2025 թվականների ընթացքում ակնհայտորեն ձախողվել է: Այժմ Հայաստանն, առավել, քան երբևէ, կարիք ունի աշխատելու իր արտաքին քաղաքականության բազմազանեցման, ուժային կենտրոնների հետ հավասարահետ հարաբերությունների կառուցման և նոր ուղղությունների ակտիվացման վրա:

Հայաստան-Ռուսաստան

Հայ-ռուսական փոխհարաբերություններում ահռելի է տնտեսական գործոնի դերը: Տարիներ շարունակ ռուսական կապիտալի ներկայացուցիչները հաստատվել են Հայաստանում: Շատ հաճախ նրանք ձեռք են բերել ամբողջական ոլորտներ ներառող կազմակերպություններ, որոնք օբյեկտիվ պատճառներով եղել են մենիշխանական: Նման ոլորտներից են երկաթուղին, էլեկտրաէներգիայի բաշխումը (աշխատանքը գրելու ընթացքում այս ոլորտում տեղի են ունենում ակտիվ փոփոխություններ, որոնք, կարծես, բերում են ՀԷՑ ազգայնացմանը), գազի մատակարարումը և այլն: Բնականաբար, ակտիվների ձեռքբերման հետ մեկտեղ, ռուսական տարբեր կազմակերպությունների ձեռքն են անցել նաև ենթակառուցվածքները: Մեծ են նաև առաջնային պարենային մթերքների՝ ՌԴ-ից ներմուծման ծավալները: Մասնավորապես, ցորենը և բուսական յուղը վերջին 2 տարում գրեթե ամբողջությամբ ներմուծվել են ՌԴ-ից, իսկ շաքարավազի տեսակարար կշիռը 2023թ. եղել է 81.9 տոկոս: Եթե այս ամենին գումարում ենք նաև ԵԱՏՄ գործոնը, որը Հայաստանից արտահանման գլխավոր ուղղությունն է, ակնհայտ է դառնում ներկա պահին ՀՀ տնտեսական տոտալ կախվածությունը Ռուսաստանից: Դա իր ուղիղ ազդեցությունն ունի երկու պետությունների քաղաքական փոխհարաբերությունների վրա: Ռուսաստանը Հայաստանի հետ փոխհարաբերություններում լայնորեն օգտագործում է այս կախվածությունը: Այսպես, Ռուսաստանի կողմից տնտեսական գործոնը մշտապես շահարկվում է որպես Հայաստանի եվրաինտեգրման գործընթացի արգելակման պատճառ: Ռուսաստանը պարբերաբար, ըստ քաղաքական անհրաժեշտության, խնդիրներ է հարուցում ՀՀ տնտեսվարողների համար՝ արտահանվող կամ տարանցիկ փոխադրվող բեռների նկատմամբ, հայկական արտադրանքը երբեմն իրացման չնորմավորված, սակայն կառավարվող խնդիրների է բախվում ռուսական շուկայում, և

այլն: Ընդհանրապես, Ռուսաստանից Հայաստանի կախվածությունների վերաբերյալ մեր մտքերը առավել մանրամասն ներկայացրել ենք նախորդ մեր աշխատության մեջ:²

Թեև Ադրբեջանի և Թուրքիայի հետ ներկայումս Ռուսաստանը որոշ խնդիրներ ունի, սակայն, աշխարհաքաղաքական և տարածաշրջանային իրողություններից ելնելով, կարելի է կանխատեսել, որ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում մեր տարածաշրջանում Ռուսաստանի գերակա գործընկերները կշարունակեն մնալ Ադրբեջանը և Թուրքիան: Անկախ տնտեսական գործոնի կարևորությունից՝ ՀՀ քաղաքական շահերի իրացման տեսանկյունից ՌԴ հետ հույսեր կապելն անթույլատրելի է, ինչը ապացուցվեց 2020-2023թթ., երբ ՌԴ հովանոցի ներքո անվտանգային համակարգը չաշխատեց ոչ միայն Ղարաբաղի, այլև, նույնիսկ, ՀՀ անվտանգության ապահովման համար:

Սակայն սա չի նշանակում, թե պետք է Հայաստան-Ռուսաստան փոխհարաբերություններում զարգացնել հակամարտության տրամաբանություն: Տնտեսական համագործակցության որոշակի մակարդակի պահպանումն այս պահին Հայաստանի համար այլընտրանք չունի: Ընդ որում, շատ կարևոր է նշել, որ խիստ պատժամիջոցների պայմաններում Ռուսաստանը ևս այսօր շահագրգռված է այդ հարցում: Բացի այդ, Հայաստանում ռուսական կապիտալով աշխատող կազմակերպությունները հիանալի լծակ են փոխադարձ համաձայնություններ ձեռք բերելու հարցում: Խոսքն այն մասին է, որ ռուսական կազմակերպություններն աշխատում են ՌԴ-ում ընդունված բիզնես-վարքագծի կանոններով՝ հաճախ չպահպանելով և չկատարելով ոչ միայն իրենց պայմանագրային պարտավորությունները, այլև, որոշակիորեն, քաղաքական նպատակներով թույլատրելի սահմանաչափով շրջանցելով Հայաստանում գործող կարգավորումները: Որպես օրինակ կարելի է հիշել 2018թ. «Հարավ-կովկասյան երկաթուղի» ՓԲԸ աշխատանքում հայտնաբերված բազմաթիվ թերացումների գործը: Այս փաստերը թույլ են տալիս ավելի ամուր դիրքերից բանակցել Ռուսաստանի հետ՝ քաղաքական ազատություններն իրացնելիս տնտեսական խնդիրներից խուսափելու նկատառումներով: Միաժամանակ, Հայաստանի համար գերակա նպատակ և ամենօրյա աշխատանքի ուղղություն պետք է լինի տնտեսական «լուռ» դիվերսիֆիկացումը՝ պահպանելով արարողակարգային հարաբերությունները Ռուսաստանի հետ: Սա, մի կողմից, հնարավորություն կտա շարունակել աշխատել Ռուսաստանի և նրա կողմից ձևավորված ու կառավարվող բազմակողմանի նախագծերում, իսկ մյուս կողմից՝ հետևողական աշխատանքի միջոցով հնարավոր կլինի ժամանակի ընթացքում մեղմել Ռուսաստանից տնտեսական կախվածությունը: Ռուսաստանից Հայաստանի կախվածությունների նվազեցումը պետք է լինի քաղաքական բացարձակ առաջնահերթություն և տարիների հետևողական, պլանավորված աշխատանք: Տնտեսական դիվերսիֆիկացիայի մասին ավելի մանրամասն՝ տես ստորև:

Հայաստան-ԱՄՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ երկխոսությունը ևս ընդգրկում է տարբեր ոլորտներ, որոնցից են էներգետիկ ենթակառուցվածքները, տնտեսությունը, ռազմական

² Հայաստանի Հանրապետության կախվածությունները Ռուսաստանի Դաշնությունից. սպառնալիքներ և լուծումներ, Երևան, 2025

համագործակցությունը և այլն: 2025թ. հունվարի 14-ին ստորագրված ՀՀ-ԱՄՆ ռազմավարական գործընկերության կանոնադրությունը աշխատանքի մեծ դաշտ է բացում: Չափազանց կարևոր է, ինտենսիվ լոբբինգի միջոցով, նոր վարչակազմի հետ այս փաստաթղթի իրացման հարցում համաձայնությունների ձեռքբերումը: Կանոնադրության առանձին կետերում նշված աշխատանքները պահանջում են հետագա մանրակրկիտ պլանավորում և հերթագայության սկզբունքով իրացում, ինչի շուրջ անհրաժեշտ է փորձել համաձայնությունների հասնել օր առաջ: ՀՀ-ԱՄՆ համագործակցության տնտեսական և անվտանգային ոլորտներին ուղղակիորեն առնչվող ծրագիր կարող է դառնալ էներգետիկ ոլորտում համագործակցությունը, մասնավորապես, ԱՄՆ կողմից Մեծամորի ատոմակայանի ռեակտորի մոդիֆիկացումը ու վառելիքի տրամադրումը, ապա և՛ մոդուլային ատոմակայանների կառուցումը Հայաստանում և հետագա շահագործման գործընթացում ԱՄՆ ներուժի ներգրավումը: Այս ուղղությամբ ևս նախկին վարչակազմի օրոք կատարված աշխատանքներն անհրաժեշտ է վերբեռնել և ավելի մեծ թափ հաղորդել դրանց: Ցանկալի կլինեք, որ Հայաստանի իշխանությունն օր առաջ հայտարարեք վերջնական որոշման և Հայաստանում ամերիկյան ատոմային կայանների կառուցման մեկնարկի մասին:

Կարևոր է նաև, որպես ռազմավարական նպատակ, Հայաստանի համար ԱՄՆ կողմից (MNNA Major non NATO Ally) հիմնական ոչ ՆԱՏՕ անդամ դաշնակից կարգավիճակի տրամադրումը: Այս նպատակի իրացմանը պետք է ուղղել բոլոր հնարավոր քաղաքական և այլ գործիքակազմերը, որոնք կլինեն Հայաստանի կամ դրա դաշնակիցների տրամադրության տակ: Այս կարգավիճակի ստացումը էականորեն կհեշտացնի ՀՀ-ԱՄՆ կապի հետագա ամրապնդումը ինչպես նաև հարաբերությունների հետագա խորացումը մի շարք այլ արևմտյան պետությունների հետ:

Վերադառնալով ռազմական համագործակցության ոլորտին՝ հարկ է նկատել, որ այս հարցում համաշխարհային ակնհայտ առաջատարը Միացյալ Նահանգներն է: Ռազմական տեխնոլոգիաների տեսական և կիրառական ժամանակակից զարգացումները, նոր սերնդի տեխնոլոգիաների մշակումը, դրանց ներդրումը և արդյունքների կապիտալացման լավագույն հնարավորությունները Երկիր մոլորակում ի կատար են ածվում կամ ԱՄՆ-ում, կամ՝ ԱՄՆ մասնակցությամբ: Բավական է նշել միայն, որ 2024թ. ԱՄՆ ռազմական բյուջեն կազմել է 886.3 մլրդ, իսկ արտահանվող ռազմական միջոցների ընդհանուր ծավալը՝ 318.7 մլրդ ԱՄՆ դոլար: Հետևաբար, բանակի վերափոխման, ՀՀ ռազմական հզորության ամրապնդման, տարածաշրջանի խախտված ռազմական հավասարակշռության վերականգնման համար գերակա խնդիրներից մեկը պետք է լինի ԱՄՆ ռազմարդյունաբերության ոլորտի տեխնոլոգիաներին, հնարավորության սահմաններում, հասանելիություն ապահովելը, դրա մակարդակի շարունակական զարգացումը, ԱՄՆ հետ ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության ծրագրերի զարգացումը և իրականացումը, ՀՀ-ԱՄՆ ռազմական համագործակցության՝ բոլոր ենթաուղղություններով խթանումը: Դրանք ներառում են ռազմաուսումնական համագործակցության հետագա ծավալումը, ՀՀ բանակի բարեփոխումների գործընթացում ԱՄՆ-ից հարյուրավոր խորհրդականների, մարզիչների, ուսուցիչների, հրահանգիչների հրավերը և աշխատանքներում ներգրավումը, հայ մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով ԱՄՆ համապատասխան հաստատություններ գործուղման հնարավորությունների ընդլայնումը և

գործընկերության բոլոր ուղղություններով նախաձեռնությունների ձևավորումը, խթանումը, զարգացումը, այս ամենին հետևողական ուշադրությունը:

Սակայն Միացյալ Նահանգների հետ համագործակցությունն անհրաժեշտ է ընդլայնել ոչ միայն ռազմական ուղղությամբ: Քաղաքական նշանակության հարցերի առաջնդման նպատակով շատ մեծ նշանակություն ունի ԱՄՆ քաղաքական դաշտի հնարավորություններից օգտվելը: Մինչ այժմ յոբբինգի հնարավորությունները օգտագործվել են ԱՄՆ հայկական սփյուռքի յոբբինգային կառույցների կողմից (հիմնականում՝ AAA և ANCA): Սակայն ՀՀ և Սփյուռքի դիրքորոշումները ոչ միշտ են հարյուր տոկոսով նույնական: Նման իրավիճակները կառավարելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել հայաստանյան կազմակերպությունների ներկայացուցչություններ ԱՄՆ-ում: Մեկ այլ կարևոր նշանակություն ունի ունիվերսալ յոբբինգային կազմակերպության վարձակալումը, որը մշտական հիմունքներով կապաշտպանի ՀՀ շահերը ԱՄՆ օրենսդիր և գործադիր մարմիններում: Ադրբեջանը և Թուրքիան տասնյակ տարիներ է արդեն, ինչ օգտագործում են այս միջոցը: Լոբբիստական կազմակերպություններին զուգահեռ, արտակարգ կարևոր նախաձեռնություն ենք համարում Վաշինգտոնում հայաստանյան մտակենտրոնի կամ դրա մասնաճյուղի հիմնումը և առաջնդումը, ինչը հնարավորություն կտա հավելյալ ազդեցության մեխանիզմներ գեներացնել Վաշինգտոնում որոշումների կայացման վրա:

Հայաստան-Ֆրանսիա

Հայաստան-Ֆրանսիա քաղաքական փոխհարաբերությունները զարգանում են մեծ ինտենսիվությամբ: Հարկ է նկատել, որ այս դեպքում առկա է համակարգային գործընթաց, ինչի ցուցանիշն է, օրինակ, այն, որ Ֆրանսիայի քաղաքական դաշտի բոլոր դերակատարները ՀՀ նկատմամբ ունեն համադրվող մոտեցումներ: Սա ենթադրում է, որ քաղաքական կոնյուկտուրայի ցանկացած փոփոխության դեպքում ՀՀ հետ փոխհարաբերությունները շարունակելու են լինել բարեկամական և զարգանալ՝ ըստ որոշակի տրամաբանության: Այս փոխհարաբերությունների զարգացման հարցում կարևոր նշանակություն ունի ՀՀ և ՖՀ միջև ռազմավարական գործընկերության փաստաթղթի պատրաստումը և ստորագրումը: Վրաստանի և ԱՄՆ-ի օրինակով, Ֆրանսիայի հետ ևս բազմաոլորտ համագործակցության փաստաթղթի գոյությունը հնարավորություն կստեղծի որակական նոր մակարդակի հասնելու նպատակադրումներ կատարել և իրացնել: Մյուս կողմից, հարկ է նկատել, որ Ֆրանսիայի հետ փոխհարաբերությունների առանձնահատուկ մակարդակը հնարավորություն է տալիս ակնկալել ռազմավարական դաշինք կնքելու՝ ավելի բարձր մակարդակի փաստաթուղթ:

Ֆրանսիայի հետ հարաբերությունները կարող են որոշակի ազդեցություն գործել նաև ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների վրա: Վիզաների ազատականացման հարցում Ֆրանսիայի մտահոգությունները փարատելը և նրա անվերապահ աջակցությունն ստանալը կարևոր խթան կհանդիսանա գործընթացը կարճ ժամկետում իրականացնելու համար: Բացի այդ, Ֆրանսիայի միջնորդությունը կարելի է ստանալ թե՛ իր սեփական, թե՛ Արևելյան Եվրոպայի երկրների փորձը Հայաստանի բանակի վերափոխման տրամաբանությունում կիրառելու հարցում: Ֆրանսիան կարևոր գործընկեր կարող է լինել նաև Էներգետիկայի, կապի, բանկային, գյուղատնտեսության ու թեթև արդյունաբերության ոլորտներում եվրոպական չափանիշներին համապատասխանեցման հարցերում Հայաստանի կողմից կատարվող աշխատանքներին աջակցություն տրամադրելու

հարցում: Եվրախնտերգրման գործընթացի՝ նշված բոլոր և այլ ուղղություններում աշխատանքների շարունակական կոորդինացումը ֆրանսիացի գործընկերների հետ կարող է ոչ միայն մեծ արդյունավետություն ապահովել, այլև կանխատեսելի դարձնել շարունակականությունը և եվրոպացի գործընկերների կողմից փոխադարձելիությունը:

Հայաստան-Չինաստան

Մեծ ներուժ ունի ՀՀ-Չինաստան քաղաքական-տնտեսական փոխհարաբերությունների զարգացման տեսլականը: Անկախության 33 տարվա ընթացքում չինական ուղղությունը մշտապես բնութագրվել է որպես մեծ հնարավորությունների ուղղություն, միաժամանակ, երբեք չեն կատարվել այդ հնարավորությունների համապարփակ գնահատման, պլանավորման և քարտեզագրման աշխատանքներ: ԱՄՆ նոր նախագահ Թրամփի և նրա վարչակազմի ներկա արտաքին քաղաքական կուրսը պարտադրում է որոշակի զգուշավորություն հանդես բերել Չինաստանի հետ հարաբերությունների զարգացման հարցում: Սակայն, մյուս կողմից, հետպատերազմյան տարածաշրջանում, կապված ենթակառուցվածքների հնարավոր ապաշրջափակման և «Միջին միջանցք» նախագծի մի հատվածի՝ ՀՀ տարածքով հնարավոր անցման հետ, հայ-չինական համագործակցության մակարդակի ավելացման որոշակի հնարավորություններ են ձևավորվել՝ համադրված հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման տեմպի՝ բացառապես ամերիկյան կողմից նվազեցմամբ: «Միջին միջանցք» կամ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծերին Հայաստանի մասնակցությունը նպատակահարմար կարող է լինել չինական կողմի տեսանկյունից, եթե ճանապարհը Հայաստանից գնում է Թուրքիա. սա կարող է դիտարկվել թե՛ որպես պահեստային հզորություն, թե՛ որպես Չինաստան-ԵՄ հնարավոր ամենակարճ ճանապարհ: Չինաստանի համար կարող է հետաքրքիր լինել նաև ցամաքային ճանապարհի Իրան-Հայաստան-Վրաստան հանգույցը, հաշվի առնելով, որ Կարմիր ծովով և Սուեզի ջրանցքով բեռնափոխադրման հետ կապված խնդիրները էականորեն բարդացրել են ծովային ճանապարհների ներուժը:

Այս ուղղությամբ գլխավոր աշխատանքը իրավիճակի առաջնային գնահատման և ռազմավարական պլանավորման մեջ է: Հայ-չինական քաղաքական փոխհարաբերությունները աշխատանքային հուն ուղղորդելու համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակով կատարել պլանավորում, ձևավորել աշխատանքային մարմիններ և ստեղծել համապատասխան հիմքեր՝ երկկողմանի պլատֆորմի բազայով համագործակցաբար աշխատելու համար: Անհրաժեշտ է սկսել քաղաքական խորհրդակցություններ՝ տարբեր ոլորտներում հարաբերությունների բարելավման, խորացման ու ենթակառուցվածքային ծրագրերում համագործակցության մասին: Ընդ որում, սա չինական կողմի համար ևս կարող է քաղաքական և տնտեսական հետաքրքրություն ներկայացնել:

Մեկ այլ կարևոր ուղղություն է կրթական հաստատություններում Չինաստանի և չինարենի մասնագետների պատրաստությունը: Եթե ՀՀ-ում խոր ավանդույթներ կան թուրքագիտության, իրանագիտության, արևելագիտության և այլ բնագավառներում, ապա չինագիտությունը (ինչպես նաև՝ ռուսագիտությունը) թերագնահատված են: Այս ուղղություններով մասնագետների պատրաստումը կարող է ապագայում ՀՀ արտաքին քաղաքականության մեջ ավելի ռացիոնալ մոտեցումներ ապահովել: Սույն աշխատանքը գրելու ժամանակահատվածում սկսել են մտքեր քննարկվել Հայաստանի կողմից ՇՀԿ-ում ավելի ակտիվ դերակատարում ստանալու առնչությամբ: Եթե այդ դերակատարությունը չի սահմանափակելու Հայաստանի այլ ոլորտներում խորացվող

համագործակցությունները և բարերար ազդեցություն է ունենալու ենթակառուցվածքների զարգացող քննարկումներում Հայաստանի դիրքերի վրա, ապա, կարծում ենք, ՇՀԿ-ում Հայաստանի ավելի ակտիվ մասնակցությունը կարևոր նախաձեռնություն է:

• Եվրոպա և Եվրամիություն

Լինելով եվրոպական քաղաքակրթության մաս՝ ՀՀ համար եվրաինտեգրումը բնական-օրգանական ընտրություն է, որի ուղղությամբ շարժը հանգեցնում է բնականոն զարգացման: Ըստ այդմ, եվրաինտեգրման ժամանակակից միտումներն իրենց ետևից քաշում են տարբեր ոլորտներում առաջընթացի քիչ նկատելի դրսևորումները: Մասնավորապես, 2023թ. ՀՀ-ԵՄ առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 2.7 մլրդ. ԱՄՆ դոլար: Այս ցուցանիշը նախորդ տարվանից ավել է 17.1 տոկոսով: Ընդ որում, մասնագետները նշում են, որ ԵՄ բոլոր երկրների հետ առևտրաշրջանառության աճի հնարավորություն կա: Անշուշտ, այս հարցում մեծ դերակատարում կարող է ունենալ ՀՀ եվրաինտեգրման գործընթացի շարունակականությունը: Հայաստանը հասել է մի կետի, որից անդին ԵՄ հետ հարաբերություններում քննարկելի է խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը՝ որպես ասոցացման մաս: Սա նշանակում է, որ Հայաստանն արդեն պիտի ընտրություն կատարի ազատ առևտրի երկու համակարգերի՝ ԵԱՀԵՄ և ԵՄ միջև, քանի որ ոչ միայն քաղաքական առումով, այլև, նույնիսկ, զուտ տեխնիկապես, այս համակարգերը համադրել հնարավոր չէ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է արձանագրել նաև, որ առանց Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացման՝ իրատեսական չեն ԵՄ-ի հետ արդյունավետ մաքսային ինտեգրացիոն գործընթացների մասին խոսակցությունները: Ավելին, այդ խոսակցությունները տեղին են, եթե կա նախապես բանակցված և կարճաժամկետ իրագործելի գործողությունների պլան, որը կհանգեցնի Հայաստանի կարողությանն՝ անդամակցելու DCFTA-ին:

ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների զարգացման հարցում մեծ ներուժ ունեն նաև փոխհարաբերությունները Հունաստանի, Կիպրոսի, Նիդերլանդների և Հայաստանի հետ համադրելի շահեր ունեցող այլ պետությունների հետ: Սակայն ԵՄ ոչ բոլոր երկրների հետ են հարաբերությունները կայուն զարգանում: Պետությունների մի մասի հետ գործակցությունն ակնհայտորեն պասիվ է: Խոսքն առաջին հերթին Բելգիայի, Չեխիայի, Լեհաստանի, Սլովակիայի, Ավստրիայի, Բուլղարիայի և Ռումինիայի մասին է: Այս ուղղությունները կարևոր և հետաքրքիր են քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտներում երկկողմ սերտ համագործակցություն ծավալելու իմաստով: Այս պետությունների հետ համագործակցությունն անհրաժեշտ է շարունակաբար խորացնել՝ հիմքում դնելով փոխշահավետ ծրագրերը, որոնց անընդհատ դուրսբերման և առարկայացման համար պետք է լինի ԱԳ նախարարության առանձին ստորաբաժանում: Ընդհանրապես, կենտրոնացումը արևելյան և կենտրոնական Եվրոպայի երկրների վրա, հատկապես՝ բանակի անցումային գործընթացներում, մենք համարում ենք խիստ հեռանկարային:

Մեկ այլ խնդիր է ԵՄ այն երկրների հետ հարաբերությունների զարգացումը, որոնք ինչ-ինչ պատճառներով դժկամությամբ են վերաբերում Հայաստանին: Ներկա աշխարհաքաղաքական պայմաններում այդ պատճառները երկուսն են՝ քաղաքական (որի օրինակը Հունգարիան է) և տնտեսական-էներգետիկ (օրինակ, Իտալիա): Ակնհայտ է, որ նշված երկրների հետ հարաբերություններում խնդիրները պայմանավորված են Ադրբեյջանի գործոնով: Թեև այս

ուղղություններով աշխատանքներ տարվում են, սակայն անհրաժեշտ է արձանագրել ավելի դինամիկ առաջընթաց՝ հատկապես Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանը զուգընթաց: Բազմակողմանի դիվանագիտության հարթակներում և այս երկրների համար զգայուն հարցերում աջակցություն ցուցաբերելով՝ Հայաստանը պետք է կարողանա հաղթահարել առկա անջրպետները:

2025թ. փետրվարին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց քաղաքացիական նախաձեռնության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության՝ Եվրամիությանը միանալու գործընթացի մեկնարկի մասին» օրենքը: Ըստ այդմ, ՀՀ ձգտումները դեպի Եվրոպա այլևս ունեն փաստաթղթավորված հիմքեր: Հետևաբար, Հայաստանի կառավարության առջև կանգնած է եվրաինտեգրման գործընթացների շարունակականության ապահովման խնդիրը: Միջնաժամկետ հեռանկարում Հայաստանը կանգնելու է ընտրություն կատարելու հրամայականի առջև, քանի որ հնարավոր չէ շարունակել լինել ռուսական ինտեգրացիոն նախագծերի մաս և խորացնել եվրաինտեգրման քաղաքականությունը: Հայաստանը անհրաժեշտաբար ընդունելու է «ոչ բլոկային» զարգացման հայեցակարգ, որի արդյունքում այլևս չի անդամակցի ոչ միայն Ռուսաստանի ռազմական, այլև՝ տնտեսական նախագծերին, սակայն, ըստ հնարավորության (ինչը մենք համարում ենք այս պահին քաղաքականապես հնարավոր), կշարունակի արդյունավետ համագործակցել, օրինակ, ԵԱՏՄ հետ: Սա հնարավորություն կտա միաժամանակ ակտիվ համագործակցել ԵՄ հետ՝ խուսափելով ԵԱՏՄ կաշկանդող կարգավորումներից:

• Մերձավոր Արևելք և Կենտրոնական Ասիա

Մերձավորարևելյան պետությունների հետ փոխհարաբերությունները ընգրկում են աշխարհագրական փոխադարձ հետաքրքրություններ: «Խաղաղության խաչմերուկ» նախագծի շրջանակներում Պարսից ծոց-Սև ծով ճանապարհահատվածը, որը կարող է ներառել ավտոճանապարհ, երկաթուղի, խողովակաշարեր, մալուխներ և այլն, կապի այլընտրանքային հնարավորություններ կարող է ապահովել նաև Մերձավոր Արևելքի պետությունների համար: Չարմանալի չէ, որ արաբական մի շարք պետություններ հետևողականորեն բարձրացնում են ՀՀ հետ փոխհարաբերությունների մակարդակը: Ամենաբարձր մակարդակներում բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունենում, որոնց ընթացքում քննարկվում են տնտեսության, էներգետիկայի, գյուղատնտեսական ապրանքների արտահանման, բարձր տեխնոլոգիաների, առողջապահության, զբոսաշրջության, էլեկտրոնային կառավարման համակարգերի ոլորտներում գործարար և առևտրային համագործակցությունը խթանելու վերաբերյալ:

Մերձավորարևելյան ուղղությամբ փոխհարաբերությունների հետագա զարգացումը առանցքային նշանակություն ունի մի քանի առումներով:

1. Արաբական Միացյալ Էմիրությունները վերջին տարիներին դարձել է ՀՀ տնտեսական դիվերսիֆիկացման գլխավոր ուղղություններից մեկը: 2023թ. ԱՄԷ-ն, առաջին անգամ շրջանցելով Ռուսաստանին, 100.765,7 մլն. դրամ ուղղակի ներդրումների ծավալով դարձավ ՀՀ ամենախոշոր ներդրողը: Սակայն հարկ է նկատել, որ ԱՄԷ հետաքրքրությունը տարածաշրջանում չի սահմանափակվում Հայաստանով: Կատարված ներդրումների ծավալով 2025թ. արաբական այդ պետությունը հավանում է դառնալ խոշորագույն ներդրող Վրաստանի պատմության մեջ՝ 5.5 մլրդ դոլար ծավալով: Այս ներդրումն ամենևին արաբական պետությունների և Վրաստանի

համագործակցության առաջին օրինակը չէ: Տարածաշրջանով հետաքրքրությունը և՛ ԱՄԷ, և՛ մերձավորարևելյան այլ պետությունների համար կարևորվում է նաև որպես տարանցիկ ճանապարհ:

2. Տարածաշրջանում ռուս-թուրք-ադրբեջանական հեգեմոնիայի մարտահրավերներին համարժեք պատասխանելու լավագույն հնարավորությունը դերակատարների քանակի ավելացումն է: Այս առումով կարևոր են ոչ միայն Իրանի հետ սերտ համագործակցությունը, Եվրամիության դիտորդների տեղակայումը, Եվրահնտեզրման գործընթացի ակտիվացումը և ՀՀ-ԱՄՆ ռազմավարական համագործակցության հաստատումը, այլև արաբական աշխարհի ներգրավումը՝ բազմազանեցման խնդիրն առավել ռացիոնալ հիմքերի վրա դնելու, ինչպես նաև անվտանգային միջավայրը տնտեսական բաղադրիչով շաղկապելու տրամաբանությունում:

3. Մերձավոր Արևելքը Հայաստանի համար գրավիչ է նաև որպես արտահանման այլընտրանքային ուղղություն: Բանի որ օբյեկտիվ պատճառներով Եվրամիության շուկան կարճաժամկետ հեռանկարում մեծ հասանելիություն ունենալ չի կարող, իսկ ռուսական շուկայի ուղղությամբ բազմաթիվ վտանգներ են գոյանում, ապա Հայաստանի արտադրության համար սպառման լավագույն ուղղություններից մեկը կարող է լինել Մերձավոր Արևելքը: Այս ուղղությունը նախ և առաջ շահավետ է լոգիստիկ և ընթացակարգային հասանելիության պատճառով: Մերձավորարևելյան շուկայում մեծ հետաքրքրություն կա հատկապես ՀՀ գյուղատնտեսական և թեթև արդյունաբերության ապրանքների նկատմամբ: Անշուշտ, այս շուկան ևս ունի իր առանձնահատկությունները, որոնց բավարարման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հիմնարար տնային աշխատանք:

4. Մերձավորարևելյան երկրների, հատկապես՝ արաբական աշխարհի դերը նշանակալի է նաև աշխարհաքաղաքական առումով: Բարիդրացիական հարաբերությունների զարգացումը և ընդլայնումը կարող է նպաստավոր հիմքեր ստեղծել նաև քաղաքական առումով Հայաստանի աջակցության շրջանակի մեծացմանը: Օրինակ, «Խաղաղության խաչմերուկ» նախագծի լոբբինգի հաջողության հարցում կարող է էական նշանակություն ունենալ Իրանից հարավ և հարավ-արևմուտք ընկած տարածություններում որոշումներ կայացնողների դիրքորոշումը: Արաբական աշխարհում էական դերակատարում ունեցող երկրների՝ Սաուդյան Արաբիայի, Կատարի, Բուվեյթի, Բահրեյնի, Օմանի, Իրաքի հետ երկկողմ հարաբերությունները կարող են ազդեցություն ունենալ «Խաղաղության խաչմերուկի» իրականացման հարցում: Թեև Սիրիայի նոր կառավարության հետ հարաբերություններում դեռևս զգուշավորություն է նկատվում, սակայն այդ երկրի վերականգնման հարցում ևս Հայաստանը կարող է իր դերակատարումն առաջարկել, հատկապես՝ հաշվի առնելով այդ երկրի հետ մեր պատմական ջերմ հարաբերությունները:

Անշուշտ, մերձավորարևելյան ուղղությամբ փոխհարաբերությունների զարգացումը պարունակում է նաև մի շարք բարդ խնդիրներ: Կարելի է նշել, օրինակ, Իսրայելի հետ փոխհարաբերությունների խնդիրը: Այն բանից հետո, երբ Իսրայելը 44-օրյա պատերազմում և դրանից հետո Ադրբեջանին մեծ աջակցություն ցուցաբերեց, ՀՀ-Իսրայել փոխհարաբերություններում նկատվող որոշակի դրական միտումները սառեցվեցին: Իսկ 2024 թվականին՝ Հայաստանի կողմից Պաղեստինի պետությունը ճանաչելուց հետո, կարելի է կանխատեսել, որ կարճաժամկետ հեռանկարում Իսրայելի հետ ջերմացման հավանականությունը չնչին է: Իսրայել-Իրան 12-օրյա պատերազմի առաջին իսկ օրը Իսրայելի գործողությունների դատապարտումը ևս մեկ անգամ վկայեց ՀՀ-Իսրայել հարաբերություններում առկա խնդիրների

մասին: Սակայն այս ուղղությամբ ևս անհրաժեշտ է փորձել գտնել համընկնող շահեր, առաջին հերթին, ընդհանուր գործընկերների գործոնի խաղարկմամբ (հիմնականում՝ Արևմուտքի պետություններ): Թրամփի վարչակազմի կողմից պարբերաբար հիշատակվող Աբրահամյան սկորդներն, ինչ-ինչ զարգացումների պարագայում, կարող են դառնալ Իսրայելի հեր հարաբերությունների զարգացման խողովակ:

Միջինասիական ուղղությամբ հարաբերությունները ներառված են ոչ միայն երկկողմ, այլև բազմակողմ համագործակցության ծրագրերում: Մասնավորապես, միջինասիական հանրապետությունների հետ Հայաստանն ընդգրկված է ԱՊՀ-ում, Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի հետ՝ ՀԱՊԿ-ում, իսկ Ղազախստանի և Ղրղզստանի հետ՝ նաև ԵԱՏՄ-ում: Այս իրողությունները մեծացնում են նշված պետությունների հետ փոխշահավետ համագործակցության ներուժը, ինչը, սակայն, ինչպես Չինաստանի դեպքում նշվեց, ունի գույքագրման, պլանավորման և իրացման խնդիր: Եթե Ղազախստանի հետ երկկողմ հարաբերությունները որոշակի թափ են հավաքել և զարգացման նշաններ են ցույց տալիս, ապա Ղրղզստանի և Տաջիկստանի հետ հարաբերություններում որոշակի լճացման նշաններ են երևում: Նույնը կարելի է ասել Ուզբեկստանի և Թուրքմենստանի հետ հարաբերությունների վերաբերյալ: Այնինչ, Թուրքմենստանը կարող է կարևոր դերակատարում ստանձնել Հայաստանին վառելիքի մատակարարման առումով: Մասնավորապես, արդեն հայտարարվել է, որ Հայաստանը դիտարկում է Թուրքմենստանից՝ Իրանի տարածքով, գազի մատակարարման հարցը: Սակայն մեծ հնարավորություններ կան նաև դիզելային վառելիքի, բենզինի, նավթի ներկրման առումով: Ղազախստանը կարող է հետաքրքիր լինել նաև ատոմակայանի վառելիքի՝ ուրանի և հացահատիկային կուլտուրաների ներկրման հարցում:

Միջինասիական տարածաշրջանը, որպես Մեծ Մերձավոր Արևելքին հարող տարածաշրջան, մեծ կարևորություն ունի, նախ և առաջ, աշխարհագրական առումով: Թեև, Թուրքմենստանի առանձնահատկություններից ելնելով, բավական բարդ է քաղաքական սերտ համագործակցություն ենթադրել, սակայն Չինաստանից և առավել արևելյան պետություններից դեպի Եվրոպա և հակառակ ուղղությամբ ճանապարհների հնարավոր երթուղիներ են Ուզբեկստան-Թուրքմենստան-Իրան-Հայաստան-Արաստան կամ Ուզբեկստան-Թուրքմենստան-Կասպից ծով-Ադրբեյջան-Հայաստան-Թուրքիա ուղղությունները: Այս երթուղիները, աշխարհաքաղաքական իրավիճակի որոշակի դասավորվածության պայմաններում, կարող են դիտվել որպես այլընտրանք բոլոր գոյություն ունեցող նախագծերին (Հյուսիսային միջանցք, Միջին միջանցք, ծովային ճանապարհ և այլն): Ի տարբերություն նշված նախագծերի՝ Հայաստանի կողմից առաջարկվող «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը կարող է ներառել նաև այս երկու նոր երթուղիները: Քաղաքական առումով, այս պետությունների հետ փոխհարաբերությունների մակարդակի շարունակական ամրապնդումը անհրաժեշտ ապահովագրության միջոց է՝ անկանխատեսելի զարգացումներին պատրաստ լինելու և դրանց արդյունքում հնարավորությունների բացվող պատուհաններից օգտվելու համար:

• Հնդկաստան

44-օրյա պատերազմից հետո հարաբերությունները Հնդկաստանի հետ ստացել են ռազմավարական բնույթ: Սա կապված է մի քանի աշխարհաքաղաքական իրողությունների հետ,

որոնց շարքում են Հնդկաստան-Իրան-Հայաստան-Վրաստան-Եվրոպա ճանապարհը, Ադրբեջան-Պակիստան և Թուրքիա-Պակիստան գործընկերային/դաշնակցային հարաբերությունները և այլն: Բավական է նշել, որ 2022-23 թվականներին ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների վեց այցելություն է եղել Հնդկաստան, այն դեպքում, որ նախորդ 15 տարում տեղի էր ունեցել ընդամենը հինգ նման այց: Դրան պետք է հավելել նաև այլ պաշտոնյաների այցերը, բազմաթիվ ոլորտներում համաձայնությունների ձեռքբերումները, առևտրաշրջանառության կայուն աճը (2021թ.- 216.131,5; 2022թ.- 358.594,6; 2023թ. -384.128,4 հզ. ԱՄՆ դոլար), ռազմական ոլորտում համագործակցությունը, միջազգային հարթակներում ՀՀ և Հնդկաստանի պաշտոնատար անձանց պարբերական հանդիպումները և այլն:

Այնուհանդերձ, Հայաստանի և Հնդկաստանի փոխհարաբերությունների զարգացման հարցում մեծ նշանակություն ունի նաև ոչ պետական մակարդակով համագործակցությունը: Այստեղ էական դեր կարող են խաղալ փորձագիտական կազմակերպությունները: Հնդկական մի շարք վերլուծական կենտրոններ, որոնց թվում են նաև պետական տարբեր կառույցների կողմից հիմնադրված անկախ կազմակերպությունները, արտաքին քաղաքական հետազոտությունների շարքում մեծ տեղ են հատկացնում ՀՀ-Հնդկաստան հարաբերություններին: Նրանց համար Հայաստանը, մասնավորապես, հետաքրքրություն է ներկայացնում աշխարհագրական տեղակայման, տարածաշրջանային քաղաքական գործընթացների, Թուրքիայի, Ադրբեջանի և Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների և այլ հարցերի համատեքստում:

Հնդկաստանի հետ փոխհարաբերությունների ջերմացման հարցում փոքր դեր չեն խաղում նաև ՀՀ եկող միգրանտները: Բացի բարձրագույն կրթության համար ՀՀ այցելող հնդիկներից, ինչն ունի դեռևս ՀՄՀ-ից եկող ավանդույթներ, այսօր արդիական է նաև հնդիկների՝ դեպի Հայաստան աշխատանքային միգրացիայի երևույթը: Այս ուղղությամբ ևս որոշակի դինամիկա գոյություն ունի: Այսպես, եթե 2021թ. ՀՀ-ում աշխատանքի թույլտվություն է ստացել ընդամենը 55 հնդկաստանցի, ապա 2022թ. այդ թիվը եղել է 530, իսկ 2023թ. ևս շուրջ 6 անգամ ավելացել է՝ 3200: Արդեն 2023թ. Հայաստանում Հնդկաստանի քաղաքացի աշխատանքային միգրանտները գերազանցել են կրթության համար ժամանածներին: Այս հոսքի կանոնակարգման նպատակով 2024թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց խստացնել Հնդկաստանի, Իրաքի և Եգիպտոսի քաղաքացիների համար ՀՀ տարածք մուտք գործելու ընթացակարգերը: Ըստ պաշտոնական մեկնաբանության՝ նպատակն է կանխել դեպի ՀՀ անօրինական միգրանտների հոսքը, որը բերում է մի շարք բացասական հետևանքների, այդ թվում՝ հանցագործությունների թվի աճի: Հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ մեծանում է անօրինական միգրանտների՝ ՀՀ տարածքը դեպի եվրոպական երկրներ տեղաշարժվելու համար տարանցիկ գոտու վերածելու հավանականությունը, ինչը խիստ բացասաբար կարող է անդրադառնալ ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման գործընթացի վրա: Ըստ ՀՀ ԱԱԾ տվյալների՝ 2024թ. հոկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ-ում անօրինական կերպով բնակվում է Հնդկաստանի 11.965 քաղաքացի:

Այնուամենայնիվ, կանխատեսումները ենթադրում են, որ Հնդկաստանից միգրացիոն հոսքերի կանոնակարգումը ապագայում բացասաբար չի անդրադառնա Հայաստան-Հնդկաստան բազմակողմ փոխհարաբերությունների զարգացման դրական դինամիկայի վրա: Առավել ևս, որ համագործակցության մեծ ներուժ դեռևս չի էլ սկսել իրացվել: Խոսքը գնում է այնպիսի ոլորտների մասին, ինչպիսին է շինարարությունը, որտեղ կարելի է ներգրավել հնդկական կազմակերպությունների, զբոսաշրջության ծավալների ավելացումը, որը հնարավոր է

իրականացնել ուղիղ չվերթների առկայության դեպքում, տնտեսական համագործակցության խթանումը՝ համապատասխան գործիքների միջոցով, և այլն: Սակայն Հնդկաստանի հետ համագործակցության ռազմական ուղղությունը վերջին ժամանակներում ամենաքննարկվողն է:

Ինչպես արդեն նշել ենք, 2022-2025թթ. Հայաստանը Հնդկաստանից շուրջ 1,5 մլրդ. ԱՄՆ դոլարի գնքի գնման պայմանագրեր է կնքել, որի արդյունքում դարձել է Հնդկաստանից խոշորագույն գնք գնողը: Բացի գնքի գնման ուղղությամբ աշխատանքները շարունակելուց, կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ ՉՈՒ անձնակազմին վերապատրաստման հնարավորություններ ընձեռնելը, որպեսզի հնդկական ռազմական տեխնիկայի կիրառման հնարավորությունները հասցվեն արդյունավետության առավելագույն մակարդակի: Մեկ այլ նշանակալի ձեռքբերում կլինի Հայաստանում որոշ զինատեսակների համատեղ արտադրություն կազմակերպելը: Ընդ որում, դա կարող է ոչ միայն ՀՀ ՉՈՒ կարիքների համար արտադրվող զինտեխնիկային վերաբերել, այլև, Հնդկաստանի այլ գործընկերների հետ կնքված պայմանագրերին համապատասխան, Հայաստանում արտադրման և արտահանման գործընթացներին: Այս առումով հնդկական կողմը կարող է շահել լոգիստիկայի և արտադրման ժամանակի մեջ, իսկ Հայաստանի համար սա կլինի միաժամանակ և՛ ներդրում, և՛ ռազմական արտադրության ոլորտում վարկանիշի աճ, և՛ արտահանման խթանման հնարավորություն:

Վերոնշյալ բոլոր գործընթացների պլանավորման և իրականացման կարևոր նախադրյալ կարող է լինել Հայաստանի և Հնդկաստանի միջև ռազմավարական համագործակցության պայմանագրի կնքումը: Նման փաստաթուղթը կարող է նախանշել երկու երկրների միջև տեղի ունեցող գործընթացների հիմնական վեկտորներն ու դրանց նպատակակետերը:

Արտաքին քաղաքականությունը չի սահմանափակվում նշված ուղղություններով, և համագործակցության ընդլայնման մեծ ներուժ կա նաև Միացյալ Թագավորության, Կանադայի, Ճապոնիայի և այլ երկրների հետ:

• Ամփոփում և առաջարկություններ

Արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման շարունակականությունը և, «ոչ բլոկային» տրամաբանությամբ, բազմակողմ համագործակցության վարումը անվտանգային ռիսկերի կառավարման և պետականության ամրապնդման հարցերում այլընտրանք չունեն: Հետևաբար, Հայաստանին անհրաժեշտ է ունենալ հորիզոնական հարաբերությունների բազմաթիվ ուղղություններ, որոնք կգարգանան և կխորանան՝ կախված յուրաքանչյուր պահի շահերի համընկնման մակարդակից: Այս տրամաբանությունը հաշվի առնելով՝ արտաքին քաղաքական քաղադրիչն ուսումնասիրելու արդյունքում ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները

1. Տարածաշրջանային քաղաքականությունում առաջնորդվել «բաց սահմանների» քաղաքականությամբ, որի իրագործման նպատակով պաշտոնական մակարդակում հայթուրքական սահմանի բացումը և հարաբերությունների կարգավորումը հայտարարել բացարձակ առաջնահերթություն: Միաժամանակ, այս տրամաբանությունը փորձել

օգտագործել նաև հայ-ադրբեջանական կարգավորման տարբեր ուղղություններում Թուրքիայի դրական մասնակցություն ունենալու համար:

2. Մշակել և բանակցել մեխանիզմներ՝ Վրաստանի հետ կնքված ռազմավարական համագործակցության պայմանագրի կետերը նոր իրավիճակում առաջ մղելու ուղղությամբ:
3. Ակտիվ կերպով պատրաստվել Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերությունների բոլոր սցենարներին՝ խաղաղության հաստատումից և տարածաշրջանային ենթակառուցվածքների ամբողջական գործարկումից մինչև հնարավոր նոր հակամարտություններ կամ իրավիճակի երկարաժամկետ սառեցում:
4. Իրականացնել «Խաղաղության խաչմերուկ» նախագծի առանձին բաղադրիչների տնտեսական և քաղաքական հետազոտություններ, որոնց արդյունքների կապիտալացման նպատակով անցկացնել միջոցառումներ (հանրային և փակ ներկայացումներ, շինարարական հանգույցի պլանավորման աշխատանքներ, միջազգային բանակցություններ և այլն):
5. Ծարունակաբար և հնարավոր ամենաբարձր տեմպերով իրականացնել տնտեսական «լուռ» դիվերսիֆիկացում՝ պահպանելով արարողակարգային հարաբերություններ Ռուսաստանի հետ:
6. Համաժամանակյա և ինտենսիվ լոբբինգ իրականացնել ԱՄՆ նոր վարչակազմի հետ՝ Հայաստան-ԱՄՆ ռազմավարական համագործակցության կանոնադրությունում առկա դրույթները իրականություն դարձնելու ուղղությամբ: Նույն շրջանակներում, ՀՀ բանակի և հատուկ ծառայությունների ծառայողների որակական հատկանիշները բարելավելու գործընթացներում փորձել ներգրավել բազմաթիվ հրահանգիչների և մարզիչների:
7. Նպաստել հայաստանյան քաղաքական և տնտեսական կազմակերպությունների կողմից ԱՄՆ-ում ներկայացուցչություններ ունենալու միտումներին, ինչպես նաև վարձակալել ԱՄՆ պրոֆեսիոնալ լոբբինգային կազմակերպություններ՝ Հայաստան-ԱՄՆ համագործակցության հարցերում ներգրավելու նպատակով:
8. Սեղմ ժամկետներում ավարտել Հայաստան-Ֆրանսիա ռազմավարական համագործակցության փաստաթղթի շուրջ աշխատանքները և սկսել այն իմպլեմենտացնել՝ միաժամանակ փորձելով հարաբերությունների մակարդակը հասցնել դաշնակցայինի:
9. Չինաստանի ուղղությամբ հարաբերությունների խորացման նպատակով կատարել ինստիտուցիոնալ մակարդակի պլանավորում, ձևավորել աշխատանքային մարմիններ և սկսել քաղաքական խորհրդակցություններ՝ տարբեր ոլորտներում հարաբերությունների բարելավման, խորացման ու ենթակառուցվածքային ծրագրերում համագործակցության վերաբերյալ: Դիտարկել Չինաստանի նախաձեռնած ինտեգրացիոն գործընթացներում առավել ակտիվ դերակատարություն ստանձնելու հնարավորությունը և դրա համատեղելիությունն այլ ուղղությունների հետ: Միաժամանակ, կրթական

հաստատություններում ստեղծել Չինաստանի ուսումնասիրության ստորաբաժանումներ:

10. Արտաքին գործերի նախարարությունում ձևավորել առանձին ստորաբաժանում՝ ԵՄ պասիվ երկրների հետ առանձին փոխշահավետ հիմքերի դուրսբերման աշխատանքներ իրականացնելու համար:
11. Ծարունակաբար ընդլայնել մերձավորարևելյան և միջինասիական պետությունների հետ հարաբերությունների մակարդակը, խթանել «մասնավոր-մասնավոր» ձևաչափով տնտեսական համագործակցությունն այս ուղղություններով, հատկապես, գյուղատնտեսության ոլորտում: Ուշադրություն դարձնել նաև այս ուղղություններով էներգետիկ ոլորտում համագործակցության ընդլայնման հնարավորություններին:
12. Անհապաղ սկսել Հնդկաստանի հետ բազմաոլորտ ռազմավարական համագործակցության փաստաթղթի պլանավորման շուրջ աշխատանքները: Բացի ռազմական ոլորտի տարբեր ուղղություններից, ուշադրություն դարձնել նաև քաղաքական և տնտեսական փորձագիտական կենտրոնների, զբոսաշրջության, կրթության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում համագործակցության ներուժի իրացման հնարավորություններին:

• **Օգտագործված գրականություն**

1. Աբրահամյան Է., Մարգարյան Ա., Քոչինյան Ա., Ներգեթյան Ա., Փոքր, ոչ բլոկային պետություն. ռազմավարության հայեցակարգային մոտեցումներ https://hcav.am/wp-content/uploads/2023/07/NSS_-final-_27.06.23-arm.pdf
2. Աճեմօղլու Տ., Ռոբինսոն Ջ., Ինչու են ձախողվում պետությունները, Եր.: Անտարես, 2018:
3. Թեհրանի համար կարևոր են Հարավային Կովկասի անվտանգությունը և հայ-ադրբեջանական հարաբերությունները. Իրանի ԱԳՆ <https://armtimes.com/hy/article/304880>
4. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը դժվարին, բայց անխուսափելի գործընթաց է. վերլուծություն <https://armenpress.am/hy/article/1210263>
5. Հայաստանն ու ԱՄԷ-ն պլանավորում են առևտրի, ներդրումների և ծառայությունների ազատականացման համաձայնագիր ստորագրել <https://armenpress.am/hy/article/1130910>
6. ՀՀ ԱԳՆ-ն դատապարտում է Իրանի դեմ միակողմանի հարձակումը. այն վտանգում է համաշխարհային խաղաղությունը <https://factor.am/901470.html>
7. ՀՀ վիճակագրական կոմիտե asmstat.am
8. ՀՀ և ԱՄՆ միջև ռազմավարական գործընկերության կանոնադրություն <https://www.mfa.am/hy/press-releases/2025/01/14/ARM-US-Charter/13032>
9. Հովհաննիսյան Ա., Հայաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը 2019-ին <https://shorturl.at/Dnu8t>
10. Դևոնդյան Ռ., Հայ-ռուսական հարաբերությունների աշխարհաքաղաքական ենթատեքստը <https://regst.wordpress.com/2020/02/24/hay-rusakan/>

11. Քոչինյան Ա., Խաղաղության համաձայնագիր, կամ երբեմն սիգարը ուղղակի սիգար է. մաս 1-ին <https://rcsp.am/entry/6778/xaxautyan-hamadzaynagir-kam-erbemn-sigary-uxaki-sigar-e-mas-1-in/>
12. Քոչինյան Ա., Ղևոնդյան Ռ., Հայաստանի Հանրապետության հիմնական կախվածությունները Ռուսաստանի Դաշնությունից. սպառնալիքներ և լուծումներ, Եր.: ԱԲՀԿ և ԻԲՄ, 2025:
13. Assessment of Armenia's Foreign Policy Towards U.S., EU and Russia's Regional Presence <https://www.specialeurasia.com/2025/01/16/armenia-us-eu-russia-politics/>
14. China Eyes Stronger Ties with Armenia, Highlights High-Tech Collaboration <https://caucasuswatch.de/en/news/china-eyes-stronger-ties-with-armenia-highlights-high-tech-collaboration.html>
15. Insights Beyond Borders: Turkey-Armenia relations through public eyes <https://hrantdink.org/en/activities/projects/turkey-armenia-relations-programme/4276-insights-beyond-borders-turkey-armenia-relations-through-public-eyes>
16. Kazakhstan and Armenia: How cooperation between the two countries is developing <https://qazinform.com/news/kazakhstan-and-armenia-how-cooperation-between-the-two-countries-is-developing-a3943b>
17. Krikoryan O. J., Armenia, EU accession plans and economic struggles <https://www.balcanicaucaso.org/eng/Areas/Armenia/Armenia-EU-accession-plans-and-economic-struggles-235710>
18. Mecacci M., Addressing Georgia's slide away from European Integration <https://www.atlanticcouncil.org/blogs/ukrainealert/addressing-georgias-slide-away-from-european-integration/>
19. Tatikyan S., EU-Armenia Relations at a Crossroads: Between Normative Values and Pragmatism <https://evnreport.com/politics/eu-armenia-relations-at-a-crossroads-between-normative-values-and-pragmatism/>
20. The Crossroad of Peace https://spain.mfa.am/hy/crossroads_of_peace/2025/03/18/crossroads-of-peace/14110
21. Атанесян Г., Зейналов М., Еще два условия. Почему Армения и Азербайджан до сих пор не подписали мирный договор? <https://www.bbc.com/russian/articles/c2lzw9gn0wo>
22. Евразийский экономический союз и Армения: десятилетний рубеж <https://acssi.am/2024/05/29/3029/>

ՄԱՍ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Հեղինակ՝ Արմեն Բթոյան

Գոյություն ունեն տնտեսական դիմակայունության գնահատման ամենատարբեր մոտեցումներ: Դրանց շրջանակներում դիմակայունությունը, ըստ էության, դիտարկվում է որպես բարդ համակարգ, որը ներառում է ամենատարբեր տարրեր ու ենթահամակարգեր, և վերջնարդյունքում հանգում առավելապես արտաքին, նաև՝ ներքին ցնցումներին արձագանքելու ու հակազդելու համար անհրաժեշտ ճկունության դրսևորմանը: Տնտեսական դիմակայունության տարբեր մեթոդների ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ նպատակահարմար է դիտվում ՀՀ տնտեսության դիմակայունության բարձրացման մարտահրավերներն ու հնարավոր լուծումները դիտարկել հետևյալ հարթություններում.

1. Արտահանման խթանում, դիվերսիֆիկացիա, արժեզրթաններ:
2. Ներդրումներ:
3. Նորարարություն, բիզնեսի թվայնացում:
4. Տարածաշրջանային և գլոբալ ենթակառուցվածքներ:
5. Մարդկային կապիտալ:

• Արտահանման խթանում, դիվերսիֆիկացիա, արժեզրթաններ

Հայաստանի տնտեսական բարդության ինդեքսը, 2000թ.-ից ի վեր, շարունակաբար անկում է արձանագրում (տես՝ հավելված, գծ. 1): Սա նշանակում է, որ տնտեսությունն ավելացված արժեք ստեղծելու, տարածաշրջանային և գլոբալ արժեզրթաններին ինտեգրվելու և այդպիսով տնտեսության մրցունակության և դիմակայունության բարձրացման ներուժային հնարավորությունների աստիճանական և կայուն նվազում է արձանագրում: Նշվածն, ըստ էության, անարդյունավետ տնտեսական համակարգի բնութագիր է, որն ավելի ու ավելի թիրախային է դառնում մեր տնտեսության համար:

Ի հավելումն, մեկ այլ մտահոգիչ իրողություն է այն, որ Հայաստանը 2011-2021թթ. ընթացքում տնտեսական բարդության ինդեքսի ցուցանիշով աշխարհում վարկանիշային ամենախոր անկում արձանագրած երկրների շարքում առաջատար է. անկումն՝ ըստ ցուցանիշի տարբեր բաղադրիչների, կազմել է 30-40 տեղ (հավելված, գծ. 2):

ՀՀ արտահանման բարդության նվազումը մեծապես նպաստել է արտահանման դիվերսիֆիկացիայի նվազմանը, ընդ որում, դա տեղի է ունեցել ինչպես ապրանքների, այնպես էլ՝ ծառայությունների արտահանման պարագայում: Այսպես, ապրանքային արտահանման ցուցանիշով ՀՀ երեք ամենախոշոր առևտրային գործընկեր երկրների գումարային մասնաբաժինը (CR-3) Հայաստանի արտահանման կառուցվածքում կազմում է արդեն ավելի քան 75%, այն դեպքում, երբ 2009-2016թթ. հատվածում նույն ցուցանիշը էական ան չի արձանագրել և առավելապես տատանվել է 40%-ի շրջակայքում (հավելված, գծ. 3):

Արտահանման համակենտրոնացումը բարձր է ոչ միայն ըստ երկրների, այլև՝ ըստ ապրանքախմբերի: 2008-ից ի վեր 5 հիմնական արտահանումային ապրանքախմբերի մասնաբաժինը արտահանման ընդհանուր ծավալում կազմել է 60-70 տոկոս: 2023-ին արձանագրվել է ցուցանիշի պատմական մաքսիմում՝ 70% (հավելված, գծ. 4):

Ընդհանրապես, ավելի բարդ ապրանքների թողարկումն ու արտահանումը ենթադրում է ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծում, որակյալ և կայուն տնտեսական աճ, միջազգային արժեշղթաներին մասնակցություն: Ըստ էության, 1990-ականներին հաջորդող 20 տարիների ընթացքում գլոբալ արժեշղթաներին մասնակցության ինդեքսի գնահատականը կրճատվել է շուրջ 40 տոկոսով, ընդ որում, խիստ ցածր մակարդակի վրա է այլ երկրներում թողարկվող պատրաստի արտադրանքի համար մեր տնտեսության կողմից միջանկյալ ապրանքների մատակարարման աստիճանը: Այն 2,5 անգամ ավելի ցածր է, քան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների միջին մակարդակը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանից արտահանման աճը գլխավորապես բաժին է ընկնում ցածր և միջին բարդության ապրանքներին և ծառայություններին՝ զբոսաշրջություն, հանքաքար, գյուղմթերք և այլն: Ավելին, մրցակցային առավելությունները կենտրոնանում են համեմատաբար ոչ բարդ և ոչ տեխնոլոգիատար արժեշղթաների միջանկյալ օղակներում, որտեղից անցումն ավելի բարդ ու գիտատար արժեշղթաներին չափազանց խնդրահարույց է:

Մյուս կողմից, աշխարհում առկա են մեծ թվով հաջողված օրինակներ, թե ինչպես են երկրները կարողացել համեմատաբար կարճ ժամանակահատվածում ներառվել բարդ տեխնոլոգիական արժեշղթաներում, դրանց երկայնքով աստիճանաբար վեր բարձրանալով և ստեղծելով բարձր ավելացված արժեք (Կորեա՝ էլեկտրատեխնիկայի արժեշղթայում, Կենտրոնական Ամերիկա՝ սարքավորումներ, Հնդկաստան՝ ավտոմատացված համակարգերի արժեշղթա և այլն, Սերբիա՝ որակավորված աշխատուժի պատրաստում և ներկառուցում ՏՏ ծառայությունների արժեշղթայում):

Փորձագիտական գնահատականները ցույց են տալիս, որ հայաստանյան իրողությունների պայմաններում արտահանման բարդության աճի և դիվերսիֆիկացիայի խորացման նշանակալի գործոններ են հանդիսանում ենթակառուցվածքների (այդ թվում՝ ՏՀՏ ենթակառուցվածքների) զարգացումը, արտահանման ծախսերի (ինչպես՝ տարիֆային սակագների, այնպես էլ՝ ոչ տարիֆային ծախսումների) նվազումը, կրթության և, հատկապես, բարձրագույն կրթության որակի աճը, հետազոտություններում և մշակումներում ծախսերի ավելացումը, իրական արդյունավետ փոխարժեքի նվազումը:

Ըստ այդմ, արտահանման դիվերսիֆիկացիայի խորացման հիմնական թիրախներ պետք է հանդիսանան առևտրի պայմանների հեշտացումը, պարզեցումը, ոչ տարիֆային արգելքների կրճատումը, տարանցման փաստաթղթաշրջանառության նվազեցումը, ծախսատարության կրճատումը, ենթակառուցվածքների որակի շարունակական բարելավումը, կրթության, գիտության և հետազոտությունների ոլորտում ծախսերի աճն ու դրանց արդյունավետության ապահովման գործիքակազմի ներդրումը, բնակչության եկամուտների բաշխման անհավասարության մակարդակի շարունակական նվազեցումը:

- **ՀՀ արտահանման ներուժը**

Հայաստանը արտահանման ընդլայնման նշանակալի ներուժ ունի: Այս իրողությունը հաստատվում է ամենատարբեր էմպիրիկ հետազոտություններով: Օրինակ, Համաշխարհային բանկի փորձագետների գնահատմամբ, Հայաստանի արտահանումային ներուժը 2013-2019թթ. փաստացի օգտագործվել է 36%-ով: Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների գնահատմամբ՝ Հայաստանի փաստացի արտահանումային կատարողականը ԱՄՆ-ի հետ առևտրում ներուժային մակարդակից ցածր է շուրջ 80%-ով, ԵՄ մեծ թվով երկրների պարագայում այս, ըստ էության, թերակատարումն ավելի ցածր է՝ ընդհուպ մինչև 90-97% (Ֆրանսիա՝ 92%, Իսպանիա՝ 98%, Չեխիա՝ 87%, Միացյալ Թագավորություն՝ 95% և այլն):

Փակ սահմանների առկայությունը երկկողմ արտահանման ծավալները կրճատում է առնվազն 1/3-ով: Արտահանման շուկաների աշխարհագրական բաշխվածության փոփոխությունը ևս նշանակալի ներուժ է պարունակում: Օրինակ, 1000 կմ հեռավորության վրա գտնվող շուկայի փոխարինումը 500 կմ հեռավորության վրա գտնվող շուկայով հնարավորություն կընձեռնի նույն ապրանքի արտահանումն ավելացնել շուրջ 70%-ով: Առանձին առևտրային գործընկերների հետ երկկողմ առևտրի մասին համաձայնագրերի բացակայությունը կամ գործող համաձայնագրերում ՀՀ շահերն առավելագույնս հաշվի առնող դրույթների բացակայությունը ՀՀ արտահանման կատարողականի կրճատման վրա ունեն նույն ազդեցությունը, ինչ՝ փակ սահմանները կամ հիմնական շուկաների՝ աշխարհագրորեն հեռու գտնվելը: Հայաստանը ներկայումս առևտրային երկկողմ առևտրի մասին համաձայնագրեր ունի սահմանափակ թվով երկրների հետ, որոնք հիմնականում գտնվում են ԵԱՏՄ ընդհանուր առևտրային շահերի տիրույթում, նաև՝ անմիջական հարևան են, ինչպես Իրանը և Վրաստանը: Մյուս կողմից, նույն Վրաստանի առևտրային կապերի ընդգրկման շրջանակը և խորությունը շատ ավելի տպավորիչ է, ինչը միայն ՀՀ պարագայում առկա օբյեկտիվ աշխարհաքաղաքական սահմանափակումներով դժվար կլինի բացատրելը: Մեր դեպքում առկա են պոտենցիալ հետաքրքրություն ներկայացնող ուղղություններում (արաբական երկրներ, Կենտրոնական և Հարավ-Արևելյան Ասիա, ԱՄՆ, Կանադա և այլն) առևտրային հանրույթի հետ ինտեգրման ոչ բավարար մակարդակ, արտաքին առևտրի գործառնությունների պատշաճ ավտոմատացման խնդիրներ, նույնիսկ՝ ավանդական առևտրային ուղղություններում սակագնային և ոչ սակագնային նշանակալի սահմանափակումների առկայություն, ինստիտուցիոնալ թերզարգացածություն:

Արտահանման ներուժի խիստ անբավարար օգտագործման կարևոր խոչընդոտներից մեկը լոգիստիկ համակարգերի թերզարգացածությունն է: Ըստ լոգիստիկ կատարողականի ցուցիչի՝ 2023թ. գնահատականների, մաքսային ծառայության որակի գնահատականով Հայաստանն աշխարհի 138 երկրների շարքում 84-րդն է, տրանսպորտային ենթակառուցվածքների գնահատականով՝ 76-րդը, լոգիստիկ ծառայությունների որակով՝ 92-րդը, ժամանակացույցով նախատեսված բեռնառաքումներ կատարելու հաճախականությամբ՝ 109-րդը:

Արտաքին առևտրի առանցքային սահմանափակումներից է նաև ՀՀ կողմից, որպես ԵԱՏՄ անդամ, կիրառվող մաքսատուրքերը: Եթե մինչև ԵԱՏՄ անդամակցությունը Հայաստանը, որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ, անշեղորեն նվազեցնում էր ներմուծման մաքսատուրքերը՝ կիրառելով 0 կամ 10%, իսկ միջին կշռված մաքսատուրքի մակարդակը կազմում էր շուրջ 3%, ապա 2023թ. տվյալներով միջին կշռված մաքսատուրքը, որ կիրառվում է առավել

բարենպաստության ռեժիմի շրջանակներում, հասել է ընդհուպ 9,7%-ի: Այս հանգամանքը մի կողմից, որոշ ոլորտների պարագայում (մասնավորապես, սննդամթերքի առանձին տեսակներ արտադրողների), ձևավորում է, այսպես կոչված, «հարմարավետության գոտի»՝ ապախթանելով նորամուծությունների կիրառությունը, նաև՝ նպաստում է արտադրությունում հումքի թանկացմանն ու արդյունաբերական արտադրանքի մրցունակության որոշակի զսպմանը:

ՀԲ դասակարգմամբ միջինից բարձր եկամտով երկրների խումբ անցնելու կապակցությամբ Հայաստանը զրկվել է արտոնությունների ընդհանրացված և համալրված GSP+ համակարգից օգտվելու հնարավորությունից, ինչը արտահանման ընդլայնման լրացուցիչ սահմանափակում է հանդիսանում: Արդյունքում, պատրաստի սննդի արտադրանքի համար ԵՄ կողմից Հայաստանից ներմուծման միջին մաքսատուրքը 5,2%-ից դարձել է 16,6%, տեքստիլի, կոշիկի արտադրանքի համար նախկինում գրոյական մաքսատուրքը միջինում դարձել է 7 տոկոսից բարձր, կենդանական ծագման արտադրանքի մաքսատուրքը նախկին 5,5%-ի փոխարեն աճել է ավելի քան 12,5%-ի: Ընդհանուր առմամբ, միջին մաքսատուրքը գերազանցում է 5 տոկոսը՝ այն դեպքում, երբ նախկինում, GSP+ կարգավիճակի առկայության պայմաններում, չէր գերազանցում 1%-ը:

Ի հավելումն, Հայաստանը բավարար չափով չի օգտվում ԱՀԿ անդամակցությունից բխող հնարավորություններից, որոնք, մասնավորապես, առնչվում են պոտենցիալ առևտրային գործընկերների հետ արդյունավետ փոխգործակցության հաստատման, առևտրային փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպման, արտաքին առևտրի առանձին գործառնությունների և գործընթացների ոչ բավարար ավտոմատացման, միջսահմանային փոխգործակցության կազմակերպման ոլորտներում առկա խնդիրներին:

Առևտրի դյուրացման ցուցիչների մեծ մասի գնահատականները ՀՀ-ում ավելի ցածր են, քան, օրինակ, Վրաստանինը, և ավելի ցածր, քան ԵՄ անդամ Լիտվայինը (հավելված, աղյուսակ 1):

Վերը նկարագրված ուղղություններից յուրաքանչյուրով Հայաստանի կատարողականի հնարավոր բարելավումը արտահանման ծավալների ավելացման, տնտեսական գործունեության ակտիվացման լուրջ ներուժ է պարունակում՝ նույնիսկ որպես ԵԱՏՄ անդամ-երկիր ոչ ԵԱՏՄ անդամ երկրների նկատմամբ ՀՀ կողմից և ՀՀ նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի պայմաններում: ՀԲ փորձագետների կողմից արված սիմուլյացիոն գնահատումներով ցույց է տրվում, որ տեղեկատվական ապահովման, ընթացակարգային և նորմատիվ-իրավական կարգավորումների, արտաքին առևտրի ընթացակարգերի ավելի ամբողջական ավտոմատացման, միջսահմանային ինստիտուցիոնալ փոխգործակցության ակտիվացման արդյունքում հնարավոր կլինի ՀՀ-ից արտահանումն ավելացնել շուրջ 15%-ով, ներմուծումը՝ 11%-ով, ՀՆԱ-ն՝ 2,9%-ով: Ընդ որում, արտահանման նշանակալի ընդլայնում հնարավոր է ապահովել մեքենասարքավորումների, քիմիական արտադրանքի, մշակող արդյունաբերության մի շարք այլ ճյուղերի արտադրանքի պարագայում:

ՀՀ արտահանման ընդլայնման նկարագրված խնդիրների լուծման և արտահանման խթանման ներուժային հնարավորությունների արդյունավետ օգտագործման համատեքստում կարևորվում է.

1. Արտաքին առևտրի դյուրացմանը միտված միջոցառումների իրականացումը
2. Արտաքին առևտրում ՓՄՁ ներգրավվածության խթանումը

3. Արտահանումային ուղղվածությամբ փոքր ինովացիոն ձեռնարկատիրության խթանումը
4. Տնտեսական դիվանագիտության ակտիվացումը
5. Արտահանման ներուժ ունեցող ոլորտներում կլաստերային նախաձեռնությունների աջակցությունը
6. Նոր շուկաներ մուտքի աջակցությունը

• **Արտաքին առևտրի դյուրացում**

ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից բխող և արտաքին առևտրի դյուրացմանը միտված միջոցառումների իրականացումը կարող է ներառել հետևյալ քայլերը.

- Ձևավորել առևտրի դյուրացման խնդիրների հաղթահարման ճանապարհային քարտեզ՝ հստակեցնելով կոնկրետ ուղղություններում բարելավումների նախաձեռնությունները, դրանց կենսագործման համար անհրաժեշտ ռեսուրսային կարիքները, հնարավոր շահառուների շրջանակը, իրագործման կառուցակարգերը
- Գործող որևէ կառույցի օժտել առևտրի դյուրացման գործառնությունների կոորդինացման, համակարգման գործառնություններով
- Ձևավորել առևտրի դյուրացման խնդիրների հաղթահարման միջոցառումների իրականացման արդյունքների վերահսկողության համակարգ՝ համապատասխան մոնիտորինգային գործիքակազմով
- Արտաքին առևտրի ընթացակարգերի ավտոմատացման ու թվայնացման խորացում և մասշտաբների ընդլայնում
- Արտաքին առևտրային հոսքերի սպասարկման գործընթացների տեխնիկական հագեցվածության բարձրացում, արդիական սարքավորումների ներդրման և կիրառման շրջանակի ավելացում, ընթացակարգերի օպտիմալացում,

• **Արտաքին առևտրում ՓՄՁ ներգրավվածության խթանում**

Միջազգային փորձը վկայում է, որ ՓՄՁ սուբյեկտները նկատելի դերակատարում ունեն երկրի արտաքին տնտեսական հարաբերությունների համակարգում և բավականաչափ ակտիվ են արտահանումային գործառնություններում: Այս հանգամանքը դրականորեն է ազդում ապրանքների ու ծառայությունների արտահանման դիվերսիֆիկացիայի խորացման, արտահանման կառուցվածքի ճկունության բարձրացման, արտաքին շուկաների առաջադրած պայմաններին արագ հարմարեցման, վերազգային կորպորացիաների հետ համագործակցության ճկուն ձևերի հաստատման վրա՝ տեխնոլոգիական ու առևտրային գլոբալ շղթաներում մասնակցության հնարավորությունների ընդլայնմամբ: Մեր իրականությունում, սակայն, իրավիճակը տրամադորեն հակառակն է: ՓՄՁ սուբյեկտները արտահանումային գործառնություններում նշանակալի և, իրենց համար, հաճախ անհաղթահարելի խոչընդոտների են բախվում, ինչը էականորեն սահմանափակում է ՓՄՁ մասնակցությունը Հայաստանից ապրանքների ու ծառայությունների արտահանման մեջ:



Լուսանկարը՝ Business Media-ի

Հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների մեծամասնությունն ունի սահմանափակ ռեսուրսային ներուժ, թույլ տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածություն, անձնակազմի որակավորման ոչ բարձր մակարդակ (բացառությամբ, թերևս, ՏՀՏ ոլորտում գործող որոշ ՓՄՁ-ների): Նման իրավիճակում արտաքին շուկաներում մրցունակ արտադրանքի ստեղծումն ու արտահանումային գործառնությունների պատշաճ կազմակերպումը չափազանց բարդ խնդիր է դառնում: Այս համատեքստում, հայրենական ՓՄՁ սուբյեկտների արտահանումային ներուժի խթանումը, դրանց կողմից տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում մրցունակ արտադրանքի թողարկման աջակցությունը արտահանման խթանման պետական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը պետք է հանդիսանա:

Համաշխարհային փորձը վկայում է, որ ՓՄՁ արտահանումային գործունեության զարգացման կարևոր գործոններից մեկը պետական համակարգային աջակցությունն է, որի երկու հենասյուներն են՝ ինստիտուցիոնալ պայմանների ձևավորումն ու զարգացումը, արտաքին տնտեսական հարաբերությունների համակարգում ՓՄՁ սուբյեկտների մասնակցության խթանումը: Մեր մոտեցմամբ՝ Հայաստանում ևս առկա է ՓՄՁ սուբյեկտների արտահանումային գործունեության խթանման ուղղված պետական ռազմավարության անհրաժեշտություն:

Ռազմավարության ելակետը պետք է դառնա արտահանումային և այլ արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար ՓՄՁ սուբյեկտներին նպաստավոր ինստիտուցիոնալ պայմաններ ապահովելը: Առաջին հերթին, անհրաժեշտ է ստեղծել ՓՄՁ սուբյեկտների արտահանումային գործունեության պետական աջակցության գործուն օրենսդրական հենք: Մասնավորապես, անհրաժեշտ է ՀՀ-ում ՓՄՁ գործունեությունը կանոնակարգող օրենքում և այլ իրավական ակտերում ամրագրել արտահանման աջակցության տեսակները, ձևերը, ներառյալ՝ իրականացվելիք ծրագրերը, տրամադրվելիք վարկերի,

երաշխիքները տեսակները, ընթացակարգերը, հիմնական պայմանները, հարկային և այլ տիպի արտոնությունները և այլն:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև ՓՄՁ սուբյեկտների արտահանման աջակցության ենթակառուցվածքային հենքի ձևավորումը, որը կարող է ներառել համապատասխան ֆինանսական կառույցների, տեղեկատվական ցանցերի, ՓՄՁ սուբյեկտներին արտաքին տնտեսական գործունեության ոլորտում ծառայություններ մատուցող այլ կառույցների, ինստիտուցիոնալ միավորների կազմավորումը կամ եղածներին ՓՄՁ արտահանման աջակցությանը միտված գործառնությունների վերապահումը:

ՓՄՁ արտահանումային գործունեության աջակցության ռազմավարության մեկ այլ կարևոր ուղղություն է հանդիսանում ՓՄՁ արտաքին տնտեսական գործունեության ֆինանսական խթանման համակարգի ձևավորումը: Մասնավորապես, արդի պայմաններում արտահանման ֆինանսական խթանման համակարգի բաղադրիչներից մեկը ՓՄՁ սուբյեկտների կողմից արտահանումային գործառնություններում կատարվող ծախսերի մի մասի սուբսիդավորման մեխանիզմների սահմանումն է: Օրինակ, կարող են կիրառվել հետևյալ տիպի սուբսիդիաները.

- ՓՄՁ կողմից թողարկված, արտահանման համար նախատեսված, ապրանքների և ծառայությունների արտադրությունում օգտագործված վարկերի տոկոսների վճարման հետ կապված ծախսերի որոշ մասի (օրինակ, մինչև 50%) սուբսիդավորում,
- արտահանման ենթակա ապրանքների կամ ծառայությունների համար ՀՀ (որպես արտահանող երկրի) կամ ներմուծող երկրի օրենսդրությամբ սահմանված պահանջների (հավաստագրման, գրանցման, որակի համապատասխանությունը հավաստող այլ գրանցումների) կատարման համար ՓՄՁ սուբյեկտների ծախսերի մի մասի սուբսիդավորում,
- արտահանման կողմնորոշում ունեցող ՓՄՁ սուբյեկտների ապրանքների և ծառայությունների՝ արտաքին շուկաներում առաջնորման, մարկետինգային, խորհրդատվական, ցուցահանդեսներին մասնակցության ծախսերի մի մասի սուբսիդավորում,
- արտասահմանում ապրանքային նշանի, հեղինակային իրավունքի, մտավոր սեփականության արդյունքների իրավական պաշտպանության համար կատարվելիք ծախսերի որոշ մասի (մինչև 80%) սուբսիդավորում:

• Արտահանումային ուղղվածությամբ փոքր ինովացիոն ձեռնարկատիրության խթանում

Հայաստանի տնտեսության գլոբալ մրցունակության բարձրացման, տնտեսվարող սուբյեկտների արտահանման ներուժի ընդլայնման ուղղության մեջ կարևոր դերակատարում ունի փոքր նորարարական (ինովացիոն) ընկերությունների կազմավորման և զարգացման խթանումը: Փոքր ինովացիոն ընկերությունները հանդիսանում են նորարարությունների առևտրայնացմանը նպաստող կարևորագույն գործոններից մեկը, հեշտացնում են ազգային նորարարական համակարգի տարրերի միջև կապերի հաստատումն ու ճկունություն հաղորդում ողջ տնտեսական համակարգին:

ՀՀ ՏՀՏ ոլորտից դուրս փոքր ինովացիոն ընկերությունների հաջողված օրինակներ գրեթե չկան: Նորարարական ուղղվածությամբ փոքր և միջին ընկերությունների զարգացման նշանակալի խոչընդոտներից են ֆինանսական ռեսուրսների ներգրավման դժվարությունները: Մեր մոտեցմամբ՝ այդպիսի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ է կազմավորել Փոքր ինովացիան ընկերությունների զարգացման աջակցության հիմնադրամ: Նմանատիպ կառույցներ գործում են զարգացած նորարարական համակարգեր ունեցող շատ երկրներում: Օրինակ, ԱՄՆ-ում դա Փոքր բիզնեսի նորարարական հետազոտությունների ծրագիրն է (SBIR), Ֆրանսիայում՝ Փոքր և միջին նորարարական ձեռնարկությունների զարգացման պետական գործակալությունը (ANVAR):

Հիմնադրամը նպատակահարմար է կազմավորել պետբյուջեի հաշվին՝ այդտեղ ուղղորդելով գիտության տարեկան ծախսերի 5-7%-ը: Հիմնադրամը կարող է աջակցություն ցուցաբերել ինչպես արդեն կազմավորված և զարգացման սկզբնական փուլերն անցած, այնպես էլ՝ նոր կազմավորվող, նորարարական ուղղվածություն ունեցող փոքր և միջին ընկերություններին: Ընդ որում, ելնելով կայացածության աստիճանից, որպես ֆինանսական աջակցության գործիք կարող են օգտագործվել դրամաշնորհները, անտոկոս և ցածր տոկոսադրույքով (ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքին համապատասխան) վարկերը, վարկային երաշխիքները:

Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունները պետք է հանդիսանան նորարարական ենթակառուցվածքների կազմավորումը, փոքր ընկերությունների կողմից հետազոտական ինստիտուտների կարիքների համար սարքերի, սարքավորումների ստեղծման ֆինանսավորումը, ֆինանսական լիզինգի, խորհրդատվական ծառայությունների մատուցումը, նորարարական ոլորտի մասնագետների պատրաստումը և այլն, հատուկ ուշադրություն դարձնելով արտահանման կողմնորոշվածություն ունեցող ընկերությունների աջակցությանը:

Հանրապետությունում նորարարական գործունեության խթանման, արտահանման կողմնորոշվածություն ունեցող փոքր ինովացիոն կազմակերպությունների կազմավորման և զարգացման, դրանցում ստեղծվող գաղափարների, արտաքին շուկաներում նորարարական ապրանքների առաջխաղացման և տնտեսության գլոբալ մրցունակության բարձրացման գործում չափազանց կարևոր նշանակություն կարող են ունենալ վենչուրային հիմնադրամներն ու դրանց կողմից ստեղծվելիք վենչուրային ընկերությունները:

Վենչուրային ձեռնարկատիրությունը Հայաստանում թերզարգացած է: Դա ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Առաջին և հիմնական խոչընդոտներից է ֆինանսավորման աղբյուրների սակավությունը: Այստեղ խոսքը վերաբերում է հատկապես վենչուրային ընկերությունների կազմավորման սկզբնական՝ սաղմնային փուլի ֆինանսավորմանը: Որպես ՀՀ-ում վենչուրային ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոններ կարելի է թվարկել նաև մտավոր սեփականության պաշտպանության ոչ բավարար մակարդակը, նորարարական ենթակառուցվածքների թերզարգացածությունը և վենչուրային ներդրողների համար հետաքրքրություն ներկայացնող նախագծեր ունեցող նորարարական ուղղվածությամբ ՓՄՁ սուբյեկտների սակավությունը: Չի կարելի չնշել նաև բարձրտեխնոլոգիական ոլորտում ուղղակի ներդրումների իրականացման խթանների գրեթե բացակայությունը: Առանցքային խոչընդոտների շարքում կարելի է նշել նաև վենչուրային ձեռնարկատիրության պահանջներից բխող համապատասխան իրավական դաշտի բացակայությունը: Բացի այդ, լուրջ դեր է խաղում

նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ պետական հսկողության բյուրոկրատացման բարձր աստիճանն ու մեծ ծավալի փաստաթղթատարությունը, ֆոնդային շուկայի թերգարգացումն ու, դրա հետևանքով, վենչուրային ներդրումների ցածր իրացվելիությունը, վենչուրային հիմնադրամների որակյալ կառավարիչների սակավությունը և այլն:

Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վենչուրային հիմնադրամների ձևավորման այնպիսի նախագծեր, որոնք իրենց կենսունակությունը ապացուցել են համանման ելակետային պայմաններ ունեցող երկրներում: Օրինակ, պետական խթանիչ միջոցառումների արդյունքում է, որ Իսրայելը, օժտված լինելով զգալի գիտական ներուժով, 1990-ականների վերջերին կարողացավ զարկ տալ վենչուրային ձեռնարկատիրության ոլորտին՝ 5-7 տարվա ընթացքում դրա ծավալները 2.2 մլրդ ԱՄՆ դոլարից հասցնելով 11 մլրդ ԱՄՆ դոլարի: Ընդ որում, վենչուրային ներդրումների իրականացման սկզբնական շրջանում պետական բյուջեի միջոցների օգտագործումը հետագայում խթանեց մասնավոր ներդրումների ներհոսքը, արդյունքում ոլորտում ներդրումների ընդհանուր ծավալը 50 անգամ գերազանցեց պետական ներդրումների մեծությանը, իսկ բարձրտեխնոլոգիական ընկերությունների թիվը 10 տարվա ընթացքում հասավ 4000-ի:

• Տնտեսական դիվանագիտության ակտիվացում

Արտահանման խթանման պետական համակարգերի գործարկման արդի պայմաններում արտահանման ոչ ֆինանսական խրախուսման ձևերի շարքում ուրույն տեղ է զբաղեցնում, այսպես կոչված, տնտեսական դիվանագիտությունը, որը ենթադրում է հայրենական շուկաներում օտարերկրյա կազմակերպությունների գործունեության պայմանների սահմանմանը, ինչպես նաև տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում հայրենական կազմակերպությունների մուտքի ապահովմանը միտված հանրային քաղաքականության մշակում ու իրագործում: Տնտեսական դիվանագիտության կարևոր ինստիտուտներից են արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցչությունները, որոնց գործունեությունը, մեր մոտեցմամբ, արդյունավետ համարել չի կարելի: Դրա պատճառները բազմաթիվ են, որոնց թվում հարկ է առանձնացնել արտերկրում ՀՀ առևտրային ներկայության ռեսուրսային սահմանափակումները, գործարար հանրույթի հետ ինտեգրման ցածր մակարդակը, ինչն արտահայտվում է արտասահմանում հայաստանյան առևտրային կազմակերպությունների շահերի ներկայացման ու առաջնիման գործում մեխանիզմների բացակայությամբ, հաճախ նաև՝ պարզապես ոչ բավարար շահադրժմամբ: Մինչդեռ, արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցչությունները, դիվանագիտական ներկայացուցչությունների համապատասխան ստորաբաժանումները պետք է արտահանող կազմակերպությունների համար դառնան «սպասարկման կենտրոններ»՝ իրականացնելով իրենց տեղակայման երկրում տնտեսական գործընկերների որոնման, տեղեկատվական աջակցության, գործարքների ձևակերպման, իրավական աջակցության գործառնություններ:

• Արտահանման ներուժ ունեցող ոլորտներում կլաստերային նախաձեռնությունների աջակցություն

Արտահանման աջակցության պետական համակարգի կարևոր բաղադրիչ կարող է հանդիսանալ նաև կլաստերային նախաձեռնությունների աջակցությունը, կլաստերների ձևավորման խթանումը: Ընդհանրապես, կլաստերային մոտեցման, որպես արտահանման խթանման արդյունավետ գործիքի, կենսունակությունն արդեն իսկ ապացուցվել է ինչպես մեծաթիվ զարգացած, այնպես էլ՝ զարգացող երկրների փորձով: Կլաստերներն ու, մասնավորապես, դրանց տարատեսակ հանդիսացող ազատ տնտեսական գոտիները արտահանման խթանման անփոխարինելի գործիք են դարձել, հատկապես, արագ զարգացող տնտեսություններում (այս տեսանկյունից բնութագրական է Չինաստանի օրինակը), որտեղ ազատ տնտեսական գոտիների ձևավորմամբ ու գործարկմամբ պետությունը կարողանում է նշանակալիորեն ընդլայնել ու բազմազանեցնել արտահանումը, ներգրավել ներդրումներ, նոր տեխնոլոգիաներ, լուծել բնակչության զբաղվածության, հետամնաց տարածքների զարգացման և այլ մակրոտնտեսական խնդիրներ:

Զարգացած տնտեսությամբ երկրների հաջողված փորձը ցույց է տալիս, որ կլաստերային մոտեցմամբ տնտեսության զարգացման, մրցակցային առավելությունների ստեղծման, գլոբալ մրցունակության բարձրացման քաղաքականության հենասյուներ են հանդիսանում՝

- կլաստերների պետական աջակցության հիմնական մեխանիզմի ընտրությունը, որը հանգում է կամ կլաստերների գործարկման նպաստավոր պայմանների ստեղծմանը, կամ էլ՝ անմիջական աջակցության ցուցաբերմանը,
- պետական միջոցների ստացմանը հավակնող կլաստերների ընտրությունը,
- կլաստերների պետական աջակցության հիմնական նպատակի սահմանումը, այն է՝ նոր աշխատատեղերի ստեղծում, նոր տեխնոլոգիաների մշակում և այլն:

ԵՄ շատ երկրներում կլաստերները հանդիսանում են տարածքային, գիտա-ինովացիոն, արդյունաբերական զարգացման հիմնական գերակայություններից մեկը: Հատկանշական է, որ այստեղ կլաստերների մոտ $\frac{3}{4}$ -ը կազմավորվել են կամ պետության անմիջական նախաձեռնությամբ, կամ էլ՝ պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում: Կլաստերային նախաձեռնությունների ֆինանսավորման կառուցվածքում պետության մասնաբաժինն ավելի մեծ է՝ շուրջ 80%:

Այսպիսով, ՀՀ արտահանման խթանման ռազմավարության կարևոր բաղադրիչ պետք է հանդիսանա տարբեր ոլորտներում կլաստերների կազմավորման ու զարգացման ակտիվ պետական միջոցառումների իրականացումը: Այս առումով, առաջին հերթին, անհրաժեշտ է դիտվում արտադրանքի թողարկման և իրացման արժեքային շղթայում ներգրավված տնտեսվարող սուբյեկտների կլաստերացման ներուժի համակողմանի գնահատումը, որին պետք է հաջորդի կլաստերացման նախաձեռնությունների խթանմանը միտված քայլերի իրագործումը: Ընդ որում, վերջինները պետք է համակարգված բնույթ կրեն, պետք է հստակեցվեն դրանց կենսագործման շրջանակներում կառավարման տարբեր մակարդակների մարմիններին վերապահվելիք գործառնությունները: Սա նշանակում է, որ օբյեկտիվ անհրաժեշտություն է հանդիսանում արտահանման համար նախատեսված արտադրանքի թողարկման կլաստերների ձևավորման և զարգացման պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը: Նշված քաղաքականության հիմնարար նպատակ պետք է հռչակել տնտեսվարող սուբյեկտների մրցունակության բարձրացման, արտահանումային ներուժի ընդլայնման, արժեքի գլոբալ և

տարածաշրջանային շղթաներին ինտեգրման նախապայմանների ստեղծումը՝ միկրո և մեզո մակարդակներում: Սույն նպատակից բխող խնդիրներ են՝ տնտեսվարող սուբյեկտների կլաստերացման ներուժի գնահատումը, կլաստերների ախտորոշումը, կլաստերային նախաձեռնությունների վերհանումն ու համակողմանի աջակցությունը, կլաստերների զարգացման խթանումը՝ ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքների կիրառմամբ, կլաստերների մշտադիտարկումը և գործունեության արդյունավետության, ինչպես նաև՝ ոլորտում պետական քաղաքականության հասցեականության ու թիրախայնության գնահատումը:

Առաջադրված խնդիրների լուծման մեթոդական ապահովումը պետք է ներառի՝

- կլաստերային նախաձեռնությունների փաթեթի ձևավորում,
- կլաստերների մրցունակության գնահատում,
- կլաստերների վերակազմավորման ուղղությունների գնահատում,
- կլաստերների առաջատար, հենքային սուբյեկտների իդենտիֆիկացիա և հասցեական աջակցության ցուցաբերում,
- կլաստերային նախաձեռնությունների ինստիտուցիոնալացում,
- կլաստերների մասնակիցների ռեսուրսների կոորդինացման կազմակերպական աջակցության ցուցաբերում,
- ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման աջակցություն,
- կադրերի ուսուցման, պատրաստման և վերապատրաստման մեխանիզմների ներդրում ու ակտիվ կիրառություն,
- կլաստերների մասնակիցների համար հարկային, մաքսային և այլ բնույթի արտոնությունների սահմանում,
- կլաստերի զարգացման, գործունեության արդյունավետության, տնտեսական և սոցիալական արդյունքների գնահատման մեթոդաբանության մշակում:

Արտահանմանը միտված արտադրանքի թողարկման արժեքի շղթային մասնակցող կազմակերպությունների կլաստերների կազմավորման և զարգացման պետական քաղաքականության արդյունավետության կարևոր նախադրյալ է կլաստերային նախաձեռնությունների կոորդինացումն ու տեղեկատվական-խորհրդատվական ապահովումը:

Կոորդինացիոն խնդիրների լուծման համար նպատակահարմար է հիմնել կլաստերային նախաձեռնությունների խթանման գործակալություն կամ էլ դրա գործառույթները վերապահել որևէ այլ ինստիտուցիոնալ միավորի: Հիմնադրամի իրավասությունների և պատասխանատվության տիրույթում պետք է ընդգրկել՝

- կլաստերային նախաձեռնությունների մասնակիցների համախմբումը և փոխգործակցության կոորդինացումը,
- կլաստերային նախաձեռնությունների նոր մասնակիցների և ներդրումների ներգրավումը,
- նախագծերի և ներդրողների օպերատիվ խորհրդատվական աջակցությունը,
- հանրային հատվածի ներկայացուցիչների, պետական իշխանության մարմինների և այլ շահառուների հետ կլաստերային նախագծերի իրագործման ընթացքի կոորդինացումը,
- կլաստերային նախաձեռնությունների իրականացման լավագույն փորձի վերհանումը և տարածումը,
- կլաստերների ապահովումը աշխատանքային ռեսուրսներով,

- կլաստերային նախաձեռնությունների մասնակիցների համար ուսուցման, վերապատրաստումների կազմակերպումը, տեղեկատվության տրամադրումը:

Ինչ վերաբերում է կլաստերային նախաձեռնությունների տեղեկատվական-խորհրդատվական ապահովմանը, ապա այն ենթադրում է կլաստերային նախաձեռնությունների մասնակիցներին խորհրդատվական, տեղեկատվական և այլ բնույթի ծառայությունների մատուցման համակարգի ստեղծում: Համակարգի գործարկումը պետք է նպատակաուղղված լինի կլաստերների մասնակիցներին մարկետինգային, փորձագիտական, իրավական, տեղեկատվական աջակցության տրամադրմանը, հատկապես՝ տարածաշրջանային և համաշխարհային շուկաներ մուտքի նախապատրաստման և իրականացման ընթացակարգերում:

• Նոր շուկաներ մուտքի աջակցություն

Արտահանողներին արդյունավետ տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ է առաջին հերթին հստակեցնել, թե արտաքին շուկա դուրս գալու գործընթացի ո՞ր փուլում է արտահանողը գտնվում, այդ փուլին ի՞նչ խնդիրներ են բնորոշ, ինչպիսի՞ տեղեկատվություն է անհրաժեշտ այդ խնդիրները լուծելու համար:

Ընդհանուր առմամբ, արտաքին շուկա դուրս գալու գործընթացը կարելի է դիտարկել որպես հետևյալ փուլերի ամբողջություն՝

- տեղեկատվության հավաքում,
- փորձնական արտահանում՝ հաղորդակցային ուղիների, լոգիստիկ շղթայի կառուցում
- հարմարեցում՝ արտադրանքի իրացում, մատակարարման արդյունավետ մեխանիզմի ընտրություն,
- արտահանման արդյունավետության գնահատում, դրանից բխող որոշումների կայացում (շարունակել մատակարարումները, ընտրել նոր ուղիներ կամ շուկաներ, ընդլայնել մատակարարումների ծավալը, հրաժարվել արտադրանքի արտահանումից):

Այս տեսանկյունից, արտահանողներին տեղեկատվական աջակցության տրամադրումը պետք է ենթադրի քանակական և որակական տեղեկատվության ապահովում՝ հեռանկարային արտաքին շուկաների, դրանց կոնյունկտուրայի, զարգացման միտումների, արտահանման երկրների քաղաքական, սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, տեխնոլոգիական, իրավական միջավայրի, դրա փոփոխման հնարավոր ուղղությունների, անհրաժեշտ ռեսուրսների ներգրավման հնարավոր տարբերակների, դրանց առավելությունների ու թերությունների, արտահանվող ապրանքների կամ ծառայությունների ոլորտում համաշխարհային նորագույն տեխնոլոգիական նվաճումների, այլընտրանքների մրցունակության, արտահանման ենթակառույցների վերաբերյալ: Ընդ որում, ոչ պակաս կարևոր է արտահանողներին նշված ուղղություններով ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ օպերատիվ տեղեկատվության տրամադրումը, նաև՝ գործընթացի հասցեականության ապահովումը, այն կապակցելով յուրաքանչյուր կոնկրետ արտահանողի կամ նրանց խմբերի կոնկրետ տեղեկատվական պահանջմունքներին:

Անհրաժեշտ է արտահանող ընկերություններին դասակարգել ըստ տարածաշրջանային և համաշխարհային շուկաներ մտնելու գործընթացի փուլայնության: Օրինակ, կարելի է կիրառել

հետևյալ դասակարգումը. արտահանման ներուժ ունեցող ընկերություններ; տարածաշրջանային և համաշխարհային շուկաներ մուտքի սկզբնական փուլում գտնվող ընկերություններ; արտահանող ընկերություններ: Ըստ այդմ, յուրաքանչյուր խումբ ընկերությունների համար պետք է մշակվեն ու կիրառվեն ուրույն, իրենց փուլի առանձնահատկություններից բխող գործիքներ, աջակցության միջոցառումներ, և, այդ կերպ, արտահանման խթանմանը միտված քաղաքականությունը կդառնա ավելի հասցեական:

• Ներդրումներ

Տնտեսական զարգացման ներուժի ընդլայնման առանցքային բաղադրիչներից են օտարերկրյա ուղղակի ներդրումները: Դրանք ավելացնում են ՀՆԱ ձևավորելու երկրի ներուժը, նպաստում են երկրի տեխնոլոգիական առաջընթացին ու մարդկային կապիտալի զարգացմանը: Դիմակայուն տնտեսության ձևավորման կարևոր նախապայմաններից է տնտեսության ներդրումային գրավչության բարձրացումը, ուղղակի ներդրումների ներգրավման կարողության ընդլայնումը: Այս առումով, Հայաստանում իրավիճակը արդեն երկար ժամանակ խնդրահարույց է:

Այսպես, ՀՀ-ում ՕՈՒՆ գուտ ներհոսքը ՀՆԱ նկատմամբ կազմում է ընդամենը 2,4%: Ընդ որում, ցուցանիշը 2009-ից սկսած անշեղորեն և կայուն կերպով նվազում է: Չնայած՝ 2021-22-ին անկման միտումը կարճաժամկետ «դադար» է արձանագրել, սակայն հաջորդիվ ևս նվազում է գրանցվել (հավելված, գծ. 5):

ՕՈՒՆ գլոբալ միտումներում վերջին տարիներին նկատելի տեղաշարժ է նկատվում, ինչն անխուսափելիորեն ներգործում է նաև ՀՀ-ում ներդրումների ներգրավման գործընթացի արդյունավետության և թիրախայնության վրա: Ըստ այդմ, գլոբալ միտումների շարքում կարելի է առանձնացնել.

- Երկարաժամկետ ՕՈՒՆ նվազումը
- Ծառայությունների մասնաբաժնի ավելացումը
- Ներդրումային հարաբերությունների անկայունությունը
- Աշխարհաքաղաքական առումով միմյանցից հեռու երկրներում ներդրումային կապերն ու ներդրումների ինտենսիվությունը շատ ավելի թույլ են, քան նախկինում:

Ներդրումային որոշումների վրա ազդող առավել կարևոր գործոնների առաջին եռյակում են ընդունող երկրում տեխնոլոգիական և ինովացիոն կարողությունները (կարևորել են ներդրողների 17%-ը), իրավական և կարգավորումային գործընթացները (15%), կապիտալի մուտք ու ելքի հեշտությունը (14%): Կարևոր նշանակություն ունեն նաև կոռուպցիայի ցածր մակարդակն ու պետական կարգավորման թափանցիկությունը (13%), ներդրողների ու սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանությունը (12%), հետազոտությունների և մշակումների կարողությունները (12%): ՀՀ-ում ներդրումային կատարողականի որակական բարելավումը չի կարող կենսագործվել նկարագրված իրողությունների անտեսմամբ:

Այսպես, ներդրողների և ձեռնարկատերերի շահերի արդյունավետ պաշտպանության համակարգի ներդրման առումով կարևոր նշանակություն ունի հնարավոր վեճերի լուծման նախադատարանային, միջնորդական և իրավունքների պաշտպանության առաքելության

կենսագործման ինստիտուտի կայացումը, որը շատ երկրներում ներդրված է բիզնես կամ ներդրումների օմբուդսմենի (ՆՕ) գործիքակազմով: Չնայած՝ Հայաստանում տարիներ առաջ շրջանառվել է ձեռնարկատիրության հաշտարարի մասին օրենսդրական նախաձեռնությունը, սակայն այն, բավարար աջակցություն չստանալով, օրակարգից դուրս է եկել: ՆՕ ինստիտուտը կարող է ներդրողների հետ ի հայտ եկած խնդիրների, վեճերի լուծումը իրագործել դրանց ծագման վաղ շրջանում, երբ կարգավորումը շատ ավելի արագ, հեշտ ու պակաս ծախսատար կարող է լինել: ՆՕ ինստիտուտի գործարկման հաջողված օրինակներ են ԱՄՆ-ն, ԵՄ երկրները, ՏՀԶԿ անդամ երկրների մեծ մասը:

ՆՕ-ի գործառնությունների մեջ պետք է ներառվեն ներդրողներին և նրանց կողմից ստեղծված կազմակերպություններ այցելություններն ու դժգոհությունների, խնդիրների հավաքագրումը, ընդհանուր բիզնեսի կառավարմանն առնչվող խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը, վերհանված խնդիրների լուծման համար համակարգային բարելավումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը պետական կառավարման մարմիններին, բարձրացված խնդրի լուծման համար վերջիններիս միջև վարչական ընթացակարգերում անհրաժեշտ գործողությունների ներդաշնակեցման պահանջի առաջադրումը: ՆՕ-ն կարող է քննարկման առարկա դարձնել բողոքները հարկման, իրավակիրարկումների, շինարարության, ֆինանսների, արտարժույթային գործառնություններին, վիզաների, աշխատանքային իրավունքի և այլ հարցերում:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների համար նշանակալի խոչընդոտներից են արտադրական գույքի և հողի ձեռքբերման դժվարությունները: Հողերը հատվածային են, հաճախ հնարավոր չի լինում իդենտիֆիկացնել կամ արդյունավետ կապ հաստատել սեփականատիրոջ հետ, տեղական իշխանության մարմինները մեծ պատրաստակամություն չեն ցուցաբերում ներդրողների գույքային խնդիրների լուծման հարցում, արտադրական նշանակության գույքի ձեռքբերումը դժվարացված է, պատրաստի գույքը սակավ է, բարոյապես և ֆիզիկապես մաշված ու հնացած, բացակայում է արտադրական նշանակության գույքի ընդգրկում և միասնական տեղեկատվական բազան, որը մատչելի կլիներ ներդրողներին, պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման կամ պոտենցիալ ներդրողներին հատկացման ընթացակարգերը խրթին են ու ժամանակատար:

Այս համատեքստում օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանման արդյունավետ գործիք կարող է դառնալ գույքային աջակցության համալիր ծրագրի մշակումը և ներդրումը, ինչն իր կենսունակությունն ապացուցել է ամենատարբեր զարգացած ու զարգացող տնտեսությամբ երկրներում: Այն ենթադրում է.

- Պատրաստի արդյունաբերական շենք-շինությունների, արտադրական տարածքների կառուցում թիրախային մարզերում՝ դրանք պոտենցիալ ներդրողներին սեփականության իրավունքով վաճառելու կամ վարձակալությամբ տրամադրելու համար
- Պետական սեփականության գույքի ձեռքբերման ընթացակարգերի պարզեցում, համայնքային իշխանությունների կողմից ներդրողների հետ գույքային հարաբերությունների ձևավորման հարցում գործուն աջակցության տրամադրում, նմուշային պարզեցված կառուցակարգերի ներդրում և իրավական ամրագրում,

- Արտադրական գույքի ամբողջական տեղեկատվական համակարգի ձևավորում՝ առաջին հերթին ներդրողների մոտ առկա տեղեկատվական բացի լրացման ու անորոշության նվազեցման նպատակով,
- Հողերի խոշորացման գործընթացի ակտիվացում՝ ընդլայնելով դրա շրջանակը, ներդնելով խթանների ու տուգանքների (չօգտագործվող հողատարածքների համար), հարկման ավելի ադեկվատ համակարգ, ձևավորելով հողերի առուվաճառքի գործուն էլեկտրոնային հարթակներ:

ՀՀ-ում ներդրումների էական խոչընդոտ է նաև այն, որ ներդրողների հետ երկխոսությունն արդյունավետ չէ: Չնայած՝ կան հարթակներ, որտեղ ներդրողները մասնակցում են, սակայն խնդիրների լուծումը կոնկրետ մակարդակներում բավարար արդյունավետություն չունի:

Այս առումով անհրաժեշտ է ավելի կառուցողական հենքի վրա հարաբերություններ ձևավորել: Օրինակ, տրամադրել համապարփակ տեղեկատվություն: ԵՄ մի շարք երկրներում* ներդրողների համար յուրաքանչյուր տարի հրապարակվում են ուղեցույցներ կամ, այսպես կոչված, «սպիտակ գրքեր», որտեղ ամբողջական տեղեկատվություն է տրամադրվում, մասնավորապես, ներդրումային հնարավոր ուղղությունների, ենթակառուցվածքների, անշարժ գույքի ձեռքբերման, գրանցման, շինարարության իրականացման, աշխատուժի, շրջակա միջավայրի կարգավորումների, կորպորատիվ կառավարման, վեճերի լուծման ընթացակարգերի, սնանկացմանն առնչվող նորմերի, մտավոր սեփականության, մրցակցության, սպառողների պաշտպանության, պետական գնումների, տեսչական ստուգումների, մաքսային ընթացակարգերի, վճարման ծառայությունների, արտարժույթային գործառնությունների, բիզնեսի գրանցման, անհատական տվյալների պաշտպանության, հարկման, նաև՝ առանձին ոլորտների ներդրումային գրավչության նկարագրություններ: Ըստ որում, այստեղ ներկայացվում են, թե ընթացիկ տարում կարգավորումների ինչ փոփոխություններ են արձանագրվել նախորդ տարիների համեմատությամբ, ինչ հիմնական խնդիրներ ու մարտահրավերներ կան: Այս ամենը ներդրողին թույլ է տալիս պատկերացում կազմել ոչ միայն երկրի մրցակցային առավելությունների, այլ նաև՝ մարտահրավերների, խնդիրների և թույլ կողմերի մասին, այդ կերպ օժանդակելով նաև ձեռնարկատիրական ռիսկի նախնական գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացմանը:

Ավելին, անհրաժեշտ է թիրախային ոլորտների ներդրումային գրավչության վերաբերյալ ավելի համապարփակ տեղեկատվություն տրամադրել ներդրողներին, ընդհուպ՝ դրանցում միջին շահութաբերության, բիզնես ռիսկերի, հնարավոր այլ ֆինանսական արդյունքների մասին գնահատականներ:

ՕՈՒՆ ինստիտուցիոնալ համակարգը խոցելի է և համահունչ չէ լավագույն միջազգային փորձին: Օրինակ, դրանում մասնավոր հատվածը այստեղ որևէ կերպ ներկայացված չէ, որոշումների վրա ուղղակիորեն ազդելու իրավասություն չունի: Լրջագույն խնդիր է ՏԻՄ ներգրավվածությունը ՕՈՒՆ ներգրավման խթանման գործընթացներին: ՏԻՄ-երը այս հարցում չունեն բավարար կարողություններ, հաճախ նաև՝ չեն ցուցաբերում անհրաժեշտ շահագրգռվածություն:

* Մասնավորապես՝ Սերբիա, Ռումինիա, ԿԱԵ որոշ այլ երկրներ:

Կարևոր խնդիր է ՀՀ-ում ներդրումների աջակցության կենտրոնի ինստիտուցիոնալ կարողունակության բարելավումը: Միջազգային լավագույն փորձը վկայում է, որ նմանօրինակ կառույցների թե՛ ֆինանսավորումը, թե՛ անձնակազմը բազմապատիկ ավելի են, քան՝ Հայաստանում է, հատկապես հաշվի առնելով գործառույթների լայն շրջանակը: Տնտեսության համադրելի չափեր ունեցող երկրներում ներդրումների խթանման և աջակցության գործակալությունների անձնակազմը առնվազն 150 հաստիք ունի՝ համապատասխան բյուջետավորմամբ:

Ի հավելումն, անհրաժեշտ է ներդնել տեղական արտադրողների հետ օտարերկրյա ներդրողների փոխգործակցության հաստատման և խորացման կառուցակարգեր: Այս առումով կարևորվում է օտարերկրյա ներդրողների հնարավոր կարիքներին համապատասխանության գնահատման համատեքստում տեղի արտադրողների արտադրական, տեխնիկական, նորարարական, կադրային ներուժի համապարփակ վերլուծությունը, աջակցությունը որոշակի ներուժ ունեցող տեղական ընկերությունների կառավարչական, տեխնոլոգիական, նորարարական ներուժի ընդլայնմանը, խորհրդատվական աջակցության տրամադրումը: Ըստ այդմ, կարևորվում է տեղական ընկերությունների համար աջակցության ծրագրերի ներդրումը՝ օտարերկրյա ներդրողներին ծառայությունների մատուցման, ապրանքների մատակարարման կարիքներին համահունչ կարողունակության բարձրացման համար:

Ներդրումների մոնիտորինգի, վերլուծության համակարգը թերի է և հատվածային: Նույնիսկ տարբեր պետական մարմիններ ներդրումների կատարողականի տարբեր գնահատականներ ունեն: Մոնիտորինգի համապարփակ համակարգի ձևավորումը կարևոր նշանակություն ունի ներդրումային քաղաքականության թիրախայնության գնահատման համար: Ըստ այդմ, անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ, թե որ ոլորտներում ինչ ՕՈՒՆ ծավալներ կան, որոնք են նոր ներդրողների, որոնք՝ արդեն գործող ներդրողների ներդրումների ընդլայնումները: Կարևոր մոնիտորինգային տեղեկատվություն է ՕՈՒՆ ընկերությունների վաճառքի ծավալն՝ ըստ ոլորտների, արտահանման բացարձակ և հարաբերական ցուցանիշները, ստեղծված աշխատատեղերի թիվը, դրանց հագեցվածությունը, ՕՈՒՆ ստեղծված ընկերություններում աշխատանքի արտադրողականությունը, ազդեցությունը այլ ճյուղերի և արտադրությունների վրա:

• Նորարականություն, թվայնացում

Հայաստանում, պատմականորեն, ցածր է հետազոտությունների և մշակումների ֆինանսավորումը: Չնայած՝ ԵԱՏՄ մյուս երկրներում իրավիճակը որակապես չի տարբերվում, այնուհանդերձ, ՀՆԱ նկատմամբ 0,2 տոկոս ֆինանսավորման մակարդակը, որի շուրջ, արդեն երրորդ տասնամյակն է, «տեղավորվում» է գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտը, հատկապես գիտատեխնիկական անցման արդի դարաշրջանում կայուն զարգացման որևէ հեռանկար չի կարող ստեղծել: Դիտարկվող ցուցանիշի հայաստանյան մակարդակը 5 անգամ ցածր է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մակարդակից, 7 անգամ գիջում է Թուրքիային, ԵՄ ցուցանիշից ցածր է ավելի քան 10 անգամ (հավելված, գծ. 6):

Ակնհայտ է, որ տնտեսական դիմակայունությունն արդի իրողությունների պայմաններում պետք է ամուր տեխնոլոգիական հենք ունենա: Հետազոտությունների և մշակումների թույլ

Ֆինանսավորման պայմաններում լավագույն դեպքում պետք է որպես թիրախ դիտարկել առկա ներուժի և կարողությունների կորստի կանխումը կամ դանդաղեցումը, բայց ոչ՝ գիտական, ինովացիոն և տեխնոլոգիական ներուժի ընդլայնումը:

Մեկ այլ մտահոգիչ իրողություն՝ նույն ոլորտից: Հետազոտողների թվաքանակը բավականին փոքր է: 1 մլն բնակչության հաշվով Հայաստանում հետազոտական աշխատանքով զբաղվողների թիվը 1200-ից մի փոքր ավելի է, այն դեպքում, երբ տարածաշրջանի մյուս երկրներում ցուցանիշը 1600-2000-ի տիրույթում է: Ավելին, Արևելյան Եվրոպայի՝ նախկին ԽՍՀՄ անդամ երկրներում այն եռակի ավելի է, ԵՄ միջինը 4450 է: Սա գիտական և տեխնոլոգիական ցածր ներուժի ևս մեկ վկայություն է:

Արդյունքում առկա է արտահանման գիտատարության բավականին ցածր մակարդակ: Հայաստանում 2020-ից հետո բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինը ապրանքային արտահանման կառուցվածքում գտնվել է 5-6 տոկոսի տիրույթում (հավելված, գծ. 7):

Զնայած՝ այն համադրելի է տարածաշրջանի երկրների մակարդակի հետ, նույնիսկ՝ որոշներից բարձր է, սակայն մի շարք այլ, գլխավորապես՝ քանակային պարամետրերի մասով մեր մեկնարկային թույլ դիրքերը որակական բարելավումներին, ընդ որում՝ թոփքային, այլընտրանք չեն թողնում: Ի հավելումն, ՀՀ արտահանման տեխնոլոգիականության մակարդակը շուրջ 3 անգամ ցածր է ԵՄ երկրների միջին մակարդակից, ինչը տարբեր հետևությունների առիթ կարող է հանդիսանալ:

Գլոբալ նորարարական ինդեքսի գնահատականով Հայաստանը երկրների վարկանիշային աղյուսակում 72-ն է: Էլ ավելի ցածր է նշված ինդեքսի «բիզնես զարգացում» բաղադրիչով ՀՀ վարկանիշը (աշխարհում 94-րդը), «մարդկային կապիտալ և հետազոտություններ» (92-րդ տեղ), «շուկայի զարգացում» (89-րդ հորիզոնական): ISO 14001 ստանդարտի կիրառականությամբ մենք 125-րդն ենք, մտավոր սեփականության արդյունքի իրացումից մուտքերով՝ 118-րդը, բարձրտեխնոլոգիական արդյունաբերական արտադրանքի թողարկման հարաբերական ցուցանիշով՝ 100-րդը:

Տնտեսության դիմադրունակության և ռեսուրսների արդյունավետ օգտագործման կարևոր գործոններից մեկը թվային տեխնոլոգիաների օգտագործման ընդլայնումն ու խորացումն է: Մինչդեռ ՀՀ-ում բիզնեսի կողմից, հատկապես՝ ՓՄՁ սուբյեկտների, որոնք կազմում են ընդհանուր բիզնես միավորների առնվազն 95 տոկոսը, թվայնացման հնարավորությունները բավարար չափով չեն կիրառվում: Հատկապես շինարարության, առևտրի, կացության և հանրային սննդի ոլորտի, նաև՝ արտադրության ոլորտում գործող ՓՄՁ-ներում նոր տեխնոլոգիաների ներդրումը և թվային մշակույթը գտնվում են միջին կամ միջինից ցածր մակարդակի վրա:

ՓՄՁ թվայնացման հիմնական խոչընդոտներն են՝

1. Թվային ենթակառուցվածքի սահմանափակումները
2. Թվայնացման համար հատուկ ոլորտային աջակցության և պետական ու մասնավոր հատվածների միջև երկխոսության բացակայությունը
3. Գոյություն ունեցող թվային լուծումների և դրանց առավելությունների մասին տեղեկացվածության պակասը
4. Ֆինանսական դժվարությունները

5. Աշխատուժի թվային հմտությունների անբավարար մակարդակը
6. Թվայնացման մեջ ներդրումների համար ուժեղ խթանների բացակայությունը
7. Թանկարժեք խորհրդատվական ծառայությունները
8. Էլեկտրոնային առևտրի զարգացման խոչընդոտները. Էլեկտրոնային ստորագրությունների և կիբեր-անվտանգության խնդիրները
9. Մշակութային և ավանդական գործոնները:

Նշված խոչընդոտների հաղթահարումը կրիտիկական նշանակություն ունի ՓՄՁ ոլորտում և, ընդհանրապես, բիզնեսում թվային լուծումների կիրառման ընդլայնման, տեխնոլոգիական հենքի ուժեղացման, թվային մշակույթի զարգացման և, այդ ամենով, գործունեության արդյունավետության ու դիմակայունության բարձրացման համատեքստում:

Նկարագրված խոչընդոտների հաղթահարման նպատակով արդյունավետ ինստիտուցիոնալ գործիքակազմ և նշանակալի ներուժ են պարունակում թվային նորարարական հանգույցները (ԹՆՀ), որոնք իրենց կենսունակությունն ու արդյունավետությունը ապացուցել են ինչպես տեխնոլոգիապես գերզարգացած, այնպես էլ՝ տնտեսության թվայնացման ոլորտում հետապնդողի համարում ունեցող երկրներում:

ԹՆՀ շրջանակներում իրագործվող գործառնությունները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի.

1. Նորարարական ակտիվություն. վերհանվում են թիրախային ֆիրմաների՝ թվայնացման հնարավորությունները, մշակվում և ներդրվում են նորարարական լուծումներ՝ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ
2. Բիզնեսի զարգացում. աջակցություն է ցուցաբերվում ընկերություններին՝ կիրառելու իրենց լուծումները, գնահատելու բիզնեսի բարելավումների ազդեցությունը, կառավարելու բիզնես մոդելներում թվայնացմամբ պայմանավորված փոփոխությունները
3. Հմտությունների ձևավորում. կառուցվում է նորարարական կարողություն՝ մարդկային կապիտալի զարգացման միջոցով:

ԹՆՀ ձևավորումն ու գործունեության կազմակերպումը նպատակահարմար է հետևյալ երկու մոդելների շրջանակներում.

- Պետական-մասնավոր գործընկերության մոդել, որի շրջանակներում ԹՆՀ-երը ռեսուրսներ են ներգրավում ինչպես մասնավոր, այնպես էլ՝ պետական հատվածներից: Մասնավոր գործընկերները ապահովում են ԹՆՀ գործունեության մեջ առևտրային մոտեցումների ներմուծումը, հանրային հատվածի գործընկերներն աջակցում են հետազոտական կենտրոնների գիտական ենթակառուցվածքների և պետական բյուջեից բազային ֆինանսավորման հասանելիությունը, ինչը չափազանց կարևոր է նորարարությունների աջակցության և առաջադեմ թվային լուծումների զարգացման համար:
- Հետազոտական և տեխնոլոգիական կազմակերպությունների մոդել, որի շրջանակներում հանրային ֆինանսավորմամբ ձևավորվում են առաջնային կարիքների բավարարման համար անհրաժեշտ ռեսուրսներն ու կարողությունները: Տեխնոլոգիական զարգացման հիմքում մասնավոր և հանրային մրցակցային եկամուտն է, բացի այդ, թվային լուծումների տարածումից և տեղակայումից ստացվում է հավելյալ եկամուտ:

Բիզնեսի թվայնացման ճանապարհով տնտեսական դիմակայուն համակարգի ձևավորման քաղաքականության կարևոր բաղադրիչն, ըստ այդմ, ԹՆՀ-երի ձևավորման խթանումն է՝ վերը նկարագրված երկու մոդելների գործադրմամբ: Ընդ որում, կարևոր է.

- Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ու ԹՆՀ-երի սերտ փոխգործակցության ինստիտուցիոնալ հիմքերի ապահովումը: Այս կերպ, ԹՆՀ-երի ու բանկերի միջև, ինչ-որ առումով, կոոպերացիոն կապեր են հաստատվում. ԹՆՀ-ն նախագծում և մշակում է թվային նախագծերի «թվային գնահատականը», որն, իր հերթին, օգտագործվում է բանկերի և ներդրողների կողմից՝ նախագծերի ռիսկերի գնահատման բարելավման և բիզնեսի արդյունավետ դիտարկման համար:

- ԹՆՀ-երի, խոշոր ընկերությունների և ներդրողների միջև արդյունավետ փոխգործակցության կառուցակարգերի ներդրումը: Սա նշանակում է, որ թվայնացման նախագծի վաղ փուլերում, խոշոր կորպորացիաների և ներդրողների ներգրավմամբ, ԹՆՀ-ն օգուտներ է քաղում նոր տեխնոլոգիայի ներուժի վաղ գնահատման և շուկայական ներուժից: Հաջորդիվ, ԹՆՀ-ն կարող է ավելի հստակ սահմանել նախագծային գերակայությունները և աջակցել թվային տեխնոլոգիաներ զարգացնող ընկերություններին՝ դեպի շուկա մուտքը ավելի թիրախային ու արդյունավետ դարձնելու հարցում:

- ԹՆՀ-երին աջակցության տրամադրումը առևտրայնացման ավելի մեծ ներուժ ունեցող արտադրատեսակների մշակման և առաջնորման հարցում:

- Ընկերություններին թվային հասունության, ինքնագնահատման հնարավորությունը ընձեռնող, ստանդարտացված գործիքներով հագեցած առցանց հարթակի մշակումը և ներդրումը: Այն թույլ կտա ավելի օպերատիվ կերպով գնահատել կարիքները, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսների գծով, և ֆինանսավորումը դարձնել ավելի թիրախային:

- Թվայնացման կարիք ունեցող բիզնեսների համար տեխնիկական աջակցության վաուչերային սխեմայի, ինչպես նաև՝ տեխնոլոգիական լուծումների մատակարարների հետ արդյունավետ փոխգործակցության հարթակների ներդրումը:

- ԹՆՀ շրջանակներում թվային լուծումների ներդրման երաշխիքային, նաև՝ բաժնետոմսերի թողարկման աջակցությամբ ֆինանսավորման սխեմաների ներմուծումը:

Ըստ էության, նկարագրված առաջարկությունները միտված են բիզնես միավորների թվային անցումն ապահովել հանրային և մասնավոր ռեսուրսների համադրմամբ, որոնք իրենց կենսունակությունն ապացուցել են, մասնավորապես, ԵՄ զգալի թվով երկրներում:

• Տարածաշրջանային և գլոբալ կոմունիկացիաներ

Հարավային Կովկասը կարևոր հաղորդակցային հանգույց է թե՛ ավելի լայն տարածաշրջանի, թե՛, նույնիսկ, գլոբալ առևտրային հոսքերի համատեքստում: Այս առումով, Հայաստանը գլոբալ և տարածաշրջանային հաղորդակցության ուղիների նշանակալի օղակ



Լուսանկար՝ Georgia Today

դառնալու ներուժ ունի, որի արդյունավետ իրացումը մեր տնտեսության դիմակայունության բարձրացման ռազմավարության կարևորագույն բաղադրիչներից է:

ՀՀ կառավարության կողմից «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության առաջնությունը այս առումով կարևոր քայլ պետք է համարել: Այն, ըստ որում, ունի ոչ միայն նշանակալի քաղաքական բաղադրիչ, այլ նաև՝ էական տնտեսական օգուտ ապահովելու լուրջ ներուժ:

Այսպես, ԵՄ-Չինաստան երկկողմ ապրանքային հոսքերը տարեկան կազմում են շուրջ 1 տրլն ԱՄՆ դոլար, և չնայած՝ այդ հոսքերի գերակշիռ մասը ապահովվում է ծովային ճանապարհով, այնուհանդերձ, ցամաքային բեռնափոխադրումների ծավալները ևս տպավորիչ են: Նույն կերպ, ԵՄ-Հնդկաստան երկկողմ ապրանքաշրջանառության տարեկան ծավալը կազմում է շուրջ 250 մլրդ ԱՄՆ դոլար, որը ևս նշանակալի ցամաքային բաղադրիչ ունի:

Չինաստան-ԵՄ բեռնափոխադրումների զգալի մասը կատարվում է ծովային ճանապարհով: Այն բեռնափոխադրման առավել էժան, սակայն, ժամանակային առումով, բավականին տևական (28-40 օր) տարբերակ է, ընդ որում, վերջին ժամանակներս անվտանգության ռիսկերը զգալիորեն աճել են: Ցամաքային բեռնափոխադրումների առյուծի բաժինը կատարվում է «Հյուսիսային միջանցքով», որը Չինաստանը Ղազախստան-Ռուսաստան-Բելառուս ուղեգծով կապում է ԵՄ երկրների հետ: 2021թ. տվյալներով, այս երթուղով 2021թ. կատարվել է շուրջ 1,5 մլն TEU* ծավալով բեռնափոխադրում: Նույն ժամանակահատվածում մեկ այլ՝ «Միջին միջանցքով», որը Չինաստան-ԵՄ կապն ապահովում է Ղազախստան-Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա ուղեգծով, տեղափոխվել է ընդամենը 9000 TEU ծավալով բեռ: Ռուս-ուկրաինական պատերազմը, սակայն, էապես ավելացրել է Հարավային Կովկասով անցնող կապուղիների կարևորությունը ԵՄ-Չինաստան ցամաքային կապի համար: ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցների հետևանքով «Հյուսիսային միջանցքով» բեռնափոխադրումների

* TEU- Twenty-foot Equivalent Units՝ 20 ոտնաչափ երկարությամբ բեռնարկղի ստանդարտ միավոր:

ծավալը կրճատվել է ավելի քան 40 տոկոսով, ընդ որում, ներկայումս այդ բեռնափոխադրումները սպասարկում են գլխավորապես Չինաստան-Ռուսաստան առևտրային կապերը: Չուգահեռաբար, «միջին միջանցքով» բեռնափոխադրումների ծավալը գրեթե եռապատկվել է, չնայած՝ դեռևս հեռու է նախապես ազդարարված կանխատեսումային 50 հազար TEU մակարդակից: Մյուս կողմից, ԵՄ փորձագետների գնահատմամբ, շուրջ 5 մլրդ դոլարի չափով ներդրումներ կատարելու և միջմոդալ անցումների արդյունավետությունը բարձրացնելու, նաև՝ մաքսային սպասարկման ու այլ լոգիստիկ գործընթացների (օրինակ, Կասպից ծովի նավահանգիստներում բեռների ձևակերպման, բեռնման-բեռնաթափման և այլն) արդյունավետությունը բարձրացնելու պարագայում «միջին միջանցքի» թողունակությունը կարելի է հասցնել տարեկան մինչև 80-150 հազար TEU-ի:

Հատկանշական է, որ Միջին միջանցքի երկաթուղու՝ աշխարհագրորեն օպտիմալ երթուղին անցնում է ՀՀ հյուսիսային հատվածով՝ Իջևան-Վանաձոր-Գյումրի ուղեգծով: Այս գծի շահագործման համար հարկավոր է Վանաձոր-Փիոլետովո հատվածում մոտ 25-32 կմ հատվածի շինարարություն և Փիոլետովո-Ղազախ հատվածում մոտ 81 կմ հատվածի վերականգնում (որից 68 կմ՝ ՀՀ տարածքում)³:

Ըստ որում, Հյուսիսային միջանցքի 13 հազար կմ հեռավորության համեմատությամբ ՀՀ տարածքով անցնող ուղեգիծը ներառող Միջին միջանցքի երթուղին կարճ է շուրջ 3000 կմ-ով՝ դրանից բխող տնտեսական բնույթի օգուտներ քաղելու լուրջ ներուժով: Մասնավորապես, Կարս-Գյումրի-Վանաձոր-Ղազախ-Բաքու երթուղին, ներկայումս գործող Կարս-Թբիլիսի-Բաքու գծի համեմատությամբ, կարճ է 107 կմ-ով:

Ի հավելումն, Մեղրու երկաթգծի շահագործումը, նաև՝ Սյունիքով Ադրբեջանի հիմնական մաս-Նախիջևան գազատարի վերագործարկումը ՀՀ-ին կարող են նշանակալի տնտեսական օգուտներ ապահովել.

- Ադրբեջանի հիմնական հատված-Նախիջևան տարեկան բեռնափոխադրումները կազմում են շուրջ 1 մլն տոննա, որը ներկայումս կազմակերպվում է ԻԻՀ տարածքով
- Ադրբեջանը Իրանի տարածքով տարեկան 350 մլն մ³ գազ է մատակարարում Նախիջևան: Դրա 15%-ը (կամ ավելի քան 50 մլն մ³ գազ) մնում է Իրանին՝ որպես տարանցման վճար:
- Թուրքիայի արևելյան շրջանների արտահանումային ներուժը դեպի Ադրբեջան, Միջին Ասիայի երկրներ զգալիորեն թերօգտագործվում է: Փորձագիտական գնահատականների համաձայն՝ Մեղրիի երկաթուղու գործարկման պարագայում Թուրքիայի արևելյան շրջաններից արտահանումը կարող է եռապատկվել՝ տարեկան գերազանցելով 500 մլն ԱՄՆ դոլարը:

Թուրքիայի և Միջին Ասիայի երկրների միջև նշանակալի ապրանքաշրջանառություն կա, փոխադարձ առևտրի տարեկան ծավալը գերազանցում է 10 մլրդ ԱՄՆ դոլարը, ինչը օպտիմալ լոգիստիկ կապուղու գործարկման պարագայում աճի մեծ ներուժ ունի:

Հայաստանի տարածքով միջին միջանցքի երթուղու գործարկումը հնարավորություն կտա ցամաքային և երկաթուղային բեռնափոխադրումներն իրականացնել ավելի էժան, քան՝ Հյուսիսային միջանցքով: Այսպես, երկաթուղային բեռնափոխադրման տոննա/կմ-ի ինքնարժեքը

³ Միջին միջանցքը և Հայաստանի հյուսիսային երթուղին, RCSP առցանց պարբերական (հեղ.՝ Ս.Մելիքսեյան), 03 հունիսի, 2025թ. (<https://rcsp.am/entry/7338/mijin-mijancqy-ev-hayastani-hyusisayin-ertux/>):

կարող է միջինում կազմել 0,85 ԱՄՆ դոլար՝ այն դեպքում, երբ Հյուսիսային միջանցքով բեռնափոխադրման պարագայում ինքնարժեքը 1,35 ԱՄՆ դոլար է: Նույն կերպ, ավտոմոբիլային բեռնափոխադրման դեպքում տոննա/կմ ինքնարժեքը կարող է կազմել միջինում 1,15 ԱՄՆ դոլար: ՌԴ տարածքով նույն բեռնափոխադրման տրանսպորտային ծախսը կազմում է միջինում 1,35 ԱՄՆ դոլար:

Հայաստանի տարածքով Արևելք-Արևմուտք տարանցիկ ապրանքային հոսքի ծավալը միջնաժամկետ հատվածում կարող է հասնել 3-4 մլն տոննայի, ինչը թույլ կտա տարեկան գեներացնել մինչև 20 մլն ԱՄՆ դոլարի չափով բյուջետային մուտքեր*:

Ի հավելումն, ներկառուցվելով Հարավային Կովկաս-Միջին Ասիա լոգիստիկ շղթային, հնարավորություն կընձեռնվի որոշակիորեն դիվերսիֆիկացնել տնտեսական անվտանգության տեսանկյունից էական նշանակություն ունեցող ապրանքների մատակարարման աղբյուրները, նվազեցնել մեկ աղբյուրից կախվածությունը: Օրինակ, Հայաստանում ցորենի ինքնաբավության մակարդակը ընդամենը 20-25 տոկոս է, ներմուծումը գլխավորապես կատարվում է ՌԴ-ից: Ցորենի խոշոր արտադրող է Ղազախստանը, որը նախորդ տարի արտահանել է ավելի քան 8 մլն տոննա: Լոգիստիկ կապուղիների գործարկման պարագայում, միջնաժամկետ հատվածում հնարավոր կլինի ներկրման մինչև 40%-ը ապահովել Ղազախստանից, որի հետ միևնույն մաքսային տարածության մաս կազմելը գնային հնարավոր տարբերությունների կառավարման լրացուցիչ գործիք կարող է հանդիսանալ: Նույնը կարելի է կիրառել նաև նավթամթերքի պարագայում. այսօր ՀՀ ներմուծվող բենզինի և դիզելային մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացիայի գլխավոր խոչընդոտը լոգիստիկ կապուղիների բացակայությունն է:

Լոգիստիկ շղթայի արդյունավետ կազմակերպման կարևոր նախապայմաններից է տարանցման արագ կազմակերպումը՝ հնարավորինս հեշտացված ընթացակարգերով: Այս ոլորտում ներկայումս առկա է բավական հարուստ փորձ, որը հիմնված է թվային տեխնոլոգիաների լայն կիրառմամբ տարբեր կառույցների կոորդինացված փոխգործակցության կազմակերպման վրա: Օրինակ, տարբերակներից մեկը Հարավային Ամերիկայի երկրներում կիրառվող TIM* համակարգն է, որի շրջանակներում ապրանքների տարանցումը իրականացվում է երեք հենասյուների արդյունավետ գործարկման վրա:

- ✓ **Գործընթացի ռեինժեներինգ.** TIM-ը ներդաշնակեցնում է տարբեր թղթային հայտարարագրերը միասնական էլեկտրոնային փաստաթղթի մեջ, որը ներառում է ապրանքի մաքսային սպասարկման գործընթացում ներգրավված բոլոր ծառայություններին անհրաժեշտ տեղեկատվությունը
- ✓ **Տեղեկատվական տեխնոլոգիա.** TIM-ը միավորում է նախագծին մասնակցող բոլոր երկրների բոլոր գործակալությունների ներքին համակարգերը (այն մասով, որն անհրաժեշտ է տարանցման սպասարկման համար) և ներառում է ռիսկի կառավարման, բեռնային վերահսկողության համակարգերը, ներառյալ՝ միասնական սերվերը, որում ներբեռնվում է ամբողջ տեղեկատվությունը, և որը վիճակագրություն է տրամադրում յուրաքանչյուր սահմանափակում համար անհրաժեշտ չափումների ու գնահատականների համար:

* Հաշվարկը հիմնված է տարանցման գնի տարածաշրջանային միջինի գնահատման վրա:

* Թարգմանաբար՝ տարանցվող ապրանքներ:

- ✓ **Կոոպերացիա.** համակարգի շրջանակներում կատարվում է տարանցման գործընթացի շահառու և ներգրավված գործակալությունների միջև կոոպերացում:
Նմանօրինակ համակարգ կարող է գործարկվել ՀՀ ինքնիշխան տարածքով բեռնափոխադրումների պարզեցված և հնարավորինս անխոչընդոտ տարանցման կազմակերպման համար:

- **Մարդկային կապիտալ**

Տնտեսական դիմակայունության ապահովման հիմնական առանցքներից մեկը մարդկային կապիտալն է: Այն մարդկանց գիտելիքի, հմտությունների և առողջության կուտակված մակարդակն է, որը թույլ է տալիս իրացնել նրանց, որպես հանրության արտադրողական անդամների, ներուժը: Կա գնահատական, ըստ որի՝ Հայաստանում ծնված երեխան եթե ստանա լիարժեք կրթություն և առողջապահական ծառայություններ, ապա, որպես աշխատուժ և հանրության մաս, իր ողջ հետագա գործունեության ընթացքում, ներկայիս միջին վիճակագրական աշխատողի համեմատությամբ, կլինի 57 տոկոսով ավելի արդյունավետ ու արտադրողական: Ավելին, կրթական և առողջապահական ծառայությունների բարելավումը երկարաժամկետ հատվածում կհանգեցնի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի առնվազն 75%-ով ավելացման: Մեզնում շատ հաճախ որպես օրինակելի մեջբերվող «սինգապուրյան տնտեսական հրաշքի» հիմքում նաև մարդկային կապիտալի առաջանցիկ զարգացումն էր. 50 տարվա ընթացքում երկրի ՀՆԱ-ն ավելացավ շուրջ 14 անգամ, ինչը մեծապես նաև 1960-90-ական թվականներին կառավարության կողմից նախաձեռնված ու արդյունավետ կենսագործված բնակչության կրթական և առողջապահական մակարդակի բարձրացման տարբեր քաղաքականությունների արդյունք էր:

Մարդկային կապիտալի զարգացումը ամենատարբեր քաղաքականությունների համակցման արդյունք է, որը հնարավոր է արդյունավետ կառավարման ու կարողունակ բյուրոկրատիայի պայմաններում: Այն պահանջում է ռեսուրսային սահմանափակության, ոչ նպաստավոր ժողովրդագրական միտումների և կառավարման մարտահրավերները հաղթահարել ոլորտային ծրագրերի համակարգման, քաղաքական պարբերաշրջանների միջև արդյունավետ խուսանավման, միջազգային լավագույն փորձի պարբերական վերլուծության և տեղայնացման խնդիրների շարունակական լուծում:

Մարդկային կապիտալի թերի կատարողականը ուղեկցվել է կրթական և առողջապահական ոլորտների թույլ ֆինանսավորմամբ. ՀՆԱ-ում այս ոլորտներում բյուջետային ծախսերի մակարդակը երկարաժամկետ հատվածում 1,5-2 տոկոսի տիրույթում է, այն դեպքում, երբ ՀՀ-ի հետ նույն եկամտային խմբում գտնվող երկրներում այն առնվազն 2-2,5 անգամ բարձր է:

Մարդկային կապիտալի զարգացման հիմնական մարտահրավերներն են.

- աշխատաշուկայի կարիքների և բարձրագույն կրթության ծառայությունների միջև խզումը,
- որակյալ նախադպրոցական կրթական հաստատությունների սահմանափակ քանակությունը և հասանելիության սահմանափակությունը,
- առողջապահության և կրթության ոլորտներում ներդրումների ցածր մակարդակը
- որակյալ առողջապահական և կրթական ծառայությունների հասանելիության տարածքային սահմանափակումները,

- սոցիալական ծառայությունների միջոցով մարդկային կապիտալի զարգացման թույլ հնարավորությունները,
- վատ կառավարումը:

Այս մարտահրավերների արդյունավետ թիրախավորման համար անհրաժեշտ է դիտվում.

- Նախադպրոցական կրթության ներառականության բարձրացման համար ծախսարդյունավետ ֆինանսավորման մեթոդների ներդրում՝ հիմնվելով ԵՄ լավագույն փորձի վրա:

- Միջին մասնագիտական կրթության համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման, կրթական համակարգի մյուս մակարդակների հետ ինտեգրման ճկուն մեխանիզմների կիրառման, միջին մասնագիտական կրթական հաստատությունների տեխնիկական վերագինման ու կրթության որակի բարձրացման, տարածքային հասանելիության մակարդակի բարձրացման միջոցով: Միջին մասնագիտական կրթական հաստատություններն ունեն լուրջ մրցակցային հնարավորություններ, որոնք բավարար չափով չեն օգտագործվում: Մասնավորապես, դրանք հնարավորություն են տալիս համեմատաբար կարճ ժամկետում ձեռք բերել կիրառելի մասնագիտություն՝ առանց տեսական ավելորդ ծանրաբեռնվածության, թույլ են տալիս բավարարել բանվորական ու միջին մասնագիտական հմտությունների նկատմամբ աշխատաշուկայի աճող պահանջարկը, կարող են մեղմել տարածքային զարգացման անհամաչափության խորացումը և, հատկապես, հեռավոր բնակավայրերից արտագաղթը, նոր զարգացող ճյուղերի համար կադրերի պահանջարկը բավարարել ավելի ճկուն կերպով:

- Մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի վերանայումն ու բարելավումը՝ աշխատաշուկայի կարիքների մոնիտորինգի արդյունքների հիման վրա և պոտենցիալ գործատուների ներգրավմամբ

- Հեռավար և հիբրիդային ուսուցման ձևաչափերի կիրառման ընդլայնմամբ, հատկապես ոչ երևանամերձ մարզային բնակավայրերի բնակչության համար, կրթական որակյալ ծառայությունների հասանելիության բարձրացումը:

- Կրթական երրորդ մակարդակում ընդունելության համակարգի ներառականության աճ, բյուջետային ֆինանսավորման մոտեցումների փոփոխություն՝ բարձրագույն կրթության մատչելիության բարձրացման թիրախավորմամբ, մասնավորապես, ուսման վարձավճարի հատուցման կապակցումը սոցիալական կարգավիճակի ու վնարունակության գնահատականի հետ: Այստեղ կարելի է ներդնել նաև «պայմանական տրանսֆերտի» գործիքակազմը:

- Կրթական և առողջապահական հաստատությունների ֆինանսավորման կարիքի գնահատման և արդյունավետության թիրախավորման մոտեցումների ներդրում:

- Վարձու աշխատողների աշխատանքային հմտությունների զարգացման և կրթական մակարդակի բարձրացման համար աջակցություն ցուցաբերել հատկապես ՓՄՁ սուբյեկտներում աշխատանքի վրա հիմնված ուսուցման հնարավորությունների ֆինանսավորման համար:

- Հանրային-մասնավոր գործընկերության գործիքակազմի կիրառմամբ և պետական ֆինանսական նշանակալի աջակցությամբ ձևավորել ճարտարագիտական որակավորումների բարձրացման կենտրոն, որտեղ մինչև 6 ամիս տևողությամբ թիրախային գործնական և

նորագույն տեխնոլոգիաների կիրառման վրա հիմնված մասնագիտական ուսուցում կանցկացվի էներգետիկ, էլեկտրատեխնիկական, տրանսպորտային և նմանատիպ այլ ոլորտներում կադրերի վերապատրաստման համար՝ նպատակ ունենալով ծածկել համապատասխան ոլորտներում մասնագետների սուր կարիքը:

- Ներդնել ցկյանս ուսուցման և, հատկապես, 50+ տարիքի անձանց մասնագիտական վերակողմնորոշման, վերապատրաստման կենտրոնների ձևավորման համաֆինանսավորման (պոտենցիալ գործատուների և այլ շահառուների հետ համատեղ)՝ միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող և իրենց կենսունակությունը ի ցույց դրած գործիքներ:

Ըստ էության, ռազմավարական հեռանկարում ՀՀ մարդկային կապիտալի զարգացումը պետք է ապահովվի կրթական և առողջապահական ծառայությունների ներառականության բարձրացման նորարարական գործիքների ներդրման, ցկյանս ուսուցման, կադրերի վերակողմնորոշման, մասնագիտական կադրերի կարիքի համակողմանի գնահատման և, դրա արդյունքներից ելնելով, առաջարկի ձևավորման ճկուն համակարգի ներդրման ճանապարհով:

Ամփոփում և առաջարկություններ

ՀՀ տնտեսական դիմադրունակության բարձրացումը պահանջում է բազմաշերտ և համակարգված միջոցառումների մշակում և կենսագործում արտահանման, ներդրումների խթանման, թվային և նորարարական լուծումների ակտիվ գործադրման, լոգիստիկ կարողությունների ընդլայնման, մարդկային կապիտալի զարգացման ուղղություններով:

1. ՀՀ արտահանման ընդլայնման խնդիրների լուծման և արտահանման խթանման ներուժային հնարավորությունների արդյունավետ օգտագործման համատեքստում հատկապես կարևորվում է.

- ✓ Արտաքին առևտրի դյուրացմանը միտված միջոցառումների իրականացումը՝ առևտրի դյուրացման հստակ ճանապարհային քարտեզի մշակմամբ և իրագործմամբ, արտաքին առևտրի ընթացակարգերի ավտոմատացման ու թվայնացման խորացմամբ և մասշտաբների ընդլայնմամբ, արտաքին առևտրային հոսքերի սպասարկման գործընթացների տեխնիկական հագեցվածության բարձրացմամբ, ընթացակարգերի օպտիմալացմամբ:
- ✓ Արտաքին առևտրում ՓՄՁ ներգրավվածության խթանումը, որն առաջին հերթին պետք է ներառի ՓՄՁ արտաքին տնտեսական գործունեության ինստիտուցիոնալ պայմանների բարելավումը, արտահանման աջակցության ենթակառուցվածքային հենքի զարգացումը, ֆինանսական խթանման համակարգի ձևավորումը, մասնավորապես, արտահանումային ծախսերի սուբսիդավորման ճկուն գործիքների կիրառումը:
- ✓ Տնտեսական դիվանագիտության ակտիվացում՝ դիվանագիտական ներկայացուցչությունների համապատասխան ստորաբաժանումները արտահանող կազմակերպությունների համար վերածելով «սպասարկման կենտրոնների», իրականացնելով իրենց տեղակայման երկրում տնտեսական գործընկերների որոնման, տեղեկատվական աջակցության, գործարքների ձևակերպման, իրավական աջակցության գործառնություններ:

- ✓ Նոր շուկաներ մուտքի աջակցություն՝ ընկերությունները նախապես դասակարգելով ըստ արտաքին շուկայում դիրքավորման փուլայնության և վերջինիս առանձնահատկություններից բխող հասցեական աջակցության գործիքների, միջոցառումների կիրառմամբ:
- 2. Ներդրումների խթանման հիմնական ուղղություններից են.
 - ✓ Ներդրողների շահերի պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացումը՝ վեճերի լուծման նախադատարանային, միջնորդական և իրավունքների պաշտպանության առաքելությամբ օժտված ներդրումների օմբուդսմենի ինստիտուտների ներդրմամբ:
 - ✓ Ներդրողների գույքային աջակցության համակարգի գործարկումը՝ գույքի ձեռքբերման ընթացակարգերի պարզեցումից մինչև պատրաստի գույքային համալիրների առաջարկում:
 - ✓ Ներդրողների հետ արդյունավետ երկխոսության, տեղեկատվության փոխանակման հարթակների ձևավորումը:
 - ✓ ՕՈԲՆ ինստիտուցիոնալ համակարգում մասնավոր հատվածի մասնակցության մեխանիզմների ներդրում, ՏԻՄ շահադրդման գործիքների մշակում, ներդրումների մոնիտորինգի համակարգի ներդրում:

3. ՀՀ դիմադրունակության բարձրացման կարևոր հարթություն է տնտեսության նորարականության մակարդակի բարձրացումը, թվայնացման խորացումն ու արդիական լուծումների կիրառման շրջանակի ընդլայնումը: Այստեղ հիմնական մարտահրավերները կենտրոնացած են թվային ենթակառուցվածքի սահմանափակումների, թվայնացման ոլորտային աջակցությունների ոչ համարժեքության, պետական ու մասնավոր հատվածների միջև երկխոսության ցածր մակարդակի, ֆինանսական սահմանափակումների, աշխատուժի թվային անբավարար հմտությունների, նորարարությունների և թվայնացման ոլորտում ներդրումների համար բավարար խթանների բացակայության, պոտենցիալ շահառուների շրջանում տեղեկատվական անբավարար աջակցության, մշակութային և ավանդական որոշ սահմանափակող գործոնների շուրջ:

Նկարագրված խոչընդոտների հաղթահարման նպատակով արդյունավետ ինստիտուցիոնալ գործիքակազմ և նշանակալի ներուժ են պարունակում թվային նորարարական հանգույցները (ԹՆՀ), որոնք իրենց կենսունակությունն ու արդյունավետությունը ապացուցել են ինչպես տեխնոլոգիապես գերզարգացած, այնպես էլ՝ տնտեսության թվայնացման ոլորտում հետապնդողի համարում ունեցող երկրներում: Դրանք, ըստ էության, միտված են բիզնես միավորների թվային անցումն ապահովել հանրային և մասնավոր ռեսուրսների համադրմամբ և կարող են ձևավորվել երկու մոդելների զուգակցմամբ: Առաջինը ենթադրում է պետական մասնավոր գործընկերության կառուցակարգերի ներդրում, երկրորդը հետազոտական և տեխնոլոգիական կազմակերպությունների մոդելն է, որի շրջանակներում հանրային ֆինանսավորմամբ ձևավորվում են առաջնային կարիքների բավարարման համար անհրաժեշտ ռեսուրսներն ու կարողությունները:

4. Հայաստանը գլոբալ և տարածաշրջանային հաղորդակցության ուղիների նշանակալի օղակ դառնալու ներուժ ունի, որի արդյունավետ իրացումը մեր տնտեսության դիմակայունության բարձրացման ռազմավարության կարևորագույն բաղադրիչներից է: Այս

առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ մեր երկրում տարանցման արագ կազմակերպման համակարգերի ներդրումը: Դրանցից է, օրինակ, TIM համակարգը, որի հիմնված է փաստաթղթային հայտարարագրերի՝ միասնական էլեկտրոնային փաստաթղթի մեջ ներկառուցման, տարբեր երկրների համապատասխան գործակալությունների միասնական թվային համակարգի ձևավորման, դրա շրջանակներում ռիսկի կառավարման և բեռնային վերահսկողության միասնական կազմակերպման վրա:


Դիմադրունակության բարձրացման հաջորդ առանցքային ուղղությունը մարդկային կապիտալի զարգացումն է, որի հիմնական թիրախներն են աշխատաշուկայի կարիքների և կրթական ծառայությունների միջև խզման կրճատումը, տարբեր մակարդակներում կրթական ծառայությունների հասանելիության բարձրացումը, ներդրումային ակտիվության խթանումը, արդյունավետ կառավարումը:

• Օգտագործված գրականություն


1. ԱՀԿ, world tariff profiles
https://www.wto.org/english/res_e/publications_e/world_tariff_profiles24_e.htm
2. Համաշխարհային բանկ, համաշխարհային զարգացման ցուցիչներ, Logistic performance index, <https://lpi.worldbank.org/international/global>
3. Մելիքսեթյան Ս., Միջին միջանցքը և Հայաստանի հյուսիսային երթուղին
<https://rcsp.am/entry/7338/mijin-mijancqy-ev-hayastani-hyusisayin-ertux/>
4. 2024 Kearney Foreign Direct Investment Confidence Index, Figure 6,
<https://www.kearney.com/service/global-business-policy-council/foreign-direct-investment-confidence-index/2024-full-report>
5. A Trade Competitiveness Diagnostic for Armenia, World Bank, 2023
6. Anton Usov, “EBRD Researches Sustainable Transport Connections between Central Asia and Europe”, EBRD.com, <https://www.ebrd.com/home/news-and-events/news/2022/ebrd-researches-sustainable-transport-connections-between-central-asia-and-europe.html>
7. Avnimelech G., Teubal M. Venture Capital Start-up Co-evolution and the emergence and Development of Israel’s New High-tech Cluster. Part 1: Macro-background and Industry Analysis.-Economy, Innovation, New Technology, 2004, vol 13, N1.
8. Global innovation index 2023 <https://www.wipo.int/en/web/global-innovation-index/2023/index>
9. Ilahi, N., A. Khachatryan, W. Lindquist, N. Nguyen, F. Raei, and J. Rahman, (2019) “Lifting Growth in the Western Balkans: the Role of Global Value Chains and Services Exports”, European Department paper, International Monetary Fund, Washington, DC.
10. IMF Working Paper , Raising Armenia’s Export Potential , Prepared by Klakow Akepanidaworn, Lili Karapetyan, Nathalie Reyes, and Yulia Ustyugova, 2022.
11. International Investment Trends https://unctad.org/system/files/official-document/wir2024_ch01_en.pdf
12. Jankowska, A., A. Nagengast, and J.R. Perea. The Product Space and the Middle-Income Trap: Comparing Asian and Latin American Experiences

13. Middle Corridor Unable to Absorb Northern Volumes, Opportunities Still There
RailFreight.com [https://www.rail freight.com/specials/2022/03/18/middle-corridor-unable-toabsorb-northern-volumes-opportunities-still-there/?gdpr= deny](https://www.railfreight.com/specials/2022/03/18/middle-corridor-unable-toabsorb-northern-volumes-opportunities-still-there/?gdpr=deny)
14. Nikolas Schmidt, Ricardo Giucci, Implications of the GSP+ graduation for the Armenian textile sector [https://www.german-economic-team.com/wp-content/uploads/ 2022/01/GET_ARM_PB_06_2020.pdf](https://www.german-economic-team.com/wp-content/uploads/2022/01/GET_ARM_PB_06_2020.pdf)
15. OECD (2024), Հայկական բիզնեսի թվային փոխակերպման խթանում, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/39832672-hy>
16. Reid Standish, “China’s Belt and Road Focuses on New Eurasian Trade Routes Due to Ukraine War”, RFE/RL, <https://www.rferl.org/a/china-ukrainewar-eurasian-trade-routes-russia-standish/31948987.html>
17. Strategic Human Capital Investments toward a more Prosperous and Inclusive Armenia, 2020
International Bank for Reconstruction and Development / The World Bank
18. United Nations, Economic and Social Council, Economic Commission for Europe, Progress Update on the Operational Capacity of the Trans-Caspian and Almaty-Istanbul Corridors
[https://unece.org/sites/default/files/2022- 08/ECE-TRANS-WP5-2022-01e.pdf](https://unece.org/sites/default/files/2022-08/ECE-TRANS-WP5-2022-01e.pdf)
19. World Bank (2020), Improving Freight Transit and Logistics Performance of the Trans-Caucasus Transit Corridor, <https://documents1.worldbank.org/curated/en/701831585898113781/pdf/Improving-FreightTransit-and-Logistics-Performance-of-the-Trans-Caucasus-Transit-Corridor-Strategy-andAction-Plan.pdf>
20. world tariff profiles,
https://www.wto.org/english/res_e/publications_e/world_tariff_profiles24_e.htm


- ՀԱՎԵԼՎԱԾ




Պժ. 1. Հայաստանի տնտեսական բարդության ինդեքսի դինամիկան 2000-2021թթ.



Պժ. 2. Տնտեսական բարդության ինդեքսի արժեքով երկրների վարկանիշի դինամիկան 1995-2021թթ.




Գծ. 3. Համակենտրոնացման ցուցանիշներն՝ ըստ արտահանման երկրների, տոկոսով ընդամենի նկատմամբ, ՀՀ տվյալներ




Գծ. 4. Արտահանման համակենտրոնացման կառուցվածքն՝ ըստ ապրանքախմբերի. 5 խոշորագույնների գումարային մասնաբաժինը, տոկոսներով

Կատեգորիա	Հայաստան	Վրաստան	Լիտվա
Տեղեկատվության մատչելիություն	1.57	1.69	1.71
Առևտրային հանրության մասնակցություն	1.14	1.87	2
Առաջադեմ կարգավորում	1.67	1.45	1.91
Բողոքարկման ընթացակարգեր	1.78	1.31	1.54
Վճարներ	1.85	1.5	1.86
Ձևակերպում. փաստաթղթեր	1.38	1.89	2
Ձևակերպում. ավտոմատացում	1.36	1.69	1.77
Ձևակերպում. ընթացակարգեր	1.52	1.62	1.75
Ներքին միջսահմանային փոխգործակցություն	1.00	1.73	1.55
Արտաքին սահմանային գործակցություն	0.82	1.09	1.54
կառավարում	1.89	2	2
Ընդհանրական գնահատական	15,97	17,77	19,63


Աղյուսակ 1. Առևտրի դուրսացման ցուցիչների գնահատականները



ՊՃ. 5. ՕՈԲՆ գույտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում, տոկոսներով



ՊՃ. 6. Հոսք ծախսերը՝ տոկոսով ՀՆԱ նկատմամբ



ՊՃ. 7. Բարձր տեխնոլոգիական արտահանումը ապրանքային արտահանման կառուցվածքում, տոկոսներով, 2021թ.

ՄԱՍ 4. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԲԱՂԱԴՐԻԶ

Հեղինակ՝ Մանե Աղամյան

Ծնորհիվ իր ռազմավարական աշխարհագրական դիրքի՝ Հարավային Կովկասը կարևոր տարանցիկ նշանակություն ունի էներգետիկ աշխարհաքաղաքականության մեջ, կամրջելով բնական ռեսուրսներով հագեցած Կասպից ծովի ավազանի երկրները Եվրոպայի հետ: Այս դերն առավել նշանակալից է դարձել հատկապես ռուս-ուկրաինական պատերազմի համատեքստում՝ հաշվի առնելով Ռուսաստանից Եվրոպայի էներգետիկ կախվածությունը նվազեցնելու և ներմուծվող էներգետիկ ռեսուրսները դիվերսիֆիկացնելու անհրաժեշտությունը: Հայաստանը, սակայն, իր աշխարհագրական դիրքից չի կարողացել օգուտներ քաղել՝ Ադրբեջանի և Թուրքիայի վարած մեկուսացման քաղաքականության և դրան հակակշռող սեփական քաղաքականության բացակայության արդյունքում: Տասնամյակներ շարունակ տարածաշրջանային խոշոր ենթակառուցվածքային ծրագրերը չրջանցել են Հայաստանը՝ խորացնելով վերջինիս կախվածությունը Ռուսաստանի էներգակիրներից: Արդյունքում, Հայաստանում սպառվող բնական գազի շուրջ 85%-ը և վառելիքի շուրջ 75%-ը ներմուծվում է մեկ աղբյուրից՝ Ռուսաստանից, ինչն էներգետիկ անվտանգության տեսանկյունից առանցքային մարտահրավեր է՝ հատկապես հաշվի առնելով, որ Հայաստանի հիմնական էներգետիկ աղբյուրը բնական գազն է (էներգակիրների ընդհանուր կառուցվածքում շուրջ 60%), ինչն աշխարհում ամենախոշոր ցուցանիշներից մեկն է: Ընդհանուր առմամբ, Հայաստանի էներգետիկ ինքնաբավությունը կազմում է ընդամենը 26.5%:

Հայաստանը շրջանցող տարածաշրջանային խոշոր էներգետիկ ենթակառուցվածքները

- **Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ**

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղը Կասպից ծովից Միջերկրական ծով ձգվող 1768 կմ երկարությամբ (որից 443 կմ՝ Ադրբեջանում, 249 կմ՝ Վրաստանում, 1076 կմ՝ Թուրքիայում) և 42 դյույմ (~1 մետր) տրամագծով խողովակաշար է, որի օրական թողունակությունը կազմում է 1,2 մլն բարել: Նավթամուղը կառուցվել է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ ընկերության կողմից, որը կառավարվում է բրիտանական «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերության կողմից: Ենթակառուցվածքը գործարկվել է 2006թ. և մինչ օրս տեղափոխել է ավելի քան

4.3 մլրդ բարել (576 մլն տոննա) հում նավթ: Իրենց բնական ռեսուրսների տեղափոխման նպատակով այս ենթակառուցվածքից որոշակի ծավալով օգտվում են նաև Ղազախստանն ու Թուրքմենստանը:



Լուսանկարը՝ Radar.am-ի

ԲԹՁ նավթամուղի համասեփականատերերն են.

Ընկերության անվանում	Ծագման երկիր	Մասնաբաժին
British Petroleum (BP)	Մեծ Բրիտանիա	30.1%
Azerbaijan's State Oil Company (SOCAR)	Ադրբեջան (պետական)	25%
Chevron	ԱՄՆ	8.9%
Statoil (այժմ՝ Equinor)	Նորվեգիա	8.7%
Turkish Petroleum (TPAO)	Թուրքիա (պետական)	6.5%
Eni	Իտալիա (պետական խոշոր մասնաբաժնով)	5%
Total	Ֆրանսիա	5%
Itochu	Ճապոնիա	3.4%
INPEX	Ճապոնիա (պետական փոքր մասնաբաժնով)	2.5%
Մնացյալը՝ տարբեր ընկերությունների պատկանող փոքր մասնաբաժիններ		

ԲԹՁ նավթամուղի ծրագրի ընդհանուր արժեքը շուրջ 4 մլրդ դոլար է: Ի լրումն մասնավոր ներդրումների, ծրագիրը ֆինանսավորվել է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից՝ ինչպես սեփական կապիտալով ներդրումների միջոցով, այնպես էլ՝ երաշխիքային և վարկային գործիքների կիրառմամբ: Այսպես, ծրագրի

Ֆինանսավորմանը մասնակցել են հետևյալ միջազգային ֆինանսական կազմակերպությունները.

Միջազգային ֆինանսական կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ
Համաշխարհային բանկի խումբ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC)	250 մլն դոլար
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	250 մլն դոլար
Միջազգային համագործակցության ճապոնական բանկ (JBIC)	300 մլն դոլար
ԱՄՆ (պետական) արտասահմանյան մասնավոր ներդրումային կորպորացիա (OPIC)	100 մլն դոլար
Արտահանման պետական վարկային գործակալություններ՝ Միջազգային համագործակցության ճապոնական բանկ (JBIC) Nippon Ճապոնիայի պետական արտահանման և ներդրումների ապահովագրություն (NEXI) ԱՄՆ արտահանման-ներմուծման բանկ (EXIM) Մեծ Բրիտանիայի արտահանման վարկերի երաշխիքների դեպարտամենտ (ECGD) Ֆրանսիայի արտաքին առևտրային ընկերություն (COFACE) Գերմանիայի պետական Euler Hermes վարկային ապահովագրություն (HERMES) Իտալիայի արտաքին առևտրի ապահովագրական ծառայություն (SACE)	766 մլն դոլար

• **Հարավային գազային միջանցք**

Հարավային գազային միջանցքը 41.5 մլրդ դոլար արժողությամբ մեզա-ծրագիր է, որն ապահովում է Կասպից ծովի հանքավայրից գազի մատակարարում մինչև Եվրոպա: Այն միավորում է հետևյալ 4 խոշոր ծրագրերը՝

- ✓ **Շահ Դենիզ բնական գազի հանքավայրը,**
- ✓ **Հարավկովկասյան գազատարը,**
- ✓ **Տրանս-անատոլիական գազատարը (TANAP),**
- ✓ **Տրանս-ադրիատիկ գազատարը (TAP):**

Շահ Դենիզ բնական գազի հանքավայր

Շահ Դենիզ բնական գազի հանքավայրը գտնվում է Կասպից ծովի խորքում՝ Բաքվից 70 կմ հեռավորության վրա: Այն աշխարհի ամենամեծ կոնդենսատային հանքավայրերից մեկն է և մինչ օրս «Բրիթիշ փեթրոլիումի» կատարած ամենախոշոր հայտնագործությունը: Հանքավայրը պատկանում է նույնանուն համատեղ սեփականությամբ ընկերությանը, որը գործընկերների անունից կառավարում է «Բրիթիշ փեթրոլիումը»: Շահ Դենիզի շահագործումը մեկնարկել է 2006թ.: Ծրագրի առաջին փուլով հանքավայրից արդյունահանվել է տարեկան 10 մլրդ մ³ գազ և 60 մլն բարել կոնդենսատ՝ Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի սպառման համար: Ծրագրի երկրորդ փուլի արդյունքում արդյունահանումը հասցվել է տարեկան 26 մլրդ մ³ գազի և օրական 165 մլն բարել կոնդենսատի: Երկրորդ փուլի ընդլայնման արդյունքում արդյունահանված գազից 6 մլրդ մ³ մատակարարվում է Թուրքիային, իսկ 10 մլրդ մ³ արտահանվում է Եվրոպա: 2018թ. հանքավայրը նշել է 100 մլրդ մ³ գազի արդյունահանումը:

Հանքավայրի **համասեփականատերերն են.**

Ընկերության անվանում	Ճագման երկիր	Մասնաբաժին
British Petroleum (BP)	Մեծ Բրիտանիա	29.99%
Lukoil	Ռուսաստան	19.99%
Turkish Petroleum (TPAO)	Թուրքիա (պետական)	19%
Southern Gas Corridor (SGC)	Ադրբեջան (պետական)	16.02%
National Iranian Oil Company (NICO)	Իրան (պետական)	10%
Hungary's State Electricity Company (MVM)	Հունգարիա (պետական)	5%

Շահ Դենիզ հանքավայրի ծրագրի ֆինանսավորմանը, բացի համասեփականատեր ընկերություններից, մասնակցել են նաև մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպություններ: «Շահ Դենիզ-փուլ 1» ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է: Տարբեր ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ ուղղակի վարկեր և երաշխիքներ, ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ հայտնի է հետևյալը.

Միջազգային ֆինանսական կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ
Վերականգնման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	Փուլ 1- 420 մլն դոլար Փուլ 2- 475 մլն դոլար
Ասիական զարգացման բանկ (ADB)	Փուլ 2- 475 մլն դոլար և 1 մլրդ դոլար
Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (BSTDB)	Փուլ 2- 62 մլն դոլար

Հարավկովկասյան գազատար (Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատար)

Հարավկովկասյան գազատարը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի երթուղով Բաքվի մոտ գտնվող Սանգաչալի տերմինալից Թբիլիսիով Էրզրումում միանում է թուրքական

գազատարին՝ դառնալով Հարավային գազային միջանցքի մաս և ապահովելով Կասպից ծովից կապ Թուրքիայի հետ: Գազատարի երկարությունը 691 կմ է, որից 443 կմ՝ Ադրբեջանում, 248 կմ՝ Վրաստանում: Խողովակի տրամագիծը 42 դյույմ է (~1 մետր): Խողովակաշարի օրական թողունակությունը շուրջ 68,5 մլն մ³ է (տարեկան՝ 25 մլրդ մ³): Գազատարը գործարկվել է 2006թ. վերջում:

Հարավկովկասյան գազատարի **համասեփականատերերն են.**

Ընկերության անվանում	Ծագման երկիր	Մասնաբաժին
British Petroleum (BP)	Մեծ Բրիտանիա	29.99%
Southern Gas Corridor (SGC)	Ադրբեջան (պետական)	21.02%
Lukoil	Ռուսաստան	19.99%
Turkish Petroleum (TPAO)	Թուրքիա (պետական)	19%
National Iranian Oil Company (NICO)	Իրան (պետական)	10%

Հարավկովկասյան գազատարի ֆինանսավորման վերաբերյալ տվյալները ամենասահմանափակն են: Հասկանալի է, որ այս ծրագիրը ևս չէր կարող ֆինանսավորվել առանց միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներդրումների, սակայն վստահելի աղբյուրներից տվյալներ գտնվել են միայն ՎՋԵԲ մասնակցության վերաբերյալ.

Միջազգային ֆինանսական կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	60 մլն դոլար
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	70 մլն դոլար

Տրանս-անատոլիական գազատար (TANAP)

Տրանս-անատոլիական գազատարը 1793 կմ երկարությամբ Հարավային գազային միջանցքի ամենաերկար կտորն է, որը, Թուրքիայի երկայնքով ձգվելով, միավորում է Հարավկովկասյան գազատարը թուրք-հունական սահմանի հետ: Խողովակաշարի տրամագիծը 48-56 դյույմ է: Գազատարի նախնական թողունակությունը տարեկան 16.2 մլրդ մ³ է՝ մինչև 31 մլրդ մ³ ընդլայնման հնարավորությամբ:

Տրանս-անատոլիական գազատարի **համասեփականատերերն են.**

Ընկերության անվանում	Ծագման երկիր	Մասնաբաժին
Southern Gas Corridor (SGC)	Ադրբեջան (պետական)	51%

Pipeline and Petroleum Transport Corporation (BOTAS)	Թուրքիա (պետական)	30%
British Petroleum (BP)	Մեծ Բրիտանիա	12%
Turkish Petroleum (TPAO)	Թուրքիա (պետական)	7%

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները ծրագրում մեծածավալ ներդրումներ են արել՝ ինչպես ուղղակի վարկերի, այնպես էլ՝ երաշխիքների տեսքով.

Միջազգային ֆինանսական կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	500 մլն եվրո
Համաշխարհային բանկի խումբ՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (IBRD)	800 մլն դոլար
Համաշխարհային բանկի խումբ՝ Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալություն (MIGA)	1.1 մլրդ դոլար
Ասիական ենթակառուցվածքային ներդրումների բանկ (AIIB)	600 մլն դոլար
Եվրոպական ներդրումային բանկ (EIB)	1.15 մլրդ դոլար

Տրանս-ադրիատիկ գազատար (TAP)

Հարավային միջանցքի վերջին կտորը Տրանս-ադրիատիկ գազատարն է, որը թուրք-հունական սահմանից շարունակվում է դեպի Եվրոպա: Գազատարն անցնում է Հունաստանի և Ալբանիայի տարածքով, այնուհետև, Ադրիատիկ ծովի միջոցով, հարավում միանում Իտալիային: Խողովակաշարի երկարությունը 878 կմ է: Նախնական տարեկան թողունակությունը կազմում է 10 մլրդ մ³, մինչև 20 մլրդ մ³ ընդլայնման հնարավորությամբ: Գազատարը ռազմավարական նշանակություն ունի, քանի որ ապահովում է Եվրոպայի հետ հիմնական կապը՝ որպես ռուսական ենթակառուցվածքի այլընտրանք:

Տրանս-ադրիատիկ գազատարի **համասեփականատերերն են.**

Ընկերության անվանում	Ծագման երկիր	Մասնաբաժին
Southern Gas Corridor (SGC)	Ադրբեջան (պետական)	20%
British Petroleum (BP)	Մեծ Բրիտանիա	20%
Snam	Իտալիա (պետական խոշոր մասնաբաժնով)	20%
Fluxys	Բելգիա (պետական խոշոր մասնաբաժնով)	20%
Enagás	Իսպանիա (պետական փոքր մասնաբաժնով)	20%

Ծրագիրը համաֆինանսավորել են հետևյալ միջազգային ֆինանսական կազմակերպությունները.

Միջազգային ֆինանսական կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	1 մլրդ եվրո
Արտահանման պետական վարկային գործակալություններ՝ Ֆրանսիայի ներդրումների և զարգացման բանկ (Bpifrance) Գերմանիայի պետական Euler Hermes վարկային ապահովագրություն (HERMES) Իտալիայի արտաքին առևտրի ապահովագրական ծառայություն (SACE)	1.43 մլրդ եվրո
Եվրոպական ներդրումային բանկ (EIB)	1.5 մլրդ եվրո
Գերմանիայի կառավարություն	1.2 մլրդ եվրո

• Եզրակացություն

Ադրբեջանի և Թուրքիայի մեկուսացման քաղաքականության և դրան հակակշռող սեփական նախաձեռնող քաղաքականության բացակայության արդյունքում Հայաստանը դուրս է մնացել բոլոր տարածաշրջանային ծրագրերից, ինչի հետևանքով չի կարողանում իրացնել իր տարանցիկ պոտենցիալը և ունի էներգակիրների ներկրման սահմանափակ աղբյուրներ:

Ներկայացված տեղեկատվությունից ակնհայտ է, որ Հայաստանը շրջանցող տարածաշրջանային ռազմավարական ենթակառուցվածքների կառուցումն ու գործարկումը հնարավոր է դարձել շահագրգիռ պետությունների անմիջական մասնակցությամբ, հաճախ՝ պետական մասնաբաժիններով: Հստակ է նաև, որ անկախ ծրագրերի կոմերցիոն նշանակությունից՝ դրանց ֆինանսավորումը հնարավոր է դարձել միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի և խոշոր երաշխիքային գործիքների կիրառման արդյունքում: Սա է պատճառը նաև, որ Իրանը, լինելով բնական գազի ռեսուրսներով երկրորդ ամենահարուստ պետությունն աշխարհում, չի կարողանում արդյունահանել այդ ռեսուրսները, քանի որ արևմտյան սանկցիաները խիստ սահմանափակում են Իրանում ներդրումների հնարավորությունը:

Ստորև՝ աղյուսակ 1-ում ներկայացվում է տարածաշրջանում ակտիվորեն ներգրավված միջազգային ֆինանսական ինստիտուտներում ձայնի ամենամեծ մասնաբաժինն ունեցող երկրների ցանկը, որոնք, ըստ էության, որոշիչ դեր են ունենում ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ կայացնելիս: **Ըստ այդմ, որպեսզի Հայաստանը կարողանա դադարեցնել իր մեկուսացումը տարածաշրջանային խոշոր ծրագրերից և դիրքավորի իրեն որպես վստահելի տարանցիկ գործընկեր, անհրաժեշտ է աշխատել հետևյալ պետությունների հետ՝ ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Հնդկաստան, Մեծ Բրիտանիա և Չինաստան:**

Անհրաժեշտ է նաև արձանագրել, որ վերոնշյալ մի շարք պետություններ տարբեր ձևաչափերով հրապարակային աջակցություն են հայտնել տարածաշրջանային

ինտեգրացիայի միջոցով Հարավային Կովկասում երկարաժամկետ կայուն խաղաղությանը միտված ջանքերին, ուստի անհրաժեշտ է կապիտալացնել առկա քաղաքական աջակցությունը՝ տարածաշրջանային ծրագրերը ներառական դարձնելու, այսինքն, բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ապահովելու միջոցով:

Երկիր	ՎԶՄԲ (ՀԲ խումբ)	ՄՖԿ (ՀԲ խումբ)	ԲՆԵԳ (ՀԲ խումբ)	ՎԶԵԲ	ԵՆԲ	ԱԶԲ	ԱԵՆԲ
ԱՄՆ	15.84%	17.6%	14.81%	10.08%	-	15.6%	-
Ճապոնիա	7.02%	7.3%	4.16%	8.59%	-	15.6%	-
Չինաստան	5.87%	2.8%	2.61%	-	-	6.4%	26.5%
Գերմանիա	4.18%	5.1%	4.14%	8.59%	16.11%	4.3%	-
Փրանսիա	3.83%	4.6%	3.98%	8.59%	16.11%	2.3%	-
Մեծ Բրիտանիա	3.83%	4.6%	3.98%	8.59%	-	-	-
Հնդկաստան	3.01%	3.9%	2.59%	-	-	6.3%	7.58%
Ռուսաստան	2.8%	3.2%	2.61%	4.03%	-	-	5.96%
Սաուդյան Արաբիա	2.7%	-	2.61%	-	-	-	2.43%
Իտալիա	2.6%	3.3%	-	8.59%	16.11%	-	-
Կանադա	-	3.3%	2.47%	3.4%	-	5.2%	-
Իսպանիա	-	-	-	3.4%	9.6%	-	-
ԵՄ	-	-	-	3.02%	-	-	-
ԵՆԲ	-	-	-	3.02%	-	-	-
Բելգիա	-	-	-	-	4.46%	-	-
Նիդերլանդներ	-	-	-	-	4.46%	-	-
Լեհաստան	-	-	-	-	3.9%	-	-
Շվեդիա	-	-	-	-	2.96%	-	-
Դանիա	-	-	-	-	2.26%	-	-
Ավստրիա	-	-	-	-	2.21%	-	-
Ավստրալիա	-	-	-	-	-	5.8%	3.44%
Ինդոնեզիա	-	-	-	-	-	5.4%	3.15%
Հվ. Կորեա	-	-	-	-	-	5%	3.48%
Ֆիլիպիններ	-	-	-	-	-	2.4%	-

Աղյուսակ 1. Միջազգային ֆինանսական ինստիտուտներում պետությունների մասնաբաժինները

Հայաստանի էներգետիկ ոլորտը

• Էներգիայի աղբյուրներն ու հիմնական սպառումը Հայաստանում

Համաձայն ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանի էներգակիրների կառուցվածքը հետևյալն է.

- Բնական գազ՝ 58.4%,
- Միջուկային՝ 18.3%,
- Նավթամթերք՝ 16.9%,
- Հիդրոէներգիա՝ 3.7%,
- Կենսազանգված՝ 2.8%,
- Էլեկտրաէներգիա՝ 2.5%,
- Հողմային, արևային ՖՎ և արևային ջերմային՝ 2.1%,
- Ածուխ՝ 0.4%:

ՀՀ ընդհանուր էներգետիկ ինքնաբավությունը 26.5% է:

Համաձայն Համաշխարհային բանկի «Երկրի կլիմայի և զարգացման զեկույցի» տվյալների՝ Հայաստանի՝ բնական գազից էներգետիկ մատակարարման կախվածությունը աշխարհի մակարդակով ամենամեծերից է: Նույն զեկույցի համաձայն՝ Հայաստանին անհրաժեշտ է 3 մլրդ դոլար ներդրումներ՝ բնական գազի վրա հիմնված տնտեսությունից արևային էներգիայով աշխատող տնտեսության տրանսֆորմացիան ապահովելու համար: Որպեսզի տնտեսությունը կարողանա կլանել նման ծավալի արևային էներգիա, անհրաժեշտ են նաև հավելյալ գույքահեռ ներդրումներ միջազգային ցանցերի փոխկապակցման, ներքին ցանցերի ամրապնդման և կուտակիչ կայանների ստեղծման ոլորտներում:

Միևնույն ժամանակ, համաձայն ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների, Հայաստանում էներգիայի ամենամեծ սպառումը տեղի է ունենում տնային տնտեսություններում՝ 35.6%: Երկրորդ ամենամեծ սպառող ոլորտը տրանսպորտն է՝ 31.6%: Տնային տնտեսություններում սպառվող էներգիայի հիմնական աղբյուրը բնական գազն է, իսկ տրանսպորտի ոլորտում՝ բնական գազն ու նավթամթերքը: Սա նշանակում է, որ այս ոլորտները բարեփոխելու նպատակով անհրաժեշտ են թիրախային միջոցառումներ, մասնավորապես, իրացնելով Հայաստանում էներգաարդյունավետության չօգտագործված պոտենցիալը և խրախուսելով կանաչ տրանսպորտը:

Համաձայն Համաշխարհային բանկի վերոնշյալ զեկույցի տվյալների՝ Հայաստանում էներգաարդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ են շուրջ **2.8 մլրդ** դոլար ներդրումներ, որոնք, ըստ պատշաճի և ժամանակին իրականացնելու պարագայում, մինչև 2040թ. կարող են ապահովել տաքացման և սառեցման համար օգտագործվող էներգիայի մինչև 36% խնայողություն: Եթե այս աշխատանքը համադրվի տրանսպորտի կանաչացման ռեֆորմներով, հնարավոր կլինի ներկրվող էներգակիրներ սպառող 2 ամենախոշոր ոլորտներում զգալիորեն նվազեցնել դրանց պահանջարկը:

- **Հայաստան-Ռուսաստան էներգետիկ համագործակցություն**

Հայաստանին բնական գազ են մատակարարում աշխարհի ամենախոշոր ռեզերվներն ունեցող 2 պետություն՝ **Ռուսաստանը (37.4 տրիլիոն մ³)** ու **Իրանը (32.1 տրիլիոն մ³)**: Այնուամենայնիվ, երկու երկրներից ներկրվող գազի ծավալներն անհամեմատելի են. Ռուսաստանից ներկրվում է շուրջ 2 մլրդ մ³ գազ, իսկ Իրանից՝ ընդամենը 370 մլն մ³, ինչը նշանակում է, որ Հայաստանում սպառվող գազի շուրջ 85%-ը ներմուծվում է Ռուսաստանից: Միևնույն ժամանակ, Հայաստանը Ռուսաստանից է ներմուծում վառելիքի շուրջ 75%-ը:



Լուսանկարը՝ Armenian Energy Agency-ի

Ռուսական գազը Հայաստան է հասնում Վրաստանի միջով անցնող Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս (Մոզդոկ-Թբիլիսի-Երևան) 612 կմ երկարությամբ և 1220 մմ տրամագծով գազատարի միջոցով: Տարանջման համար Ռուսաստանը Վրաստանին մատակարարում է տեղափոխված գազի 10%-ը: Գազատարն ի սկզբանե կառուցվել և ֆինանսավորվել է Սովետական միության կողմից՝ 1984- 1994 թվականներին: Այժմ գազատարի վրացական 234 կմ երկարությամբ հատվածը պատկանում է Վրաստանի նավթի և գազի կորպորացիային, իսկ հայկական 212.5 կմ հատվածը՝ «Գազպրոմ Արմենիային»: «Գազպրոմին» են պատկանում նաև Հայաստանի գազափոխադրման և գազաբաշխման համակարգերը, գազի ստորգետնյա պահեստավորման օբյեկտները և գազի համալիրի ենթակառուցվածքի այլ օբյեկտներ, որոնք հայկական կողմը մաս-մաս վերջինիս է փոխանցել 1998թ. ի վեր: Սկզբում ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել, որով սեփական ռազմավարական գազափոխադրման ենթակառուցվածքներում դարձել է մինորիտար բաժնետեր՝ պահպանելով դրանց սեփականատեր «ՀայՌուսԳազԱրդ» ընկերությունում բաժնեմասերի 45%-ը և ռուսական «Գազպրոմ» ու «Ինտերա» ընկերություններին փոխանցելով, համապատասխանաբար, 45% և

10% բաժնեմասերը: Այնուհետև, 2006-2009թթ. «Գազպրոմը» գնել է «ՀայՌուսԳազԱրդ»-ի լրացուցիչ թողարկված բաժնետոմսերն ու «Ինտերա»-ի բաժնեմասը՝ դառնալով ընկերության 80% բաժնետեր: Իսկ 2013թ. Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների միջև ստորագրված պայմանագրով «Գազպրոմ»-ին է փոխանցվել «ՀայՌուսԳազԱրդ»-ի՝ հայկական կողմին պատկանող վերջին 20% բաժնեմասը: Այս համաձայնագրով հայկական կողմը պարտավորվել է նաև մինչև 2043թ. ավարտը չվճարել և չփոփոխել «Գազպրոմ»-ի 100% բաժնեմասով «ՀայՌուսԳազԱրդ»-ին տրված իրավունքներն ու շահերը, մասնավորապես, ՀՀ տարածք գազի առաքման, ՀՀ տարածքով գազի փոխադրման, ՀՀ տարածքում գազի ստորգետնյա պահեստավորման, գազի բաշխման և իրացման, գազափոխադրման և հարակից ենթակառուցվածքների սպասարկման բացառիկ իրավունքները: Ավելին, Հայաստանի էներգետիկ համակարգում ռուսական ներկայությունն այդքանով չի սահմանափակվում: Ռուսական կողմին է պատկանում նաև Հրազդանի ջերմաէլեկտրակայանը, որը 2002թ. կնքված «Գույք պարտքի դիմաց» համաձայնագրով Հայաստանի կողմից ռուսական կողմին փոխանցված 5 ռազմավարական օբյեկտներից մեկն է: Համաձայնագրով ռուսական կողմին նաև բացառիկ իրավունք տրվեց գնել Հրազդանի ջէկի 5-րդ էներգաբլոկը: Այս իրավունքը «ՀայՌուսԳազԱրդ»-ն իրացրեց 2006թ.:

Ի լրումն, Հայաստանի միակ ատոմակայանը՝ Մեծամորի ԱԷԿ-ը, որն արտադրում է Հայաստանի էլեկտրաէներգիայի շուրջ 31%-ը, ևս կախվածություն ունի Ռուսաստանից, քանի որ ռուսական «Ռոսատոմ»-ը մատակարարում է ատոմակայանի ողջ միջուկային վառելիքը և տարիներ շարունակ միակ գործընկերն է ատոմակայանի պահպանման և արդիականացման աշխատանքներում:

• Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցություն

Իրանից Հայաստան գազը ներկրվում է Իրան-Հայաստան գազատարի միջոցով, որի շուրջ կողմերը համաձայնություն են ձեռք բերել 2004թ.: Խողովակաշարի առաջին՝ 141 կմ երկարությամբ հատվածը ձգվում է Թավրիզից մինչև Քաջարան: Այս խողովակաշարի՝ Մեղրիից Քաջարան ձգվող 41 կմ-անոց հատվածի կառուցումն իրականացվել է Իրանի կողմից տրամադրված 30 մլն դոլար արժողությամբ վարկային ծրագրով, իսկ շահագործումը սկսվել է 2007թ.: Երկրորդ հատվածը՝ 197.4 կմ երկարությամբ, ֆինանսավորվել և կառուցվել է «Գազպրոմ Արմենիայի» կողմից և շահագործման դրվել 2008թ.: Իրան-Հայաստան գազատարի միջոցով ներկրվող գազը «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» փոխանակման ծրագրով օգտագործվում է Երևանի ջէկի կողմից էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով: Ըստ պայմանագրի՝ յուրաքանչյուր 1 մ³ գազի դիմաց Հայաստանը Իրան է մատակարարում 3 կՎտ էլեկտրաէներգիա:

Ի սկզբանե նախատեսվել է, որ Իրան-Հայաստան գազատարի ծրագիրը Հայաստանի համար լինելու է էներգետիկ համագործակցությունը դիվերսիֆիկացնելու այլընտրանք և ապահովելու է Հայաստանի, որպես տարանցիկ երկրի, դերը դեպի Վրաստան և Եվրոպա կապն ապահովելու միջոցով: Այնուամենայնիվ, ռուսական կողմի ներգրավվածությամբ ծրագիրը փոփոխվել է, ինչի արդյունքում խողովակաշարի տրամագիծը նախատեսված 1200 մմ-ից դարձել է 700 մմ՝ զգալիորեն նվազեցնելով ենթակառուցվածքի հնարավոր թողունակությունը (տարեկան մինչև 2 մլրդ մ³): Ավելին, Իրան-Հայաստան գազատարի 40 կմ-անոց հատվածը ևս պատկանում է

«Գազպրոմ Արմենիային», որը 2007թ.՝ նախնական, իսկ 2015թ.՝ վերջնականապես, փոխանցվել է կուտակված պարտքի դիմաց և Ռուսաստանի հետ գազի գնի բանակցությունների շրջանակում:

2022թ. Իրանն ու Հայաստանը հայտարարեցին, որ ցանկանում են կրկնապատկել Իրանից ներկրվող գազի ծավալները, այնուամենայնիվ, մինչ օրս այս հայտարարությունը համաձայնագրի չի վերածվել: Հատկանշական է, որ տարբեր փորձագետների գնահատմամբ՝ Իրան-Հայաստան գազատարի մաշվածությունը թույլ չի տալիս էականորեն ավելացնել ներմուծվող գազի ծավալները՝ չնայած, որ, ֆորմալ առումով, ենթակառուցվածքի թողունակությունը թույլ է տալիս ավելի քան քառապատկել առկա ծավալները:

• **Տարածաշրջանային նշանակության ընթացիկ ծրագրեր**

Էներգետիկ անվտանգության և հուսալիության բարձրացման տեսանկյունից առանցքային կարևորություն ունի Էլեկտրաէներգիայի միջսահմանային առևտուրը, ինչը հնարավոր է միայն հարևան երկրների Էլեկտրաէներգետիկ համակարգերի սինքրոնացման պարագայում: Մինչ Հայաստանի և բաց սահմաններով իր երկու հարևաններից մեկի՝ Իրանի հետ համակարգերն աշխատում են սինքրոն, Վրաստանի հետ համակարգերի սինքրոնացման համար անհրաժեշտ է ստեղծել նոր Էլեկտրահաղորդման ցանց: Դեռևս 2014թ. Գերմանական KfW բանկի ֆինանսավորմամբ և Եվրոպական ներդրումային բանկի համաֆինանսավորմամբ ստորագրված «Կովկասյան Էլեկտրահաղորդման ցանց I-III» վարկային ծրագիրը հենց այս նպատակն է հետապնդում: Այնուամենայնիվ, ծրագրի իրականացման գործընթացում առաջացած տարատեսակ բարդությունների պատճառով մինչ օրս ծրագրի շինարարության փուլը չի մեկնարկել: Այժմ նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են հավելյալ ֆինանսական միջոցներ: Ծրագիրն առանցքային կարևորություն ունի Հայաստանի էներգետիկ կապակցվածության տեսանկյունից և իրականացման արդյունքում կապահովի Հայաստանի, Վրաստանի և Իրանի էներգետիկ համակարգերի սինքրոնացում:

Միևնույն ժամանակ, Հարավային Կովկասը Եվրոպային կապող նոր էներգետիկ ենթակառուցվածքների ստեղծման պարագայում հնարավոր կլինի նաև Էլեկտրաէներգիայի առևտուր անել Եվրոպական միության հետ: Այս առումով, սակայն, անհրաժեշտ է ապահովել, որ Հայաստանը ընթացիկ տարածաշրջանային քննարկումներից դուրս չմնա: Մասնավորապես, խոսքը գնում է Սև ծովի հատակով Հվ. Կովկասը Եվրոպային կապող Էլեկտրական մալուխի ծրագրի մասին, որի իրականացման նպատակով 2022թ. դեկտեմբերին Վրաստանի, Ադրբեջանի, Ռումինիայի և Հունգարիայի ղեկավարները Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն Դեր Լայենի ներկայությամբ փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին: Հայաստանը, չնայած ծրագրի նախնական փուլերում իր ներգրավվածությանը, հուշագրի կողմ չդարձավ: Թեպետ, փորձագետների գնահատմամբ, այս բարդ ծրագրի իրականացման նախապատրաստական փուլը ժամանակ կպահանջի, անհրաժեշտ է արձանագրել, որ ծրագրի իրականացման վերաբերյալ քաղաքական պայմանավորվածություններն, այսինքն, ենթակառուցվածքի թողունակությանը, սեփականության մոդելին ու այլ կարևոր հարցերին առնչվող պայմանավորվածությունները, ձեռք են բերվում ընթացիկ քննարկումների արդյունքում, ուստի անհրաժեշտ է Հայաստանի ներգրավվածությունն այս քննարկումներին ապահովել հնարավորինս արագ: Այս առումով հարկավոր է նաև նշել, որ ենթակառուցվածքի ստեղծման

նպատակով հուշագրի կողմերը 2024թ. սեպտեմբերին համատեղ սեփականությամբ ընկերություն են հիմնել:

- **Եզրակացություն**

Էներգակիրների՝ մեկ աղբյուրից ներմուծման հիմնարար կախվածությունը, համադրած Հայաստանի ռազմավարական էներգետիկ ենթակառուցվածքներում ռուսական «Գազպրոմ» ընկերության արմատացած ներկայության հետ, լուրջ մարտահրավեր է Հայաստանի էներգետիկ անվտանգության և տնտեսական սուլվերենության տեսանկյունից և, ընդհանուր առմամբ, խիստ սահմանափակում է Հայաստանի՝ աշխարհաքաղաքական գործընթացներում մանևրելու կարողությունը:

Ակնհայտ է, որ Հայաստանը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ ներմուծվող էներգակիրների պահանջարկը նվազեցնելու, բնական գազի վրա հիմնված տնտեսությունից արևային էներգիայով տնտեսության անցումն ապահովելու, ինչպես նաև էներգետիկ ենթակառուցվածքներում ռուսական ներկայությանը այլընտրանքներ ստեղծելու ուղղություններով:

Այս առումով հարկավոր է ուշադրության կենտրոնում պահել ներկրվող էներգակիրների սպառման հիմնական ոլորտները՝ տնային տնտեսություններն ու տրանսպորտը, որտեղ թիրախային էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման և տրանսպորտի կանաչացման հաշվին հնարավոր է հասնել ներկրվող էներգակիրների սպառման պահանջարկի զգալի նվազեցման:

Ներկայացված տեղեկատվությունից բխում է նաև, որ Հայաստանը տապալել է Իրանի հետ համագործակցության միջոցով Ռուսաստանին ռազմավարական այլընտրանք ստեղծելու ծրագիրը՝ սկզբում համաձայնելով սահմանափակել խողովակաշարի թողունակությունը, այնուհետև՝ այն ամբողջությամբ հանձնելով «Գազպրոմ Արմենիային»: Ստեղծված իրավիճակում հատկապես Հայաստանը պետք է ձեռնարկի բոլոր միջոցներն արտաքին աշխարհի հետ էներգետիկ կապակցվածությունն ընդլայնելու ուղղությամբ:

Այս համատեքստում, անհրաժեշտ է շարունակել ինտենսիվ աշխատել Իրանի հետ՝ ընդլայնելու համագործակցությունն ու առավելագույնս օգտագործելու գործող ենթակառուցվածքի հնարավորությունները: Հարկավոր է նաև ապահովել Վրաստանի հետ էլեկտրահաղորդման ցանցի ստեղծման ծրագրի անխոչընդոտ իրականացումը և միջոցներ ձեռնարկել՝ Հայաստանը ներառելու Սև ծովի հատակով անցնող էլեկտրական մալուխի ծրագրի քննարկումներում:

- **Ամփոփում և առաջարկություններ**

1. Անհրաժեշտ է աշխատել միջազգային ֆինանսական կազմակերպություններում խոշոր ձայնի իրավունք ունեցող պետությունների հետ՝ դադարեցնելու Հայաստանի մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից: Ընթացիկ գործընթացներում հատկապես կարևոր են Սև ծովի հատակով էներգետիկ մալուխի ծրագրի վերաբերյալ քննարկումները, որոնք ակտիվորեն ընթանում են առանց Հայաստանի մասնակցության:

- 1.1. Ֆինանսների նախարարի կողմից, որպես բոլոր միջազգային ֆինանսական ինստիտուտներում Հայաստանի կառավարչի, հանձնարարել Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեններին և Հայաստանի քվոտայով նշանակված նրանց խորհրդականներին՝ հարցը պահել ուշադրության կենտրոնում և Հայաստանի կարիքներն ըստ պատշանի ներկայացնել ՄՖԿ-ներում խոշոր մասնաբաժին ունեցող երկրների գործադիր տնօրեններին՝ տարածաշրջանային ծրագրերից Հայաստանի մեկուսացումը դադարեցնելու նպատակով:
 - 1.2. Ֆինանսների նախարարի կողմից՝ հարցը ներկայացնել Հայաստանում ՄՖԿ-ների ղեկավարներին՝ ակնկալելով վերջիններիս աջակցությունը:
 - 1.3. Արտաքին գործերի նախարարի և ֆինանսների նախարարի կողմից՝ համատեղ նամակներով դիմել ՄՖԿ-ներում խոշոր մասնաբաժին ունեցող երկրների իրենց գործընկերներին՝ բացատրելով խնդիրն ու աջակցություն խնդրելով նոր ծրագրերում Հայաստանի մասնակցությունն ապահովելու վերաբերյալ:
 - 1.4. ՄՖԿ-ներում խոշոր մասնաբաժին ունեցող երկրներում Հայաստանի դեսպաններին և Հայաստանում այդ երկրների դեսպաններին տեղեկացնել խնդրի վերաբերյալ, որպեսզի յուրաքանչյուրն իր մանդատի շրջանակում աշխատի խնդրի լուծման շուրջ:
 - 1.5. Հարցը ներառել բարձրաստիճան երկկողմ հանդիպումների օրակարգերում. Հայաստանին խոստացված յուրաքանչյուր քաղաքական աջակցություն պետք է նյութականացվի այս ծրագրերում Հայաստանի մասնակցությամբ:
 - 1.6. Հայաստանը ներառել մասնագիտացված լոբբիստական խմբերի ՄՖԿ-ներում՝ խոշոր մասնաբաժին ունեցող երկրներում տարբեր ներգրավված մարմինների հետ:
-
2. Անհրաժեշտ է ապահովել Վրաստանի հետ փոխակերպիչ կայանի՝ Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի ծրագրի իրականացման սահուն ընթացքը, որը կարևոր օղակ է Հայաստանի արտաքին էներգետիկ կապակցվածությունն ապահովելու տեսանկյունից և, նաև, ռազմավարական նշանակություն ունի Եվրոպայի հետ այլ ծրագրեր (օրինակ, Սև ծովի հատակով էներգետիկ մալուխի ծրագիրը) քննարկելու բանակցություններում:
 - 2.1. Հանձնարարել ֆինանսների նախարարությանն ու ՏԿԵՆ-ին՝ ուսումնասիրել ծրագրով հետաքրքրված միջազգային ֆինանսական կազմակերպությունների առաջարկները և ընտրել գործընկեր՝ ծրագրի ֆինանսավորման պակասորդն ապահովելու համար:
 - 2.2. Ծրագրի կառավարման խորհրդին հանձնարարել ծրագրի իրականացման ընթացքում առաջացող խնդիրները քննել օպերատիվ և ճկուն՝ առանց այդ էլ շուրջ մեկ տասնամյակ ձգձգվող ծրագրի իրականացման արագ լուծումներ գտնելու համար:
-
3. Անհրաժեշտ է ինտենսիվացնել քննարկումներն Իրանի հետ՝ վերջինիս էներգետիկ սահմանափակումներն, այդ թվում՝ ռեսուրսների՝ ըստ տարածաշրջանի բաշխվածությունն ու ներքին ենթակառուցվածքային կապակցվածությունը խորապես հասկանալու համար: Անհրաժեշտ է շարունակել 2022թ. հայտարարված համաձայնության վերաբերյալ աշխատանքները՝ ապահովելու Իրանից (հնարավորության դեպքում՝ նաև Իրանի միջոցով Կասպյան ավազանի մյուս երկրներից) ներմուծվող գազի ծավալների ան:

- 3.1. Իրանին առաջարկել սկսել առանձին ֆորմատով էներգետիկ երկխոսություն՝ ապահովելու 2022թ. հայտարարված գազի ներկրվող ծավալների ընդլայնումը:
- 3.2. Իրանի հետ շոշափել Իրան-Ռուսաստան էներգետիկ համագործակցության վերջին զարգացումները, մասնավորապես, տեղեկատվություն ստանալով 2024թ. հունվարին Ռուսաստանի և Իրանի միջև ռազմավարական համագործակցության համաձայնագրի ստորագրմանը հաջորդող էներգետիկ համագործակցության խորացման ուղղությամբ ակտիվ քննարկումների ընթացքի վերաբերյալ:
- 3.3. Իրանի հետ շոշափել Կասպյան ավազանի երկրների շրջանում էներգետիկ նոր ծրագրերի իրականացման ուղղությամբ ընթացող քննարկումները՝ հասկանալու Իրանի միջոցով այլ երկրներից (օրինակ, Թուրքմենստան) բնական գազի ներմուծման հնարավորությունները:

4. Անհրաժեշտ է էներգետիկ ոլորտում բոլոր նոր ծրագրերն իրականացնել այլընտրանքային ռեսուրսների ներգրավմամբ՝ ըստ անհրաժեշտության դրա համար վճարելով տնտեսական գին: Այս առումով հատկապես կարևոր է շարունակել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և այլ պոտենցիալ գործընկերների հետ նոր ատոմակայանի կառուցման ծրագրի շուրջ քննարկումները, ինչպես նաև մշակել Մեծամորի ԱԷԿ-ի վառելիքի մատակարարման այլընտրանքային ճգնաժամային պլան:

- 4.1. Ուսումնասիրել նոր ատոմակայանի կառուցման բոլոր առաջարկվող տարբերակներն ու վերջնական ընտրություն կատարել՝ հաշվի առնելով, որ ատոմակայանի կառուցումը ժամանակատար գործընթաց է, իսկ Մեծամորի ԱԷԿ-ի շահագործման ժամկետն այլևս երկարաձգման ենթակա չէ:
- 4.2. Հաշվի առնելով ուկրաինական փորձը՝ ԵՄ տեխնիկական աջակցությամբ ապահովել Մեծամորի ԱԷԿ-ի միջուկային վառելիքին այլընտրանքի տրամադրման համար անհրաժեշտ գործողություններ՝ ըստ անհրաժեշտության արագ թույլտվություն ստանալու նպատակով: Գործընկերների հետ հստակեցնել այլընտրանքային վառելիքի արժեքը, տրամադրման անհրաժեշտ ժամկետը և փոխադրման ընթացակարգերը:

5. Անհրաժեշտ է նվազեցնել ներկրվող էներգակիրների պահանջարկը՝ օպտիմալացնելով դրանց հիմնական սպառման ոլորտներում էներգիայի ծախսը: Մասնավորապես, հարկավոր է իրացնել էներգաարդյունավետության չօգտագործված պոտենցիալը և խրախուսել կանաչ տրանսպորտը:

- 5.1. Ոլորտում ներգրավված միջազգային գործընկերների հետ մշակել Հայաստանում էներգաարդյունավետության բարձրացման գործողությունների ծրագիր՝ ներառելով միջոցառումների արժեքը, ժամկետը և ֆինանսավորման աղբյուրները:
- 5.2. Մոբիլիզացնել ոլորտում գործող մասնավոր կազմակերպություններին, լսել վերջիններիս առաջարկներն ու նրանց ներգրավել էներգաարդյունավետության բարձրացման ռազմավարական միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքներում:
- 5.3. Ծարունակել մշակել և իրականացնել էլեկտրական մեքենաների օգտագործումը խրախուսող ծրագրեր Հայաստանում, այս նպատակով ապահովել դրանց օգտագործման համար անհրաժեշտ՝ այլընտրանքային էներգիայով աշխատող ենթակառուցվածքների ստեղծումը:
- 5.4. Ծարունակել հանրային տրանսպորտի բարեփոխումները՝ կենտրոնացնելով ջանքերը կանաչ տրանսպորտի զարգացման ուղղությամբ:

• Օգտագործված գրականություն

1. 2024-ին Հայաստանի համար ռուսական գազի գնի փոփոխության նախադրյալներ չկան. փոխնախարար <https://arm.sputniknews.ru/20231108/2024-in-hajastani-hamar-rusakan-gazi-gni-pvopvokhutjan-nakhadrjalner-chkan-pvokhnakharar-68376199.html>
2. Բացվեց Իրան-Հայաստան գազամուղը <https://armenia-am.gazprom.com/press/about-company/2007/03/70/>
3. Չեկույց ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026թթ.) 2023թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին <https://www.gov.am/files/docs/5659.pdf>
4. Իրան-Հայաստան գազատարի Մեդրի-Քաջարան հատվածը վաճառվում է «Գազպրոմ Արմենիա»-ին <https://www.azatutyun.am/a/27051397.html>
5. Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշիռ 2023 <https://armstat.am/file/doc/99555508.pdf>
6. Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև «Հայռուսգազարդ» ՓԲԸ բաժնետոմսերի առքուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2013/11_1/MAR1349.pdf
7. ՀՀ կառավարության որոշում ՀՀ գազատրանսպորտային համակարգի հիմնական միջոցները «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին հանձնելու մասին. 30.04.1998թ. <https://www.irtek.am/views/act.aspx?aid=4391>
8. ՀՀ կառավարության որոշում պետական գույքի օտարման և բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների մասին <https://www.arlis.am/hy/acts/43472>
9. Սկսվել է գազ էլեկտրաէներգիայի դիմաց ծրագիրը <http://www.minenergy.am/article/138>
10. Վարկեր և դրամաշնորհներ <https://www.hven.am/hy/cragrer/varker-ev-dramasnorhner>
11. ADB Supports \$1 Billion Financing to Expand Azerbaijan Gas Field <https://www.adb.org/news/adb-supports-1-billion-financing-expand-azerbaijan-gas-field>
12. Azerbaijan, Georgia, Hungary, Romania establish firm for Black Sea interconnector <https://balkangreenenergynews.com/azerbaijan-georgia-hungary-romania-establish-firm-for-black-sea-interconnector/>
13. Armenia, Iran sign \$30-mln credit agreement for pipeline construction https://www.armenianclub.com/2004/09/10/armenia-iran-sign-30-mln-credit-agreement-for-pipeline-construction/?utm_source=chatgpt.com
14. BTC Pipeline Project <https://www.ijglobal.com/articles/20943/btc-pipeline-project>
15. Caring for the Local Landscape <https://www.tap-ag.com/#>
16. Country Climate and Development report: Armenia 2024 <https://documents1.worldbank.org/curated/en/099110524115029619/pdf/P18076418d641b0e91954b113281d9a1165.pdf>
17. Decision on how the European Investment Bank (EIB) took into account the environmental impact of the Trans Adriatic Pipeline and the Trans-Anatolian Pipeline before financing the projects (case 2030/2020/NH) <https://www.ombudsman.europa.eu/lt/decision/en/155352>

18. EBRD Board of Directors <https://www.ebrd.com/home/who-we-are/our-organisation/ebrd-governance-leadership/ebrd-board-of-directors.html>
19. EIB backs EUR 6.5 billion energy, SME, transport and urban investment <https://www.eib.org/en/press/all/2018-030-eib-backs-eur-6-5-billion-energy-sme-transport-and-urban-investment.htm>
20. European Bank ebrd.com
21. Germany provides €1.2 billion loan for Southern Gas Corridor <https://www.euractiv.com/section/global-europe/news/germany-provides-e1-2-billion-loan-for-southern-gas-corridor/>
22. IBRD Number of Votes by Country <https://financesone.worldbank.org/ibrd-number-of-votes-by-country/DS01469>
23. IFC Top 10 Countries by Voting Power <https://financesone.worldbank.org/ifc-top-10-countries-by-voting-power/DS01675>
24. Iran and Armenia agree to double gas trade <https://eurasianet.org/iran-and-armenia-agree-to-double-gas-trade>
25. Iran Oil Minister arrives in Russia for economic talks <https://en.mehrnews.com/news/230983/Iran-Oil-Minister-arrives-in-Russia-for-energy-talks>
26. Lukoil Overseas Shah Deniz: Shah Deniz Stage II Gas Field Expansion Project (Azerbaijan) <https://www.adb.org/sites/default/files/project-documents/48330/48330-001-xarr-en.pdf>
27. Members and Prospective Members of the Bank <https://www.aiib.org/en/about-aiib/governance/members-of-bank/index.html>
28. MIGA Issues \$1.1b in Guarantees to Support Natural Gas Pipeline from Azerbaijan to Europe <https://www.miga.org/press-release/miga-issues-11b-guarantees-support-natural-gas-pipeline-azerbaijan-europe>
29. MIGA Top 10 Countries by Voting Power <https://financesone.worldbank.org/miga-top-10-countries-by-voting-power/DS01673>
30. Natural Gas https://www.gogc.ge/en/page/activities-fields/natural-gas/6?utm_source=chatgpt.com
31. Shah Deniz https://www.bp.com/en_az/azerbaijan/home/who-we-are/operationsprojects/shahdeniz.html
32. South Caucasus Pipeline https://www.bp.com/en_az/azerbaijan/home/who-we-are/operationsprojects/pipelines/scp.html
33. Southern Gaz Corridor <https://www.sgc.az/en>
34. Statement by President von der Leyen at the signing ceremony of the Memorandum of Understanding for the development of https://enlargement.ec.europa.eu/news/statement-president-von-der-leyen-signing-ceremony-memorandum-understanding-development-black-sea-2022-12-17_en
35. The Trans-Anatolian Natural Gas Pipeline <https://www.tanap.com/en/>
36. Trans Adriatic Pipeline (TAP) completes successful EUR 3.9 billion project financing <https://www.eib.org/en/press/all/2019-004-trans-adriatic-pipeline-tap-completes-successful-eur-3-9-billion-project-financing>

37. Trans-Anatolian Natural Gas Pipeline Project (TANAP) <https://www.worldbank.org/en/news/loans-credits/2016/12/20/trans-anatolian-natural-gas-pipeline-project-tanap>
38. Visualizing Natural Gas Reserves By Country <https://www.visualcapitalist.com/cp/visualizing-natural-gas-reserves-by-country/>
39. World Bank Group Helps Boost Investment and Agribusiness in Azerbaijan <https://www.ifc.org/en/pressroom/2019/world-bank-group-helps-boost-investment-and-agribusiness-in-azerbaijan>
40. Газопровод Северный Кавказ – Закавказье <https://energybase.ru/pipeline/severnyy-kavkaz-zakavkazye>

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

© Բոլոր նյութերը պաշտպանվում են հեղինակային և հարակից իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Արգելվում է տեքստի կամ պատկերների վերադրույթներ, տարածումը, նկարագրությունը, հարմարեցումը և այլ ձևերով վերափոխումը, ինչպես նաև այլ եղանակներով օգտագործումը, եթե մինչ այդ ձեռք չի բերվել «Անխտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության թույլտվությունը:

**«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ
«Research Center On Security Policy» NGO**

**ԵՐԵՎԱՆ
2025**